



5555

5555

5555









ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆՔ

ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱԽԹԻ

100-111-112

~

111

22
P-97

Գիրք հարս շք Կրկնակ
5555

ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆՔ USDA-ԳԱՍԾ Է 1961 Ա.

ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱԻԹԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Հ. ՔԵՐՈՎԲԷ Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

Ի ՄԻԹԱՐԵԱՆ ՈՒԹՏԷՆ



30563



ՎԵՆԵՏԻԿ — Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1905

A $\frac{\bar{11}}{5493}$

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ¹

Դաւիթ մարգարէին Սաղմոսաց գիրքը, երեք հազար տարիներու միջոց, բիւրաւոր և միլիոնաւոր օրինակներ, նախ ձեռագիր՝ և ապա տպուած, տարածուած է միլիոնաւոր ժողովրդոց ձեռք. գրեթէ ամէն ծանօթ լեզուներով թարգմանուած է. ինչպէս հին՝ հրէական եկեղեցւոյ մէջ, նոյնպէս ևս քրիստոնեայ եկեղեցեաց մէջ, չեն կատարուիլ ոչ մի պաշտամունք առանց Սաղմոսաց. ժամերգութեան մէջ, Ս. Պատարագի միջոց, մկրտութեան, պսակի, նոյն և մեռելաթաղի ատեն, մերթ շէն և զուարթ, երբեմն տրտում և տխուր եղանակաւ կը լսուի Ս. Մարգարէին ձայնը: Չգիտեմ կա՞յ արդեօք աշխարհիս վերայ, դպրութեան տեղեակ մէկը, որ չգիտնայ Տ սաղմոսը, և իւր ծածուկ մեղաց համար, ծածկագիտին առաջ չգղջայ իւր մեղքերը: Սրբազան

1. Հ. Ք. Քուշներեան Բազմավիպի մէջ այլևայլ անգամ հրատարակած էր իր քաղցր ոճով աշխարհաբար տաղաչափած Դաւթի Սաղմոսներու այլևայլ կտորները: Մենք իւր աշխատասիրութեան ամբողջ ձեռագիրը ի ձեռին ունենալով օգտակար համարեցանք նոյնութեամբ հրատարակել զանոնք, և իբր յառաջաբան զետեղել հոս՝ հանգուցեալ Մըխիթարեան Առակախօս Վարդապետի 1889ի Բազմավիպի մէջ ի լոյս ընծայած սոյն հմտալից խորհրդածոռքիւն սաղմոսաց յօդուածը:

հայրապետներ, ճգնազգեաց արեղայներ, զղջացեալ մեղաւորներ, հարուստ, աղքատ, արք և կանայք կը կարդան հոգեշունչ Սաղմոսները, և կը գտնան նոցա մէջ իրենց սրտին սփոփանք. կան այնպիսիք մեր ազգին մէջ, նոյն իսկ կանայք, որ իբր պարտք օրուան մէջ մի գոբղայ Սաղմոս կու քաղեն: Երեք հազար տարի անցնելէն վերջ, միլիոնաւոր զարգացեալ ժողովրդոց մէջէն չէ ելած կամ հրատարակուած մի այլ աղօթամատոյց գիրք, որ կարենայ Մարգարէին Սաղմոսաց տեղը բռնել: Ի՞նչ կը զրուցեմ այլ աղօթամատոյց, ամէն աղօթագրքի մէջ դարձեալ Դաւթի Սաղմոսքը կը գտնեմք զանազան ձևերով գրուած: Ի՞նչ է արդեօք դորա պատճառը:

Գերմանացի Հաննէբերգ վարդապետը կը զրուցէ. « Այնպիսի երգեր՝ որոնք Աստուծոյ գոյութիւնը մարդուս սրտին կ'ազդեն, միայն եբրայական Սաղմոսք մեզ կ'աւանդեն »: Ամենայն մարդ, շատ անգամ առանց իւր գիտակցութեան՝ կը դիմէ, և պէտք է դիմէ, առ իւր սկիզբն և վերջն, առ ստեղծողն, որ է Աստուած: Եւ ահա՛ առ այն կ'առաջնորդեն մեզ Ս. Մարգարէին Սաղմոսները: Առ Աստուած դիմելու համար մարդու միջոց, միտք, իմաստ ու բացատրութիւնք հարկաւոր են, և այդ ամէնը կը գտնանք Սաղմոսաց մէջ: Այդ մտքերը պէտք է լինին մեր կարողութեան իմանալի և պարզ: Ամենապարզ և համարձակ լեզուով կը խօսի Մարգարէն իւր ստեղծողին հետ՝ Սաղմոսաց մէջ. և Ս. Եկեղեցին մեզ կը սորվեցնէ որ այդ 150 Սաղմոսք, ամէնքն ևս աստուածային ազդեցութեամբ գրուած են:

Սակայն այս կարևոր է գիտնալ, թէպէտ և Դաւիթ մարգարէն պարզ լեզուով գրած է իւր Սաղմոսները. այլ որովհետև կանոնաւոր կերպով երգե-

լու և նուազելու համար գրած է՝ այդ հոգեշունչ քանաստեղծութիւնքը, այն պատճառաւ չափեալ տողերու տրոհած է: « Չորք հազարք օրհնիչք Տեառն, նուազարանօքն՝ որովք արարին օրհնել զՏէր »: (Ա. Մնաց. ԻԳ. 5): Կարելի չէ՝ որ չափեալ տողերը կամ ոտանաւոր գրուածք նոյն կարգը ունենան քան որոշարադրութեան մէջ, ինչ կարգաւ որ կը վարենք պարզ արձակ գրութեան միջոց. Սաղմոսաց մէջ այդ բանը յայտնի կ'երևայ, բառերու ետևառաջութիւն, բացատրութեանց անսովոր ձևեր, որք յայտնի նշան են ոտանաւոր գրութեան: Առ հասարակ թարգմանիչք բառ առ բառ թարգմանել են Սաղմոսները, ինչպէս որ հարկը կը պահանջէ, իբրև Սրբազան Գիրք: Այդ է ահա պատճառը որ Սաղմոսք իրենց բնատիպ պարզութիւնը յեբրայականին կորսնցուցել են թարգմանութեանց մէջ, մինչև անգամ տեղ տեղ մութ և անիմանալի եղած են:

Առաջին թարգմանութիւն Սաղմոսաց ի յոյն լեզու, եղած է Քրիստոսի թուականէն 250 տարի առաջ, Գաւիթ Մարգարէէն 800 տարի վերջը. առաջին թարգմանութենէն 800 տարի վերջը եղած է մեր հայ թարգմանութիւնը ի ձեռն Ս. Սահակայ հայոց հայրապետի, ըստ վկայութեան Կորեան. « Երանելւոյն Սահակայ՝ զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ... ի հայերէն դարձուցեալ »: Եկեղեցական գրոց մէջ, ինչպէս կանխեր ենք զրուցել, առաջին տեղին ունին Սաղմոսք:

Ոմանք կարող են առարկել, եթէ Սաղմոսք Ս. Սահակայ թարգմանութիւնք են, ապա ինչո՞ւ չունին ո՛չ Մննդոց գրոց և ոչ Աւետարանաց պարզութիւնը և սահուն ոճը: Այդոր պատճառը թէպէտև կանխաւ զրուցածներուս մէջ կ'ամփոփի, այլ աստ

կարող եմ երկրորդել այսպէս. — Ինչպէս ամենայն
✓ ազգք բառ առ բառ թարգմանել են սաղմոս, այս-
պէս և մեր երանելի հայրապետը բառական և ոչ
ազատ թարգմանութիւն արել է. և որովհետև Սաղ-
մոսք ոտանաւոր գրուածք են յեբրայականին, այն
պատճառաւ կարելի որ չէ մեր բառական թարգմա-
նութիւնը, արձակ գրութեան սահուն ոճը ունենայ:
Միայն եթէ այսպիսի մի ենթադրութիւն անելու
լինիմք, կարծեմ ճշմարտութեան շատ կը մօտե-
նամք: Ս. Սահակայ առաջին ձեռք թարգմանու-
թիւնը Սաղմոսաց, իսկոյն մուտ գտել է եկեղեցա-
կան պաշտամանց մէջ, որով և ընդելացել են ազ-
գիս. յետագայ թարգմանիչք, արդէն գործածուած
Սաղմոսաց ձեռք մերձեցնելու զգուշացել են: Սոյն
այս դէպքիս յար և նմանը պատահել է Լատինաց
մէջ. Ս. Հերոնիմոսի հանրածանօթ Վուլգատայ կո-
չուած թարգմանութենէ առաջ, ունեցել են Լատինք
Սաղմոսաց թարգմանութիւնք, փոփոխ ընթերցուած-
ներով: Սրբոյն թարգմանութենէ շատ ժամանակ ևս
յետոյ հին թարգմանութեամբ վարել են, շատ եկե-
ղեցիք արդէն ընդելացած լինելով հնոյն:

Առ հասարակ ամենայն եբրայագէտք կը վկայեն
որ բովանդակ Սաղմոսք ոտանաւոր գրուած են, սա-
կայն տակաւին եղած չէ ոք, որ պարզէ կամ ու-
սուցանէ այդ եբրայեցի բանաստեղծութեան տաղա-
չափական կանոնները:

Ամենապարզ պէտք է լինին Սաղմոսք յեբրայա-
կան բնագրին. խօսքերուս հաւաստիք են նոյն իսկ
մեր հայերէնի մէջ՝ Սաղմոսաց շատ տեղ բացայայտ
և գեղեցիկ ոճը. օրինակ իմն, կարելի չէ հայերէն
աւելի պարզ գրուցել, յետագայ Սաղմոսաց տու-
ները. « Տէ՛ր լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ

« քեզ եկեսցէ. մի դարձուցաներ զերեսս քո յինչն :
« Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ. նմանեցայ ես
« հաւալըսան յանապատի : Զմոխիր որպէս հաց կե-
« ռայ, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի : Ա-
« լուրք իմ որպէս հովանի անցին. և ես որպէս
« խոտ ցամաքեցայ » (Սաղ. ՃԱ) :

Խնդիր է առ գիտնականս, թէ արդեօք բոլոր 150
Սաղմոսք՝ Դաւիթ Մարգարէին գրածն են, թէ այլոց .
Այդ տարակուսանաց պատճառը նոյն ինքն Սաղմո-
սագիրք մեզ կ'առաջարկեն. վասն զի կան Սաղմոսք
որ՝ սովորական « Սաղմոս ի Դաւիթ » խորագրի
տեղ, այլ խորագիրներ կը կրեն. ինչպէս « Սաղմոս
օրհնութեան որդւոցն Կորխայ, յԱսափ, Յման,
յԻդիթովմայ » և այլն : Այս վերնագիրք կարծել
կու տան, որ ի Սաղմոսաց ոմանք Դաւիթի գրած-
ները չեն, այլ ըստ խորագրաց՝ որդւոց Կորխայ,
Ասափայ, Եմանի և Իդիթովմայ, և այլն : Այս կար-
ծիքը մերժելի չէ, սակայն հեղինակաց տարբերու-
թեան պատճառաւ Սաղմոսաց մէջ ընտրութիւն կա-
րելի չէ անել. ամէնքը հաւասար աստուածային հոգ-
ւով գրուած ին. և Դաւիթի հետևող հեղինակք, նա-
խատպին վարկը և յարգը ունին : ԱՌԱՋՆԱԿԱՆՈՆ
ՍԱՂՄՈՍԻՔ՝ որք այժմ աշխարհաբար տաղաչափեալ
ի լոյս կ'ընծային, բոլորն ևս Մարգարէին գրած-
ները են :

Առաջիկայ հրատարակութեան գլխաւոր միտքը
եղած է, երգելու կանոնաւոր եղանակաց աւելի յար-
մար անել Սաղմոսները. և ամենայն կերպով աշ-
խատուած է, մութ տեղուանքը պարզել, աչքի առաջ
ունելով զանազան նոր և հին թարգմանութիւնք
Սաղմոսաց, ոմանք եբրայական բնագրէն, և այլք
եօթանասնից թարգմանութեան վրայէն, բայց ա-

ւելի հետևելով մեր հին նախնեաց թարգմանութեան :
Որովհետև ոչ իբր սրբազան Գիրք կը տպուի առաջիկայս , այլ իբրև յարասութիւնք , այսինքն այլ ձևերով մի և նոյն սաղմոսաց միտքը բացատրուած , յայդմ մասին մեծասլէս կը տարբերի նախատպէն : Սակայն գրեթէ տուն առ տուն եղած է առաջիկայ տաղաչափեալ յարասութիւնս , խիստ քիչ տեղ մի տունը երկուսի բաժնուած է , աւելի շատ անգամ՝ երկու տունը ի մի ամփոփուած : Բաղդատողք իսկոյն կը գտնան այս զանազանութիւնքը , որք առ հասարակ քիչ տեղ պատահած են : Հայ դպրութեան ճաշակ ունեցող անձինք , կարդալով ձեռագիրը , և համեմատելով բուն Սաղմոսաց հետ , շատ պարզ և իմանալի գտան այս տաղաչափեալ գրուածս : Ամէն լուսաւորեալ ազգաց մէջ տաղաչափուած են Սաղմոսք , որպէս և առ մեզ (զատ յայլոց) Յարութիւն Աղանուրեան Իսահակեանց ըրած է . որոց շատը , եւրոպական երգանիշներով տպուած , բարեպաշտիկ քրիստոնեայ ընտանեաց գեղեցիկ երգարան կ'ընծային : Քանի՛ փափաքելի էր գրողիս տեսնալ և լսել , ինչպէս ապաշխարութեան՝ նոյն և ցնծութեան Սաղմոսք , կանոնաւոր երգելով մեր հայ մանկանց բերան , այն ժամանակ առատապէս վարձատրուած պիտի համարիմ այս իմ մանրահոգ աշխատութիւնս :



ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆՔ

ՍԱՂՄՈՍԱՑ¹ ԴԱԻԹԻ

Ա*

Երնէ՛կ մարդուն՝ որ չերթար
Ամպարըշտաց խորհրդին,
Մեղաւորաց ճանապարհն
Նա՛ կանգ չառնուր կամովին:

Ժանտ՝ խառնակեաց մարդկանց քով
Նա չի երթար կամակար.
Մեղաւորաց խորշելով
Կը փոխէ իւր ճանապարհ:

Աստուածային օրէնքներ
Նա կ'ընդունի մըտադիր.
Կը մըտածէ զօր գիշեր՝
Նոցա վերայ անձանձիր:

Նա նըման է այն ծառին
Որ տընկած է ջրրաշատ

1. Եբրայեցերէնն ունի « Գիւրք զովութեանց »:

* Նախ տպուած էր 1889ի Բագմավիպի մէջ, էջ 836:

Ճամբու վերայ. ատենին
Տալով պըտող յոյժ առատ:

Նորա տերևք դալար միշտ՝
Ձըմեռ ատեն չեն թափիր,
Ինչ բանի որ դընէ միտ
Կը յաջողի ժիրաժիր:

Ամբարըշտաց ոչ այսպէս,
Յաջողութիւն չէք իսկի,
Նոցա գործեր փոշւոյ պէս
Հովը ցիր ցան կը տանի:

Ամբարիշտ մարդն յատենի
Կը լինի միշտ դատապարտ.
Եւ յարդարոց ժողովի
Խըստիւ դատուի մեղապարտ:

Տիրոջ առջև բաց յայտնի
Է արդարոց ճանապարհ.
Ամբարըշտացն կը տանի
Դէպ ի կորուստ ու խաւար:

Բ*

Ինչո՞ւ ազգեր շրփոթած
Տակնուվերայ կը լինին,
Ժողովուրդներ այլայլած
Փոռն խորհուրդներ կը խորհին:

* Այս ալ կար 1889ի Բազմավիտի մէջ, էջ 337:

Արքայք ելան ի յատեան
Աստուծոյ դէմ կըռուելու.
Նոցա իշխանք ժողվեցան
Ընդդէմ Տիրոջն օծելոյ:

« Կըտրենք, ասին, ու ձըգենք
« Մէկդի կրօնից կապանքեր
« Աստուծոյ լուծն թօթափենք.
« Ազատ վարենք մեր օրեր »:

Խընդաց Աստուած երկընքէն
Դոցա չար կամք տեսնելով.
Արհամարհեց Նա մըտքէն՝
Թագաւորաց վատ ժողով:

Եւ խօսեցաւ սըրդողած,
Շըփոթելով վեր ի վայր,
Անըզգամներն գումարուած
Չարաժողով ի մի վայր:

Ես թագաւոր նորամէ
Ընտրուեցայ Սիոնի.
Լըսեցէք դուք իմ բերնէ
Ինչ որ ասաց նա ինձի:

« Տէր ասաց ինձ, Որդիս ես,
« Այսօր ծընայ ես ըզքեզ
« Խընդրէ ինձմէ ինչ կ'ուզես,
« Ես ամէն բան կու տամ քեզ:

« Բոլոր երկրիս ազգերուն
« Քեզ տէր կարգեմ բացարձակ,

« Թող հասնի քո տէրութիւն
« Երկրիս վերայ ծագէ ծագ :

« Հովուէ նոցա տիրաբար
« Գալազանաւ երկաթի,
« Զաղիսէ՝ փըշրէ ազգն յիմար,
« Իբրև անօթ բըրուտի » :

« Թագաւորներ լըսեցէք,
« Այս է Տիրոջս հըրաման,
« Դուք որ աշխարհ կը դատէք,
« Խըրատուեցէք միաբան :

« Միշտ երկիւղիւ Աստուծոյ
« Պաշտօն պատիւ մատուցէք
« Եւ դողալով մըտախոհ,
« Նորա առջև ցընծացէք :

« Ընդունեցէք իմ խըրատ,
« Զըլինի Տէրն բարկանայ,
« Կը կորսուիք դատապարտ
« Երբոր արդար դատի նա :

« Թէ ի զայրոյթ նա բըրդի
« Արդարանալ ո՞վ կարէ.
« Այլ նոցա բիւր երանի
« Որոց յոյսը Աստուած է :

Գ*

Տէր, այս ի՞նչպէս բազմաթիւ
Եղան նեղիչք իմ անձին,
Եւ այլ շատեր ի կռիւ
Ելան ինձ դէմ, խրոխտացին:

Շատեր ասին թէ՛ « Սորա
« Գործը վատ է. Աստուծմէ
« Փրկուեալն յոյս մի չի կայ,
« Ինկած է սա երեսէ »:

Այլ դու, Տէր իմ ողորմած,
Եղար խեղճիս օգնական,
Տո՛ւր որ՝ գըլուխըս ծըռած՝
Նորէն առ Քեզ ամբառնամ:

Ես բարձրաձայն գոչեցի,
Բարձրեալն Աստուած երկընքէն
Լըսեց ձայնիս գըթալի,
Շուտ հասուց ինձ ապաւէն:

Երբ նընջեցի, քուն եղայ,
Սիրտըս հանգիստ անխըռով.
Առաւօտու երբ զարթեայ
Քաջալերուած Աստուծմով:

* Պր. Յովհ. Պալեան Լս այս սաղմոսը յարասելով տը-
պեց 1904ի Բազմավիպի մէջ, էջ 444:

Թըշնամուոյս զօրք բիւրաւոր
Չորս դիս առին՝ պատեցին.
Դու ես իմ Տէր զօրաւոր,
Չի վախցայ ես բընաւին:

Մեղաւորաց մի՛ բընաւ,
Տէր, գըթալով խընայեր.
Իմ թըշնամեացս անիրաւ
Ջարդէ կոտորէ ակռայներ:

Ազգ, ժողովուրդ, Տէր, քեզմով
Կը փըրկուին ու կ'ապին.
Քեզ օրհնութիւն երգելով
Երբէք պիտի չի դադրին:

Դ*

Երբոր առ Քեզ աղօթեմ,
Արդարութեամբ ինձ լըսէ.
Անդորր հանէ նեղ օրէն,
Գըթա՛ վըրաս, ողորմէ:

Աղամորդիք, ինչո՞ւ միշտ
Կը սիրէք դուք նանրութիւն,
Մինչև ե՞րբ էք խըստասիրտ,
Փընտռելով փուճ սըտութիւն:

Գիտցիք՝ Աստուած իւր սուրբին
Ուրիշ աչքով կը նայի,

* Դրուած էր 1889ի Բազմավիպի 404 իջին մէջ:

Երբ աղօթեմ սըրտագին,
Նա կը լըսէ իմ ձայնի.

Թէ սըրդողիք զայրացած,
Մեղք խօսք բերնէ չը հանէք
Թէ սըխալիք յեղակարծ,
Անկողնոց մէջ զըղջացէք:

Պատարագ սուրբ և արդար
Խոնարհ հոգևով ինքնանուէր
Մատուցէք Տեառն կամակար,
Եւ յուսացէք դուք ի Տէր:

Շատին բերանը այս է.
« Ո՞վ մեզ կու տայ լաւ օրեր ».
Դարձիր Տէր իմ, մէկ մ'նայէ,
Յոյց մեզ Քո լոյս երեսներ:

Ներսէս՝ սըրտանց ճըխացի,
Երբոր առատ տըւիր Դու
Տորեան, պըտուղ, ձէթ, գինի
Ժողովըրդեանդ ուտելու:

Հանգիստ սըրտով կը պառկիմ,
Եւ կը նընջեմ խաղաղ քուն.
Քանզի յուսով առանձին
Կու տաս վարել ինձ կեանք դուն:



A 5493

Ե*

Աղօթքներուս ականջ դիր,
Եւ ինչ որ կայ սըրտիս խոր,
Նայէ յերկնից մըտադիր
Ո՛վ Աստուած իմ թագաւոր:

Լոյսը մըթան՝ առտըւանց
Դեռ չի ծագած արեգակ,
Պատրաստ եմ, Տէր, քու դիմաց,
Լըսէ սըրտիս աղաչանք:

Անօրէն գործք դու կ'ատես.
Չարագործ վատ մարդիկներ
Չունին դիմացըդ երես
Երևնալու անտարբեր:

Նոյն սըտախօս ամբարիշտ
Որ անիրաւ կը վարուի,
Դու կը պատժես խըստիւ միշտ,
Որ աշխարհէս կորսուի:

Արիւնահեղ նենգաւոր
Կ'առնու արժան պատուհաս.
Պիղծ են առջևըդ բոլոր
Որ գործեն չար և վընաս:

Ողորմութեանդ շընորհիւ
Ես տաճարիդ մէջ կանգնած

* Տե՛ս նաև 1889ի Բագմավեպը, էջ 405:

Երկիր պագեմ երկիւղիւ
Քո սըրբութեանցըդ դիմաց :

Արդարութեան սուրբ ճամբէդ
Ձի մոլորիմ ես յանկարծ .
Արա ուղիդ արահետ .
Խընդաց չըլլամ թըշնամեաց :

Բերներնուն մէջը չը կայ
Ամենեին խօսք շիտակ ,
Լի է սիրտերը նոցա
Նենգ չարութիւն և դաւանք :

Իբր գերեզման միշտ բաց են
Նոցա հոտեալ գարշ կոկորդ .
Լեզուով խօսին զըրուցեն
Խօսք նենգաւոր՝ շողօքորթ :

Դատէ զնոսա , Տէր Աստուած ,
Չար խորհուրդներն արգիլէ .
Դառնացուցին սիրտդ գըթած ,
Թող կորսուին աշխարհքէ :

Նոքա ուրախ միշտ լինին
Որք՝ Աստուծոյ կը յուսան .
Տէր է իրենց պաշտպաննին ,
Պիտի ցընծան յաւիտեան .

Որք կը սիրեն , Տէր , ըզքեզ ,
Եւ անունովդ կը պարծին .
Դու հաճութեամբ կու սըփուես
Օրհնենքդ՝ վահանդ վըրանին :

Զ*

Մի Աստուած իմ, սըրդողած
Յանդիմաներ իմ մեղքեր,
Կ'աղաչեմ քեզ՝ բարկացած՝
Զարաչար զիս մի պատժեր:

Ողորմէ՛, Տէր, հիւանդիս.
Բժըշկութիւն իմ՝ դու ես.
Յաւը հասաւ ոսկորիս
Վայ եթէ ինձ դու չօգնես:

Շըլարեցայ մընացի,
Վըրաս նայող մի չըկայ,
Դու Տէր, մինչև երբ պիտի
Զարչարես զիս անխընայ:

Դարձիր նայէ իմ վըրայ,
Ողորմութիւնըդ հասուր,
Թէ չէ՛ ինձմէ յոյս չըկայ,
Պիտի մեռնիմ ես ի զո՛ւր:

Մեռնելէս վերջ, ես ի՞նչպէս
Յիշեմ քու փառքդ՝ մեծութիւն,
Հողին տակ չեմ կարող ես
Փառաւորել քո անուն:

* 1886ի Բազմավիպի 226 էջի մէջ տպուած կար:


Չունիմ հանգիստ օրն ի բուն,
Դառն արցունքով ես կու լամ,
Բոլոր գիշերը արթուն.
Բարձ, անկողին ջուր դարձան:

Թըշնամիներս անիրաւ
Տուին ինձ բիւր նախատինք
Աչքերուս լոյսն հալեցաւ.
Ահ, դադրեցէք, ո՛վ անխիղճք:

Մէկդի հեռու գընացէք
Վատ անօրէն մարդիկներ.
Ձեր չար գործեր, — ի՞նչ կարծէք
Աստուած վերէն չի՞ տեսներ: —

Լըսեց լացիս ձայն՝ Աստուած,
Խընդըրուածներս զուր չելան,
Սիրտըս ծոցիս մէջ ճըխաց.
— Փա՛ռք գըթութեանդ անսահման: —

Թըշնամիներս սարսափած
Տեղ կը փընտռեն փախչելու.
Ձի մեծ Տիրոջըս դիմաց,
Չարն ի՞նչ կարնայ զօրելու:



Է*

Քեզ յուսացի, Տէր Աստուած,
Հեռու պահէ զիս չարէ.
Եւ յամենայն հալածչաց
Ձիս ապրեցո՛ւ պաշտպանէ:

Չըլինի որ իմ հոգիս
Խըլեն նորա, իբր առիւծ.
Քեզմէ զատ ո՛վ փըրկէ զիս,
Կը կորսուիմ սըրտահիւծ:

Մըտացըս մէջ չարութիւն
Ամենեկին ես չունիմ.
Տեսա՞ր միթէ, Տէր իմ, դուն,
Անօրէն գործք իմ ձեռքին:

Եթէ երբէք հատուցի
Ես չար՝ չարին փոխարէն,
Արդար պատիժ թո՛ղ տըրուի
Ինձ՝ թըշնամեացս ձեռքէն:

Թող հալածէ թըշնամին,
Գետնէ գետին թող զարնէ
Ձիս. պատիւ փառք իմ անձին
Հողին հաւսար թող դընէ:

* Մինչև ցարդ անտիպ մնացած էր: Չէին տպուած նաև
գրքիս այն ամէն յարասութիւնները՝ որոնց ներքև գիտո-
ղութիւն չենք գրած:

Բարկութեամբ քով, արի Տէր
Կորցուր իմ վատ թըշնամին.
Արդար են քու պատուէրներ
Պէտք է ամենք խոնարհին:

Ազգաց ազանց բազմութիւն՝
Աստուծոյ մօտ ժողոված,
Արդար վըճիւ ամենուն,
Տէրը վերէն որոտաց:

Մարուր է խիղճս և հոգիս
Ես չեմ վախնար յատենէ.
Արդարութեամբ դատէ զիս.
Քեզ ամէն բան յայտնի է:

Մեղաւորաց չար խորհուրդ
Իրենց գըլուխ թող դառնայ,
Յաջողութիւն ի յերկնուստ
Արդարներուն պարգևեա՛:

Ամենեցուն սիրտ և խիղճ,
Տէր, միշտ բաց են քու դիմաց,
Որոց հոգիք գըտնաս ջինջ,
Կը վարձատրես դու, Աստուած:

Աստուած արդար դատաւոր,
Մարդը արագ չի պատժել,
Երկայնամիտ է հըզօր,
Կարնայ դեռ ևս ըսպասել:

Այլ եթէ շատ յամառիք,
Աղեղն և սուր պատրաստ են,

Նոյն մահաբեր այլ գործիք.
Պատժելու չար անօրէնն :

Իսկ անօրէնն անըզգաստ
Յաւօք մեղօք վարակած,
Իրեն փորած խորխորատ
Ինքը անկաւ յեղակարծ :

Մեծ մեղքերուն փոխարէն.
Մեծ պատուհաս ըստացաւ.
Աստուած թափեց երկընքէն
Նորա գըլխոյն պատիժ ցաւ :

Ես քու առջևդ խոնարհած,
Խոստովանիմ ըզքեզ Տէր.
Սաղմոսք և երգք օրհնութեանց
Պիտի երգեմ զօր գիշեր :

Ը

Տէր Աստուած իմ, Տէր փառաց :
Քանի՛ մեծ է քոյ անուն,
Բոլոր աշխարհք տարածուած,
Լի է երկիրս համաբուն :

Երկընքէն ևս դե՛ռ ի վեր
Փառքըդ տիրէ գերապանծ,
Յերկրէս տըղայք կաթընկեր
Քեզ հընչեն երգք օրհնութեանց :

Հակառակորդք, թըշնամիք
Թող կորակոր ամաչեն .

Զի ֆո առջևդ եղկելիք
Բերան բանալ կարող չեն:

Լուսին, աստեղք նկարէն,
Երկնից կամար կապուտակ,
Որք ֆու ձեռքէդ ելած են
Ինձ կ'աւետեն ֆո մեծ փառք:

Մարդըս ի՞նչ է, որոյ Գու
Երես կու տաս գրգուելով,
Աղամարդւոցս այցելու
Մերթ կը լինիս գըթալով:

Հրեշտակներէն քիչ ըստոր
Տըւիր նոցա պատիւ փառք,
Արարածոցդ երկրաւոր
Վերայ՝ դըրիր իբր պըսակ:

Ամեն գազան կենդանի,
Նոյն և թըռչունք օդային,
Զուկն՝ որ ի ծով կը շըրջի,
Նոցա կամաց հնազանդին:

Տէր Աստուած իմ, Տէր փառաց,
Քանի՛ մեծ է ֆու անուն:
Բոլոր աշխարհք տարածուած,
Լի է երկիրս համաբուն:



Թ

Քեզ՝ ի սըրտէս գոհութիւնք .
Ո՛վ երկնաւոր թագաւոր .
Պիտի պատմեմ ամենուն
Քոյ հըրաշքներ մեծագոր :

Ուրախ և շէն կը ցընծամ
Միշտ յարաժամ ես Քեզմով ,
Քոյ անունիդ սըրբազան
Սաղմոս կ'երգեմ օրհնելով :

Արդարութեանց դատաւոր .
Իմ իրաւունք՝ դատն արդար ,
Նըստած յատեան ի յաթոռ
Վարեցիր ճիշտ անաչառ :

Հեթանոսաց սաստեցիր ,
Կորաւ գընաց անըզգամն ,
Նոցա անուանք ջընջեցիր
Յաւիտենից յաւիտեան :

Ջէնք պակսեցաւ թըշնամւոյն :
Նոցա քաղաքն աւրեցիր ,
Յիշատակներն և անուն .
Անհետացան ցան և ցիր :

Դու կը մընաս յաւիտեան .
Քոյին աթոռդ է պատրաստ ,
Յորում բազմած ի յատեան
Պիտի կըտրես ամէն դատ :

Շիտակ՝ արդար դատաստան
Դու կը վարես: Տընանկին
Դու կը լինիս օգնական
Կարօտ՝ քաղցած նեղ օրին:

Ով որ անուներդ գիտէ,
Յոյս թող դընէ Գու վըրայ.
Զի ո՛վ առ Քեզ կը դիմէ,
Միշտ օգնութիւն կը գըտնայ:

Երգեցէք Տեառըն Սաղմոս,
Որ բընակին ի Սիոն.
Ազգ և ազինք հեթանոս
Նորա գործեր գիտնան, օ՛ն:

Արիւն անպարտ զո՛ւր հեղեալ
Կը բողոքէ դէպ ի վեր.
Նա զըրկելոյն տառապեալ
Դատաստան չի՛ ուշացներ:

Ողորմէ, Տէր, թըշուառիս:
Տես իմ վիճակ և խեղճ կիրս.
Անգութ անսիրտ թըշնամիս
Դուռը մահուան հասոյց զիս:

Դու զիս մահէն փըրկեցիր
Որ Սիոնի դըռներէն
Քոյ օրհնութիւնք բերկրալիր
Տիեզերաց հըռչակեմ:

Հեթանոսները իրենց
Փոսերն ինկան, պիղծ և վատ.

Նոցա ոտքերը կապեց
Իրենց լարած որոգայթ :

Աստուծոյ դատը արդար
Յայտնի եղաւ ամենուն ,
Առաւ պատիժն չարաչար
Անըզգամն իր մեղքերուն :

Պիտի դառնան ի դըժոխք
Ամբարիշտներն ամենայն ,
Եւ մեղագործ հեթանոսք ,
Որոնք զաստուած չըճանչցան :

Ձի մոռնար , Տէր , աղքատին
Քաշածը նա լաւ գիտէ .
Համբերութիւն տընանկին
Նորա դիմաց յայտնի է :

Ձը թողուս որ ուժովսան
Իրենք իրենց մարդիկներ .
Բոլոր ազգաց դատաստան
Դու ինքդ վարէ , գըթած Տէր :

Թող որ ամենքը ճանչնան
Որ իրենք խեղճ մարդիկ են
Եթէ Քեզմէ չի վախնան
Շուտով պատիժ կը կըրեն :

Հեռուէն , Տէր , մի դիտեր
Մեր նեղ օրեր վըշտակիր .
Շատ եղաւ մեր կըրածներ
Տո՛ւր օգնութիւն , շոյտ հասիր :

Գըլուխ վերցուց ամբարիշտն
Աղքատը վախցաւ սըմքեցաւ.
Դուն արգիլէ, պատժէ խիստ
Նոցա խորհուրդն նենգ ու դաւ:

Չամըչնալով կը պարծի
Մեղաւորն իւր գործերով.
Ջըրկողն առանց ամօթի
Ձի քաշուիր ոչ մէկուն քով:

Ամբարիշտ մարդը զԱստուած
Կ'արհամարհէ, չի փընտռեր.
Անհոգ անվախ լըրբացած
Կը գործէ իւր չար մեղքեր:

Պիղծ է նորա վատ ճամբան.
Աստուած՝ նորա համար չէ.
Կ'արհամարհէ ամեն բան,
Վախ չունի նա ոսոխէ:

Կ'ասէ իրեն մըտքէն նա,
Թէ՛ յաւիտեան՝ անսասան
Իմ ընտանիքս կը մընայ,
Ձի լինիր չարն ինձ խափան:

Անէծք, դաւ, նենգ, դառնութիւն
Շըրթունքներէն կը վազեն,
Բերնին՝ լեզունին ներքև բոյն
Տագնապք և ցաւք դըրած են:

Դարան նըստած կը սպասէ
Ի խաւարի որսալ մարդ,

Առիւծի պէս կը դիմէ
Յափըշտակել խեղճն՝ աղքատ :

Նա կ'ողորի, գալարի,
Ձևեր կառնու զանազան .
Աղքատն կ'երթայ ու կ'ինկնի
Նորա բացուած ժանտ ճիրան :

Դարձեալ մըտքէն նա կ'ասէ
« Աստուած թողել՝ մոռցել է
« Այդ խեղճ տընանկն երեսէ,
« Նայել անգամ իսկ չուզէ » :

Արի Տէր իմ, ձեռքդ ցըցուր,
Տընանկին յոյս՝ ապաւէն,
Խեղճուկ աղքատն մի թողուր,
Որ չարչարէ անօրէնն :

Ամբարիշտ մարդը ինչո՞ւ
Արհամարհէ Տէր ըզՔեզ .
Միտքը դըրած իբր թէ՛ Դու
Վըրէժ պիտի չըլուծես :

Դու կը տեսնաս ցաւածներն
Կը գորովիս վըրանին .
Խեղճ աղքատին դուն ես Տէր .
Ի Քեզ յուսան որբն՝ այրին :

Մեղաւորին, Տէր ջաղխէ
Պըղծագործ ձեռքն չարաչար .
Անհետ կորչին աշխարհէ,
Ինք՝ և իրեն գործեր չար :

Տէր թագաւոր յաւիտեան .
Թող կորսըւին աշխարքէս
Հեթանոսներն անխափան
Որք չըճանչցան, Տէր, ըզՔեզ :

Հեզ տընանկին ցանկութիւն,
Տէր իմ, Քեզի յայտնի է .
Հասիր նորա յօգնութիւն,
Աղաչանքները լըսէ՛ :

Որք զըրկելոյն դատաստան
Վարէ կըտրէ, Տէր, շուտով
Ամբարիշտներն թող տեսնան .
Ու ամաչեն լըսելով :

Ժ

Ես Քեզի, Տէր, յուսացայ
Ո՛վ ինձ կարնայ զրուցելու
« Ինչպէս ճընճողուկ թող երթայ
« Լեռնէ ի լեռ թըռչելու » :

Ահա իրենց աղեղներ .
Մեղաւորներ լարեցին,
Դէպի արդար սուրբ սըրտիդ
Ի խաւարի շըտկեցին :

Քու դըրած կարգը՞ ահա
Ամբարիշտներն աւրեցին .
Արդարին ձեռքը ի՞նչ կայ,
Ի՞նչ թող անէ եղկելին :

Սուրբ տաճարին մէջն է Տէր,
Երկինք նորա են աթոռ.
Նա կը տեսնայ աղքատներն
Գիտէ մարդկանց սիրտ բոլոր:

Կը փորձէ Տէր արդարներն,
Յետոյ կու տայ աջ գըթոյ.
Իսկ ամբարիշտք մեղսասէր,
Ատելի են Աստուծոյ:

Նոցա վերայ կը թափէ
Անձրևի տեղ հուր՝ կայծակ.
Տաք տաք քամին կը փռէ
Խամրել սոցա ազարակ:

Արդար է, Տէր, դատաւոր,
Արդարութիւն կը սիրէ.
Եւ պատժելով յանցաւորն,
Ուղիղ ճամբու կու բերէ:

Ժ Ա

Դուն հասիր, Տէր, դուն փրկէ.
Արդարութիւն պակսեցաւ
Ճըշմարտութիւն մարդկանցմէ
Հալածական, դուրս ինկաւ:

Ընկեր զընկեր կը խաբէ
Շողոքորթ վատ լեզուներ
Նենգ, չարութիւն ի սըրտէ
Կը տարածեն անտարբեր:

Փակուլին շրթոնք նենգաւոր .
Թող սլապանծին անօրէնք .
Եւ մեծաբան լեզուն՝ որ
Կը խօսի մեղք և անէծք :

« Սըրենք, ասեն, լեզուներս,
« Առանց մարդէ քաշուելու,
« Խօսինք, ասենք ուզածներս,
« Տէրն ի՞նչ կարնայ անելու » :

Աղքատին կիրն տեսնալով
« Հիմա կ'ելնամ, ասաց Տէր,
« Պէտք է փըրկեմ ես շուտով
« Անտէրն տընանկ և խեղճեր » :

Աստուծոյ խօսք մեծագին
Են՝ քան զարծաթ որ՝ զըտուել
Են հողերէն ի բովին,
Եօթընպատիկ առաւել :

Դու փըրկեցիր զըրկեալներ
Յորոգայթից չար մարդկան,
Եւ կը պահես անվեհեր
Այժըմ և միշտ, յաւիտեան :

Ամպարիշտներ անդադար
Կը լարեն դաւ, որոգայթ
Դու գըթալով, հայրաբար,
Կը փըրկես խեղճն և աղքատ :

Ժ Բ

Այս մինչև երբ, Տէր Աստուած,
Պիտի մոռնաս զիս իսպառ
Ինչո՞ւ ինձմէ խրոտված,
Դարձողցիր դէմքդ լուսավառ:

Ես կը հոգամ մըտախոհ:
Գիշեր ցորեկ անդադրում,
Ցաւը սըրտիս տիրեց, ո՞հ,
Ե՛կ, հասիր ինձ օգնութիւն:

Այս մինչև երբ, թըշնամիս
Գլուխ վերցընէ ինձի դէմ,
Նայէ լըսէ, Տէր ձայնիս.
Եղիր հոգևոյս ապաւէն:

Արա՛ աչերս լուսաւոր,
Կը պաղատիմ, կը խընդրեմ.
Զըլինի քունն՝ ահաւոր
Բաժնէ ընդ միշտ զիս ի քէն:

Ես քու վերայ յոյսս դըրած
Սիրտս կը ցընծայ ի ծոցիս,
Փըրկութիւն իմ էս, Աստուած,
Օրհնեմ փըրկիչդ իմ անձիս:



Ժ Գ

Ասաց սըրտէն անըզգամն .
« Աստուած չըկայ . փուճ խօսք է ,
« Ամենայն մարդ ինքնակամ
« Սըրտին ուզածն թող անէ » :

Ամէնքն մէկ տեղ , համախոհ
Շատ պիղծ մեղքեր գործեցին .
Օրէնք գըթոյ և սիրոյ
Ոտքերուն տակ կոխեցին :

Աստուած վերէն նայեցաւ ,
Մընայ արդեօք դեռ մի մարդ
Արդարութեան սըրտացաւ
Որ՝ ունենայ խելք իմաստ :

Մէկը միւսէն անպիտան
Մոլորական գընացին ,
Արդարութեան սուրբ ճամբան
Չեկաւ մէկուն իսկ մըտքին :

Միթէ սոքա միշտ այսպէս
Պիտի գընան մոլորած
Չըճանչնալով , Տէր , ըզքեզ
Անխիղճ , անսիրտ , անկասկած :

Քու ժողովուրդը՞ անտէր՝
Ինչպէս մի հաց բըրդեցին
Կերան , գնացին անտարբեր ,
Եւ ոչ անունդ յիշեցին :

Այլ կու գայ ժամ կը ճանչնան.
Վախը, սարսափ իբր հեղեղ
Պիտի տանջէ անզգամն,
Նոյն վախի բան չեղած տեղ:

Դուք աղքատին ի վերայ
Շատ խնդացիք, ծաղրեցիք.
Նա Աստուծոյ կը յուսայ,
Նորա պաշտպանն է Երկինք:

Ի Սիոնէ սով կու տայ
Իսրայելի փրկուածիւն.
Երբոր Աստուած մեզ գըթայ,
Յակոբ՝ ցընծա՛, խընդա՛ Դուն:

Ժ Դ

Տէր, սով կարնայ մըտնալու
Քոյին խորանդ անպատում.
Սըրբազան լեռնդ ելնալու
Ոյժ զօրութիւն հասնի սում: —

Ով որ ամբիծ վարք ունի,
Արդարութիւն կը գործէ.
Ճըշմարտութիւն կը խօսի
Սուրբ անարատ, ի սըրտէ:

Նա իւր բերնէն նենգաւոր
Խօսք չի հաներ կամ կարծիք.
Զի թողուր որ մերձաւորն
Կըրէ ամօթ նախատինք:

Չարագործներն՝ հանապազ
կ'արհամարհէ նա սըրտով.
Իսկ խոնարհ մարդն երկիւղած
Նա՛ կը պաշտէ պատուելով:

Ի՛նչ առթի մէջ որ լինի,
Եթէ երբեմն նա երդնու,
Միշտ երդումէն պատկառի.
Սուտ չի գիտեր խօսելու:

Իրեն արծաթը վաշխի
Չի տար. բընաւ չընդունիր
Ընծայ, նըլէր ի դատի.
Դա՛ Աստուծոյ մարդ ընտիր: —

Ժ Ե

Պահէ, Աստուած. ես ի ֆեզ
Բոլոր սըրտովս յուսացայ,
Նա է իմ Տէրս, ասի ես
Բարիք ինձի նա կու տայ:

Սուրբերուդ հետը, կամաւ,
Վարեցի կեանք ընտանի.
Ընտրեալներուդ մեծ համբաւ
Ես ի սըրտէ յարգեցի:

Դուն, ամբարիշտքն անըզգամ
Որք՝ չուզեցին Տէր ըզֆեզ,
Ճանչնալ՝ պաշտել ինքնակամ,
Սաստէ՛, պատժէ սաստկապէս:

Նոցա արեան չար ժողով
Ես չեմ Լրթալ բընաւին.
Նոցա պիղծ վատ անունով
Ձեմ աղտոտել շըրթունք իմ:

Ժառանգութիւն իմ Աստուած,
Բաժին իմոյ բաժակին,
Ինձ ամենայն ըստացուած.
Կու դարձընես վերըստին:

Վիճակեցան ինձ ընտիր
Եւ քաջաբեր լաւ արտեր.
Ժառանգութեանս հողն երկիր.
Հաճոյ է ինձ, փառք Քեզ Տէր:

Դու զիս արիր իմաստուն.
Երբ առանձին կը խոկամ,
Նոյն և գիշերն ի մըթան.
Գոհանալով փառք կու տամ:

Սիրտս ի ծոցիս կը ճըխայ.
Ցընծայ բերնիս մէջ լեզուս.
Մարմինս Քեզմով հանգըստնայ
Ձի դու, Տէր, իմ միակ յոյս:

Դու չես թողուր իմ հոգւոյն
Դըժոխքին մէջ կորսուիլ.
Եւ ոչ սուրբիդ ի հողոյն
Ապականիլ և փոտիլ:

Կը ցըցընես դու ինձի
Կենաց ուղղորդ ճանապարհն
Որ՝ դէպ առ Քեզ կը տանի
Երանութիւնդ անըսպառ:

Ժ Զ

Արդարութեանս լըսէ, Տէր,
Աղօթքներուս ականջ դիր.
Չեն հանել իմ շրթունքներ
Խօսք նենգաւոր կամ պատիր:

Արդարադատ ֆոտան
Իմ իրաւունքս թող դատի
Եւ ֆոտան աչեր սըրբազան
Տեսնան արդարը յայտնի.

Դուն փորձեցիր սիրտս, հոգիս
Գիշերուան մէջ, ի մըթան.
Եւ չըզտար՝ իմ գործիս
Մէջ, անիրաւ ոչ մի բան:

Ես ուրիշին գործերուն
Չեմ խառնուիլ, չեմ դատել.
Մըտադիր ֆոտ խօսքերու
Խիստ ճանապարհն եմ ընտրել:

Ֆոտ ճամբուդ մէջ՝ հաստատուն
Պահէ ոտքերս, կ'աղաչեմ,
Գայթակղութիւն ոչ մէկուն
Չըլինի որ ես առթեմ:

Ես դէպ ի ֆեզ գոչեցի,
Դուն լըսեցիր իմ ձայնիս,
Ողորմութեամբ սքանչելի
Ազատեցիր չարէն զիս:

Քու թւերուդ շուքին տակ,
Ինչպէս աչքի փափուկ լոյս,
Պահէ զիս, Տէր, ամրափակ,
Զըլլամ նախատ թըշնամւոյս :

Իմ թըշնամիք անօրէն՝
Ըստուարացան գիրացան .
Վախ չունելով ոչ մէկէն
Անդուռն բերնով խօսեցան :

Որոգայթներ լարեցին
Որ զիս անոնց մէջ ձըգեն .
Ամէն միջոց ձեռք առին
Որ զիս ի վայր գըլորեն :

Իբրև առիւծ որսական
Պատրաստուեցան որսալու .
Մըտան նոքա ի դարան
Իբրև կորիւն առիւծու :

Արի, Տէր իմ, շուտ հասիր .
Արգիլէ չար խորհուրդնին,
Տառապեցայ չարակիր .
Դու ազատէ իմ հոգին :

Կորցո՛ւր, վերցո՛ւր աշխարհքէ
Այդ մարդիկներն ամբարիշտ,
Որք աներկիւղ միշտ Քեզմէ
Կը վարեն կեանք խըստասիրտ :

Նոքա կերան կըշտացան,
Կեանք բարելի անցուցին

Առատահաց մեծ սեղան
Իրենց որդւոցը թողին:

Այլ ինձ, արդար գործով, Տէր,
Տո՛ւր քու դիմացդ երևել,
Եւ իմ հոգւոյս վըշտաբեր,
Լոյս երեսովդ, տո՛ւր յագել:

Ժ Է *

Կը սիրեմ քեզ, Տէր, սըրտանց
Իմ զօրութիւնս, հաստատիչ.
Ապաւէն իմ, Տէր Աստուած.
Ինձ օգնական և փըրկիչ:

Յոյսըս բոլոր քո վըրայ
Դըրած եմ, Տէր, հաստատուն.
Քեզմէ զատ մէկը չը կայ
Որ տայ ինձի փըրկութիւն:

Աղաչելով դէպ ի քեզ
Կողկողագին կը դիմեմ.
Դու ես որ զիս՝ կը փըրկես
Իմ թըշնամեացըս ձեռքէն:

Չորս դիս բոլոր պատեցին
Երկիւղ, տագնապ մահացու.

* Պր. Յովհ. Պալեան՝ սոյն սաղմոսին 7էն 14 համար-
ները աշխարհաբար յարասելով տպել տուած է 1904ի Բագ-
մավիպի 443 իջին մէջ:

Տակնուվերայ զիս արին
Հեղեղք մեղաց ահարկու:

Վիշտք դըժոխոց, խըղճի խայթ
Պաշարեցին իմ բոլոր.
Հասաւ լարուած որոգայթ
Վըրաս՝ մահուն ահաւոր:

Նեղութեանց տակ ճընշըւած
Ձայնըս յերկինք վերցուցի.
Առ Քեզ Աստուած սըրբութեանց,
Սըրտիս խորէն հառչեցի:

Ի տաճարին սըրբութեան,
Լըսեց իմ ձայնըս Աստուած.
Աղաչանքներըս հասան
Յականջըս Տեառն զօրութեանց:

Երկիրս դողաց, խըռոված
Լերանց հիմունք սարսեցին.
Վասըն զի Տէր սըրդողած
Վար նայեցաւ սըրտագին:

Բարկութենէ ելաւ մուխ,
Բորբոքեցաւ իր առջև
Սաստիկ կըրակ ինչպէս ուխ,
Փայլակք ելան սըրաթև:

Խոնարհեցոյց երկինք վայր,
Իջաւ Տէր ինքն աթոռէն,
Մէզ և մըշուշ ու խաւար
Ոտից ներքև ձըգուած են:

Յետոյ ելաւ բազմեցաւ
Քերովբէից լրծուած կառք,
Ի վեր թըռաւ սըլացաւ
Հողմ մըրըրկէն շատ արագ:

Նորա չորս դին իբր ծածկոյթ
Մութ և մըշուշ կը պատեն.
Վերն է իրեն յարկն անքոյթ,
Ամպք օդաչու, ջըրեղէն:

Նայեցաւ Տէրն հըրացան
Աչօք՝ յերկնից իբր փայլակ.
Ամպերն արագ ցըրուեցան՝
Տեղաց կարկուտ և կայծակ:

Որոտաց Տէր ի բարձանց,
Երկիրս տըլաւ արձագանգ,
Կըրակ՝ կարկուտ վար տեղաց
Պայթեցան շանթ ու կայծակ:

Երբ բարկացած հողմ սաստիկ
Երկրիս երես փըչեցիր.
Երևեցան լերանց հիմք,
Յայտնըեցան աղբիւրք ցիր:

Դէպ առ իս Տէր գըթութեան
Երկընցուց ձեռքն յերկընքէն,
Եւ երբ ջըրերն յորդեցան,
Ազատեց զիս խըղդելէն:

Ի թըշնամեաց հըզօրաց
Փըրկեց զիս Տէր, գըթալով,

Եւ ընդդէմ իմ ատելեաց,
Պաշտպանեց զիս ապահով:

Յարձակեցան իմ վերայ,
Երբ նեղուէի չարակիր.
Այլ օգնութիւնդ շուտ տեսայ.
Հոգիս յանդորր հանեցիր:

Արդարութեանս համեմատ
Դու ինձի, Տէր, հատուցիր,
Նայելով սիրտս անարատ
Իմ դատս արդար դատեցիր:

Ես ֆու ճամբովըդ կ'երթամ,
Չեմ խոտորիլ ոչ մէկ դի.
Ամբարըշտիլ անգուման,
Եւ ոչ մըտքէս իսկ կ'անցնի:

Ամբիժ սըրտով կ'աշխատիմ,
Մեղքէ հեռու փախչելով
Ըզգուշութեամբ կը վարուիմ
Որ' չաղտոտիմ վատ գործով:

Աչքիս առաջ միշտ ունիմ
Քոյ սուրբ արդար պատուիրանք.
Ես ոչ երբէք կը շարժիմ
Քոյ օրէնքիդ հակառակ:

Վարք անարատ ընտրեցի.
Ըզգուշացայ մեղքէ ես.
Հատոյց ինձ Տէր, յիրաւի,
Արդար չափով, պէտքին պէս:

Սուրբ մարդուն հետ սըրբութեամբ
Արդարոյն հետ դու արդար .
Որ խըստացաւ նենգութեամբ
Դու պատժեցիր չարաչար :

Հեզ խոնարհին գըթալով
Ողորմութեամբդ կը փըրկես ,
Ամբարտաւանն պատժելով
Յերկիր ի վայր կը ձըգես :

Մըտքիս աչաց լուսատու .
Փարատէ մութն և խաւար
Որ՝ ես առանց ծըռելու
Գընամ ֆուկին ճանապարհն :

Արիացած , Տէր , Քեզմով
Թըշնամւոյն զօրքն կը ցըրուեմ .
Եւ զօրացած Աստուծմով
Վեր կ'ելնամ ես պարըսպէն :

Աստուած , սուրբ է քո ճամբան ,
Խօսքերդ ընտրած են ամէն .
Նոցա՝ որք Քեզ կը յուսան
Կը լինիս միշտ ապաւէն :

Ո՞վ է որպէս Աստուած մեր .
Չի կայ նըմանը նորա ,
Աստուած մեր է միակ Տէր
Ամենայնի ինչ որ կայ :

Նա ինձ տըլաւ զօրութիւն ,
Կարողութիւն , մըտաց կար .

Նա ինքն ցըցուց իմ հոգւոյն
Գընալ յամբիծ ճանապարհն :

Հաստատեցիր իմ ոտքեր ,
Ինչպէս սըրունք եղջերուի .
Որ՝ բարձր երթամ դէպ ի վեր
Անվախ առանց արգելքի :

Պատերազմի համար՝ իմ
Ձեռաց տուիր ոյժ կորով .
Կը խորտակեմ թըշնամին
Իմ հաստածիզ բազուկով :

Քոյ փըրկութիւնդ իբր վահան
Ձիս պաշտպանէ վըտանգէ .
Աջըդ ինձի օգնական ,
Ողորմութիւնդ վըրաս է :

Կ'երթամ ազատ անսասան ,
Հալածելով թըշնամին ,
Եւ պիտի յետ չըդառնամ
Մինչև ամենք չըսպառին :

Այնպէս զիրենք նեղ ձըգեմ
Որ չըկարնան վերըստին
Ձէնք ձեռք առնուլ ինձի դէմ .
Ոտիցս ներքև թող կորչին :

Պատերազմի քաջութիւն
Դու իմ սրտիս ազդեցիր ,
Թըշնամիներըս նըկուն
Առջևս բերիր ձըգեցիր :

Հալածական թըշնամիքս
Թիկունք ինձի դարձուցին .
Սատակեցան ատելիքս
Ջընջըւեցան ազգովին :

Անիրաւներն նեղն ինկած ,
Թեկն , օգնութիւն գոչեցին .
Այլ չի լըսեց Տէր Աստուած
Նոցա գոռում գոչումին :

Ինչպէս որ հող և փոշին՝
Ցըրուեմ զիրենք ամէն կողմ .
Ինչպէս կաւ ցեխ փողոցին՝
Թող որ լինին ոտնակոխ :

Հակառակող չար ազգին
Փըրկեցիր զիս ձեռքէն դու .
Եւ ուզեցիր որ լինիմ
Գըլուխ՝ օտար ազգերու :

Ժողովուրդ ինձ անծանօթ՝
Մըտիկ արաւ իմ խօսքեր
Եւ ծառայեց խընամոտ
Ձիս ճանչնալով իրեն տէր :

Երբ լըսեցին այս համբաւ
Իմ բացակայ թըշնամիք ,
Դէմքերուն գոյն պատ դարձաւ ,
Բըռնեց նոցա դող սաստիկ :

Կենդանի է , Տէր Աստուած ,
Եւ օրհնեալ է իւր անուն ,

Բա՛րձր առաջի է ազգաց
Որ ինձ տըլաւ փըրկութիւն :

Հանեց վըրէժըս արդար
Ապըստամբող ազգէն խե ,
Ա՛յլ ժողովուրդ ազգ օտար
Հնազանդ արար իմ առջև :

Փառքըս պատիւս բարձր արիւր
Իմ թըշնամեացըս դիմաց .
Անիրաւէն փըրկեցիր ,
Փա՛ռք գըթութեանդ՝ մեծդ Աստուած :

Այնոր համար ես պիտի
Խոստովանիմ գքեզ Աստուած ,
Բոլոր ազգաց առաջի
Երգել նոր երգ սաղմոսաց .

Մեծ եղև Քո գըթութիւն
Դէպ ի ընտրեալդ թագաւոր .
Դաւթի Քոյին օծելոյ
Եւ զաւակաց իւր բոլոր :

Ժ Ը

Աստուծոյ փառքն անպատում
Կը քարոզեն երկինք մեզ .
Եւ աշխարհիս ըստեղծումն՝
Պէտք է լըսենք մեք երկրէս :

Ամէն օր նոր ի նորոց ,
Աստուծոյ մեծ գիտութիւն ,

Նոյն և գիշեր գիշերոյ
Տալով՝ հասնի ամենուն :

Չըկայ ոչ խօսք ոչ լեզու
Որ՝ մեզ չանէ ակն յայտնի
Ծանօթութիւնն Աստուծոյ
Ինչպէս ստեղծող արարչի :

Աշխարհիս մէջ ամէն դի,
Տիեզերաց մէջ անծայր,
Արարածոց ձայն լըսուի
Որ՝ քարոզեն անդադար :

Նա՛ զարկած է արևուն
Տիեզերաց մէջ խորան,
Ուստի կ'ելնայ լուսատուն
Նոր փեսայի յար նըման :

Որ նոր իրեն սենեկէն
Առաւօտներ դուրս կու գայ
Դէմքը ուրախ սիրտը շէն,
Եւ կը ճեմէ իբր հըսկայ :

Նա երկընքին մէկ ծայրէն
Կ'ելնայ կ'երթայ ի միւս ծայր,
Ճառագայթներն ջերմաջերմ
Տարածելով յամէն վայր :

Կը հաստատեն մարդուս միտք
Հաստատ օրէնքն Աստուծոյ .
Եւ յայտնութիւնք ճըշմարիտք
Կու տան խելք միտք տըղայոց :

Շիտակ են Տեառն հըրամանք,
Ուրախութիւն են սըրտի,
Լուսաւորքն են պատուիրանք
Որ լոյս կու տան մեր աչքի:

Սուրբ է երկիւղն Աստուծոյ
Եւ կը մընայ յաւիտեան.
Արդարութեան և սիրոյ
Է՛ նորա ճիշտ դատաստան:

Ցանկալի է քան ոսկին
Եւ շատ ազնիւ քարերէ,
Քան ըզխորիսխը մեղրին
Շատ աւելի անոյշ է:

Այն պատճառի քոյ ծառայդ
Կը պատկառի օրէնքէդ.
Եւ կը յուսայ հատուցման
Առատապէս տըւողէդ:

Ո՞վ կարող է միտք բերել.
Իրեն ամեն մի մեղքեր.
Որոնք ծածուկ են մնացել,
Կ'աղաչեմ Տէր մի յիշեր:

Կամաւորէն զիս փըրկէ
Որ չը տիրէ իմ վերայ.
Եթէ պահես այնոնցմէ
Սուրբ չըլլալու վախ չըկայ:

Թող հաճելի լինին քեզ
Բերնէս ելած իմ խօսքեր
Եւ անցածները մըտքէս,
Օգնական իմ Փըրկիչ Տէր:

Ժ Թ

Թող լըսէ Տէր քու ձայնիդ,
Եւ օգնական քեզ ըլլայ,
Տառապագին նեղ օրերդ,
Անուն Տիրոջն Յակովբայ:

Իւր սըրբութեան աթոռէն
Թող հասնի քեզ օգնութիւն,
Ոյժ զօրութիւն Սիրմիսէ
Հասցընէ քեզ պէտք ժամուն:

Քոյ պատարագք սըրտագին
Ամենակալն թող յիշէ,
Ընդունելի միշտ լինին
Զոհերդ ուխտերդ ի սըրտէ:

Քոյին սըրտիդ համեմատ
Հատուցանէ քեզ Աստուած.
Եւ փափաքդ, իղձք սըրտակաթ,
Տեսնաս բոլորն կատարուած:

Քու փըրկութիւնդ տեսնալով
Յընծան, բերկրին մեր սըրտեր,
Եւ Աստուծոյ անունով,
Վա՛ռ բանամք մեք դըրօշներ:

Քու խընդրուածք կատարուած
Տեսայ աչքով ես այսօր.
Ինք կը պահէ, Տէր Աստուած,
Իրեն օծեալ թագաւոր:

Հասան յերկնից սըրբավայրն,
Խընդրուածքներդ սըրտագին,
Աջն երկընցուց կենարարն՝
Ի փըրկութիւն արքային:

Ոմանք իրենց կառքերով,
Մէջ տեղ ելան պարծելով,
Եւ այլք իրենց ձիերով.
Մենք կը պարծինք Աստուծով:

Սակայն նոքա խիստ շուտով
Խափանեցան ու ինկան:
Մէք նորէն ոտք ելնալով,
Շիտակ կեցանք անսասան:

Դու Տէր պահէ թագաւորն.
Եւ կ'աղաչեմք, լըսէ մեզ,
Երբ կը դիմենք մեք այն օրն,
Բոլոր սըրտով դէպ ի Քեզ:

Ի

Քու զօրութեամբ Տէր Աստուած
Կ'ուրախանայ թագաւոր,
Եւ կը ցընծայ նա սըրտանց
Փըրկութեամբ Քով մեծագօր:

Նորա սըրտին իղձն, փափագ
Կատարեցիր ամենայն.
Նորա աղօթքն, աղաչանք
Դուն լըսեցիր անխափան:

Օրհնութիւնքովդ երկնաձիր
Քաղցրացուցիր նորա կեանք,
Գլխոյն վերայ դու դըրիր
Ականակուռ ոսկի պսակ:

Առողջութիւն խընդրեց՝ կեանք.
Շընորհեցիր նըմա դուն
Ապրիլ երկար. տուիր փառք
Եւ վայելուչ մեծութիւն:

Քոյ օրհնութիւնըդ անհուն
Նորա հետն է. Քոյ վերայ
Յոյսը դըրած, հաստատուն
Ուրախ է միշտ, կը ցընծայ:

Կը հասնի ձեռքդ զօրաւոր
Քոյ թըշնամեացըդ վերայ,
Ատելիներըդ բոլոր
Կը պատժես դու անխընայ:

Բարկութիւնդ է ահաւոր.
Ինչպէս հընոց բորբոքած
Ուտէ լափէ զմեղաւորն,
Որ չերևի քու դիմաց:

Դու կը ջընջես բոլորով
Նոցա գործեր աշխարհքէ.
Տըներն նոցա որդւոցմով
Անճետ կ'անես մարդկանցմէ:

Չար խորհուրդներ խորհեցան
Քեզի դէմ ձեռք վերուցին.

Այլ ի զո՛ւր տեղ, անվախճան,
Խաղք խայտառակ մընացին:

Շիտակ՝ նոցա երեսին .
Թափեցիր նեւք բիւրաւոր,
Հալածական գընացին
Ամօթահար գըլխակոր:

Դուն, բարձր եղիր Տէր Աստուած
Զօրութեանդ մէջ վեհափառ,
Մէք օրհնեմք Տեառնդ զօրութեանց
Սաղմոսք և երգք անդադար:

Ի Ա

Աստուած, Աստուած իմ, ինչո՛ւ
Զըգեցիր զիս երեսէ:
Փըրկութեան յոյսը՝ հեռու
Տարին մեղքերըս ինձմէ:

Առտու իրկուն դէպ առ Քեզ
Կը դիմեմ ես լալագին
Կուլամ կ'ողբամ իմ մեղքերս:
Դու չե՞ս լըսել իմ ձայնին:

Միթէ՛, դու Տէր սըրբութեանց,
Իսրայելի Աստուածն չե՞ս .
Նորա գովեստք օրհնութեանց
Փառաբանած չե՞ն ըզՔեզ:

Զէ՞ որ ազգիս նախահարք
Ի Քեզ Տէր իմ յուսացան .

Աբրահամներ, Իսահակ,
Որոնք Քեզմով փրկուեցան:

Առ Քեզ նոքա դիմեցին.
Փրկիչ նոցա դուն եղար.
Յոյսեր վերայդ միշտ դըրին,
Եւ չամբռցան վայրապար:

Այլ ես որդն եմ և ոչ մարդ,
Պարծենալու բան չունիմ,
Մարդկանց առջևը նախատ,
Արհամարանք իմ աչքին:

Նախատեցին զիս տեսնողք,
Բերաններէն դուրս տալով,
Շատ անվայել զըրոցք խօսք,
Գլուխնին վրաս շարժելով:

— « Կը յուսար դա Աստուծոյ.
« Թող Աստուած զինքը պահէ.
« Եթէ նորա է հաճոյ
« Թող ազատէ ի չարէ »: —

Յարգանդէ մօրս դու ի լոյս
Հանեցիր զիս, կեանք տալովդ:
Ի յըստեանց մօրս, միակ յոյսս
Ես, Աստուած իմ, Սաբաովթ:

Տըղայ օրէս մինչ ցայսօր,
Ես ըզՔեզ, Տէր, կը ճանչնամ,
Յորովայնէ քաղցրիկ մօր
Մինչև մըտնամ գերեզման:

Մի դու ինձմէ հեռանար,
Շատ մօտեցաւ նեղութիւնն.
Ինձ փրկութեան չիք հընար
Տեղէ մ'չունիմ օգնութիւն.

Ինչպէս անզուսպ զուարակք
Յարձակեցան թըշնամիքս,
Իբրև ցուլեր պարարակք
Պաշարեցին իմ չորս դիս:

Բացին իրենց գարշ բերան,
Ինչպէս առիւծն ամենի
Որ՝ մռնչէ սաստկածայն
Գնալով յանտառն որսի:

Մի բաժակաւ ջրի պէս
Հեղայ գետնի ես երես,
Ցիրցան եղան ոսկորներս,
Հալեցաւ սիրտըս ներսէս:

Չորացայ ես իբր խեցի,
Լեզուս կըպաւ առիքիս.
Քիչ մընաց որ՝ կենդանի,
Սև հողուն գիրկ տային զիս:

Չորս կողմս առին, ման եկան
Չարեացապարտ վատ մարդիկ,
Իբրև կատղած խումբ մի շան
Խոցոտեցին զիս հերիք:

Չեւքերս, ոտքերս ծակեցին,
Հաշուեցին իմ ոսկորներս.

Իբրև տեսիլ ցաւագին
Դարձան նայել իմ երես:

Բոլոր հանդերձքս, իրենց մէջ,
Այսոր, այնոր բաժնեցին,
Վիճակ արկին այնկէ վերջ
Պատմուճանիս առանձին:

Այլ դու Տէր իմ, մի՛ հեռու
Գընար, մինակ զիս թողլով,
Հասիր շուտ ինձ օգնելու
Ցըրուէ չարեացը ժողով:

Իմ թըշնամեացըս սուրէն
Առիւծներուն, շանց բերնէ,
Միեղջերուին կոտորէն,
Զիս կ'աղաչեմ ազատէ:

Ես քու անունդ գերապանծ
Եղբարցս առջև կը պատմեմ
Յեկեղեցին ժողոված
Քեզ օրհնութիւնք կը երգեմ:

Դուք Աստուծմէ վախցողներ
Երգեցէք Տեառն օրհնութիւն,
Դուք Յակովբայ զաւակներ
Գովեցէք Տեառն անուն:

Դու իսրայել, ջերմեռանդն
Պաշտէ զԱստուած. քանզի նա
Զմերժեց խեղճն և աղքատ,
Գըթաց նոցա միշտ վերայ:

Ես գոհութիւն, առ Քեզ Տէր,
Վերառաքեմ միշտ պիտի.
Թող կատարուին իմ ուխտեր
Երկիւղածացդ առաջի:

Թող աղքատներն կըշտանան
Առատ ուտեն ու խըմեն.
Եւ Աստուծոյ միշտ փառք տան
Ուրախ զուարթ սըրտերն շէն:

Թող աշխարհիս բոլոր ազգք
Դառնան յԱստուած կենդանի,
Երկիր պատմեն նմա՝ որ
Տէրն է երկնի և երկրի:

Նոյն և պարարտք աշխարհի
Հարկաւ կ'ինկնան, խոնարհին
Երբոր մահն մօտ կը հասնի,
Շուտ կ'իմանան չափերնին:

Այլ ես գիտեմ. Աստուծով
Կամ ու կ'ապրիմ. իմ զաւակ
Պիտի պաշտէ սորա վախով
Իւր արարիչն համարձակ:

Արդարութիւնն Աստուծոյ,
Պիտի լինի բաց յայտնի.
Օրէնք գըթոյ և սիրոյ
Պիտի տիրեն աշխարհի:

Ի Բ

Տէր, հովուէ զիս գըթառատ,
Որ լինիմ ես բաղդաւոր,
Քեզ աչքս յառած եմ անթարթ
Յոյսըս վըրադ է բոլոր:

Դաւարագեղ ի յարօտ,
Ուր խոխոջան ջուրք վեր վար,
Եղիր հոգւոյս առաջնորդ,
Տար զիս այն տեղ անմոլար:

Խելքըս գըլուխըս եկաւ,
Արդարութեան սուրբ ճամբուն
Ինքն առաջնորդ ինձ եղաւ
Փառաւորել իւր անունն:

Գաւազանիդ տակ խոնարհ
Գըլուխս ի վայր կը ծըռեմ.
Եղիր անձիս մըխիթար,
Ձի ես նըկուն ծառայդ եմ:

Առատահաց մեծ սեղան
Պատրաստեցիր իմ դիմաց
Երբ նեղիչներս տեսան զայն
Խըռովեցան շրփոթած:

Գըլուխս օծած սուրբ իւղով,
Ձեռքըս բաժակ անապակ
Ըզմայլեցայ, Տէր, Քեզմով
Գոհութիւն Քեզ, հազար փառք:


Ողորմութիւնդ իմ հետս է,
Մինչև ի խոր ծերութիւն
Եւ անբաժան միշտ ֆեզմէ.
Բընակութիւնս է քոյ տուն:

Յըցուր ինձի ճանապարհ,
Ընդ որ ես գամ դէպ ի ֆեզ.
Ձի առաջնորդ անմոլար
Միակ գիտեմ, Տէր, ըզֆեզ:

Ազատէ զիս և փըրկէ
Իմ թըշնամեացըս ձեռքէն.
Առ ֆեզ հոգիս կը դիմէ
Տէր, դու ես իմ ապաւէն:

Սովորեցուր ինձ Աստուած
Կատարելու քոյ սուրբ կամք.
Տուր ինձ Հոգիդ շնորհաց
Ուղեցոյց դէպ ի քոյ յարկ:

Քոյ սուրբ անուանըդ համար,
Փըրկէ հոգիս մահուանէ
Քոյին կամօքըդ արդար
Նեղութենէ ազատէ:



Ի Բ*

Տէր է հովիւս, առաջնորդ,
Ինձ ոչ մի բան չի պակսիր.
Դաւար ունիմ ես արօտ,
Ուր վազեն ջուրք հեշտալիր:

Տուաւ հոգւոյս զօրութիւն.
Որ իւր վախով, անսասան՝
Արդարութեան սուրբ ճամբուն
Մէջը՝ գընալ ես կարնամ:

Այլ թէ մըտնամ ես յանկարծ
Մահուն հովիտն սևաստուեր,
Անտի կ'ելնամ անկասկած,
Ձի դու հետս ես, հըզօր Տէր:

Քու ցուպն և Քու գաւազան
Ինձ կու տան միշտ զօրութիւն.
Դու կը հասնիս օգնութեան,
Ձեռք տալով ինձ պէտք ժամուն:

Պատրաստեցիր իմ առջև
Առատահաց մեծ սեղան,
Որ թըշնամիքս ակներև
Քու իմ վերայ գութն տեսնան:

Իւղով գըլուխս օծեցիր,
Բաժակս լեցուն է գինւով.

* Սոյն սաղմոսը կրկին տեսակ տաղաչափուած գտանք
Հ. Ք. Քուշներեանի ձեռագրաց մէջ:

Ողորմութիւնդ երկնաձիր
Պարգևեցիր գըթալով:

Բոլոր իմ կեանքս, առ Քեզ Տէր
Կը նուիրեմ. Քու տանըդ մէջ
Կը փափաքիմ իմ օրեր
Անցընելու մինչև վերջ:

Ի Գ

Տեառն է երկիրս, և ամէն ինչ
Որ՝ նորա մէջ գըտնուին.
Աշխարհս և իւր բընակիչ
Որ՝ ցիր կ'ապրին այս այն դին:

Նորա հիմք են մեծ ծովեր
Համատարած ջրերով.
Իբրև ծըխնի են գետեր,
Որք դըդըչեն վազելով: —

Աստուծոյ լեռն ելնալու
Ո՞վ կարող է դէպ ի վեր.
Եւ ո՞վ կարնայ կենալու
Այն սուրբ տեղին անվեհեր:

— Նա՛ որոյ ձեռք սուրբ մաքուր,
Եւ ունի սիրտ անարատ.
Որ չերդւընցաւ երբէք զուր,
Եւ չընենգեց ոչ մի մարդ:

Նորա վերայ օրհնութիւն
Երկնաւորին միշտ կ'իջնայ,

Պէտք ատենին օգնութիւն
Նա իւր փըրկչէն կը գըտնայ:


Այդպիսի մարդը միայն
Աստուծմէ չի ամբնար.
Սապէս և ճետն Յակովբայն
Յանկայ տեսոյդ հրաշափառ:

Իշխանք, դըռներդ վեր առէք.
Թող բացուին դուռք յաւիտեանց.
Բաց և արձակ մուտք տուէք
Թագաւորին մեր Փառաց:

— Այդ ի՞նչ փառաց թագաւոր. —
Նա՛ զօրեղ Տէրն զօրութեանց,
Պատերազմի մէջ հըզօր.
Նա՛ թագաւորն է փառաց:

Իշխանք, դըռներդ վեր առէք,
Թող բացուին դուռք յաւիտեանց.
Բաց և արձակ մուտք տուէք
Թագաւորին մեր փառաց:

Սա՛ ի՞նչ փառաց թագաւոր. —
Դա՛ ինքն Տէրն է փառաց.
Տէր և իշխան մեծազօր
Դա՛ թագաւոր, զօրութեանց:



Ի Դ

Աչքս վերցուցի դէպ ի Քեզ .
Յոյսըս վըրայդ եմ դըրած ,
Ամօթապարտ զիս չանես
Չըլինիմ ծաղր թըշնամեաց :

Որոնց որ յոյսը դու ես ,
Նոցա վերայ ողորմէ .
Թող անօրէնն աներես ,
Ամօթահար ամաչէ :

Դու ինձ ցըցուր ճանապարհ
Որով գընամ ես ուղղորդ ,
Դէպ ի ուղիդն և արդար
Եղի՛ր հոգւոյս առաջնորդ :

Որ ինչ լաւ է՝ ճըշմարիտ ,
Սովորեցուր ինձ սիրել .
Զի Աստուած իմ , դու ես . միշտ
Յոյսըս վըրայդ եմ դըրել :

Ողորմութիւնք , գըթութիւն
Ուր՝ չունին չափ և սահման ,
Թող ծառայիդ , խեղճ նըկուն ,
Վերայ այժմիկ երևնան :

Անգիտութեան , մանկութեան
Մեղք չար գործեր . մի՛ յիշեր .
Այլ յիշէ Քու գըթութիւն ,
Զի ողորմած ես , քաղցր Տէր :

Մեղաւորաց դու տուր դարձ .
Հեզ սըրտերուն և խոնարհ
Յըցուր գընալ անկասկած
Արդարութեան ճանապարհ :

Ով որ սլահէ Յայտնութիւն
Աստուածային, նորա ուխտ,
Ողորմութեան Սուրբ ճամբուն
Մէջ կը մըտնայ ևս անշուշտ :

Քու անունիդ համար . Տէր,
Իմին մեղքերս բազմազան,
Քաւէ, ջընջէ, մի յիշեր .
Զի ես սըրտանց կը զըղջամ :

Այն մարդը որ Աստուծմէ
Կը վախնայ . Տէրը նորա
Ուղիղ ճամբան կը ցըցնէ
Որ՝ անմուլար ընթանայ :

Նա կ'անցընէ իրեն կեանք
Խաղաղ, հանգիստ, անխըռով .
Մահուանէն վերջը՝ ժառանգք
Վայլեն երկիրըս խելքով :

Բարեպաշտից զօրութիւն
Է հանապազ Տէր ինքնին,
Որ իւր ուխտեր, Յայտնութիւնն
Պարզէ դընէ դիմացնին :

Աչքս Աստուծոյ եմ յառած
Որ՝ կարող է զիս փըրկել

Յորոգայթից ինձ լարուած
Ոտքս անվըտանք ազատել:

Նայէ վըրաս, Տէր Աստուած,
Եւ ողորմէ գըթառատ
Մի հատ մօրէս որբացած,
Անտէր մնացի ես աղքատ

Հազար ու մէկ նեղութիւն
Պաշարեցին սիրտս բոլոր,
Իմ վըշտերէն միակ դուն
Կարնաս փըրկել, Տէր հըգօր:

Տես իմ տանջանքս և տագնապ,
Նայէ՛ որչափ նեղուեցայ.
Ողորմէ ինձ գըթութեամբ,
Մեղքերս անտես դու արա:

Տէս թըշնամիքըս ի՛նչպէս
Շատուոր. ամենքդ մէկէն
Ինկած իմին ետևէս,
Անիրաւ տեղ գիս կ'ատեն:

Պահէ, փըրկէ գիս, Տէր իմ,
Անըզգամացը ձեռքէն:
Ամաչելու տեղ չունիմ.
Յոյսըս վըրադ դըրել եմ:

Ամբիծ, մաքուր խըղճմըտանք
Ամէն բանէ միշտ վեր է:
Իսրայելի փըրկչին փա՛ռք,
Նեղութենէ կը փըրկէ:

Ի Ե

Դատէ զիս Տէր. քանզի ես
Ամբիծ խըղճով վարուեցայ.
Յոյսըս դըրած եմ ի Քեզ.
Ինձ վախնալու տեղ չըկայ:

Փորձէ զիս Տէր, ու քըննէ
Սիրտիս խորերն ինչ որ կայ.
Ձի քաշուելով ես Քեզմէ,
Արդար ճամբով ընթացայ:

Սուտակասակաս մարդկանց մօտ
Ձի նըստայ ես, կանգ չառի.
Անօրինէն նենգաժոտ
Ես միշտ հեռու քայլեցի:

Չարագործաց պիղծ ժողովն՝
Միշտ ատեցի իմ մըտքէս.
Ամենևին նոցա քովն՝
Ձի մօտեցայ ես վախէս:

Չեռքս սըրբութեամբ լըլալով
Կը մօտենամ համարձակ,
Քոյ սեղանիդ մօտիկ՝ քով
Ազատ ամէն ժամանակ

Որ՝ օրհնութիւնքդ բարձրաձայն
Երգեմ սըրտանց ու գովեմ,
Եւ հըրաշքներդ բազմազան
Տիեզերաց հըռչակեմ:

Վայելչութիւն Բոյին տան՝
Փափաքեցայ, սիրեցի.
Եւ Բու փառաց բնակարան
Միշտ մեծ պատուով յարգեցի:

Չարեացասլարտ մարդկանց հետ
Մի՛ կորսըներ իմ հոգիս.
Արիւնահեղ չարախեթ
Մարդոց՝ հեռու բռնէ զիս:

Որոց ձեռքեր շաղախուած
Են՝ անօրէն չար գործովք.
Աջը նոցա միշտ լեցուած
Է տոկոսեօք կաշառովք:

Կ'ուզեմ վարել կեանք ամբիծ,
Շիտակ ճամբով գընալովս.
Դու փրկէ զիս, գըթա ինձ,
Ես կ'օրհնեմ, Տէրդ, ի ժողովս:

Ի Զ

Տէր է իմ կեանքս, լոյս աչաց,
Ես չեմ վախնար ո՛չ մէկէ.
Տէր ապաւէն իմ կենաց.
Ինչո՞ւ դողամ ես մարդէ:

Երբոր չարերը մօտիկ
Գան, իմ արեան ծարաւով,
Դու պատժէ, Տէր, այդ մարդիկ
Նոյն իսկ իրենց չար գործով:

Թէ իմ վերայ զինավառ
Դիմէ բանակ մի ամբողջ.
Թէ յարձակին վայրապար
Թըշնամիներս մարտագոչ,

Սիրտըս անվախ անխըռով
Ես կը մընամ անսասան.
Քու վըրադ յոյս դընելով
Որ՝ կը լինիս ինձ պաշտպան:

Լըսէ ձայնիս սըրտադող,
Որ ինձ այս խօսք թելադրէ.
— Անշուշտ Դու ես այն ազդող.
« Իմին երեսըս խընդրէ »:

Քու տեսութեանդ փափաքով
Սիրտըս գոչէ դէպ ի ֆեզ.
« Դու իմ վերայ գըթալով
« Ցըցուր ինձի ֆու երես,

« Մի՛ ինձմէ դէմքըդ ծածկեր,
« Օգնական իմ, Տէր Աստուած,
« Զիս բարկութեամբ մի՛ մերժեր.
« Զի Փըրկիչ ես և գըթած: »

Հայրըս և մայրս զիս թողին.
Արդարութեան ճանապարհ
Սորվեցուր ինձ Աստուած իմ.
Որով գընամ անմոլար:

Իմ անօրէն, անըզգամ
Թըշնամեաց ձեռք զիս մի՛ տար.

Սուտեր վըրաս խօսեցան,
Ատեցին զիս չարաչար:

Ես կը հաւտամ աներկբայ
Որ՝ բարութիւնը դարձեալ
Երկրիս վերայ պիտ' իջնայ.
Այն օրն յուսամ ես տեսնալ:

Դու ևս ո՞վ մարդ քաջացիր,
Սիրտըդ ամուր միշտ բռնէ.
Յոյսդ Աստուծոյ վըրայ դիր,
Նա միշտ բարւոյն պաշտպանն է:

Ի Է

Առ Քեզ, Տէր իմ, կը գոչեմ.
Տուր իմ ձայնիս պատասխան.
Մի համարիր զիս արդէն
Մեռած իջած գերեզման:

Լքսէ Դու իմ աղօթքիս,
Յիս դարձիր Տէր գըթութեանց.
Ի տաճարիդ, դու տես զիս,
Ձեռքերս ի վեր տարածած:

Ամբարըշտաց կարգին մէջ
Մի՛ դըներ, Դու, եղկելիս.
Իբր չարագործ և անգեղջ
Մի՛ կորսըներ իմ հոգիս:

Անըզգամներ կը խօսին
Խաղաղ կերպով միշտ դըրսէն.

Այլ չարութեամբ սըրտերնին
Ապականած է ներսէն :

Նոցա սըրտին համեմատ
Տո՛ւր, Տէր, նոցա հատուցում-
թող որ իրենց գործեր վատ
Արժան պատիժը առնուն :

Նորա բընաւ չուզեցին
Դիտել գործերն Աստուծոյ,
Թող կործանին, պատժուին,
Զի արժանի չեն գըթոյ :

Օրհնեալ է Տէր, որ լըսեց
Իմ աղօթքներս, երկընքէն .
Թիկունք հասաւ և օգնեց,
Եղաւ անձիս ապաւէն :

Նորա վերայ յոյսս դըրի,
Նա տըլաւ ոյժ իմ սըրտիս,
Երգ երգեցի բերկրալի,
Զուարճացաւ և մարմինս :

Տէր, պահէ Քու ժողովուրդ
Ժառանգութիւնդ անսասան,
Հովուէ խնամէ, բազմագութ,
Այժըմ և միշտ, յաւիտեան :



Ի Ը

Տուէք որդիք Աստուծոյ,
Երկնաւորին պատիւ փառք,
Մատուցէք Տեառն լուսոյ
Ողջակէզ խոյք, զուարակք:

Տուէք նորա Սուրբ անուան
Փառաբանիչ օրհնութեամբք.
Երկիր պագէք, սըրբութեամբ
Տաճարին մէջ, բարձրելոյն:

Ջըրոց վերայ ձայն Տիրոջ,
Փառաց Աստուածն որոտաց.
Լըսուեցաւ ձայնն մեծագոյն,
Տէր ի վերայ շուրջ բազմաց:

Ջօրաւոր է Տիրոջ ձայնն
Որ՝ կը փըշրէ մայր ծառեր
Նոյն ձայնն մանրէ անխափան
Լիբանանու անտառներ:

Ոտքի հանեց հորթու պէս
Սիրիոն և Լիբանան,
Միեղջերուի ձագ կարծես՝
Բոլոր ծառեր շարժ ելան:

Աստուծոյ ձայնն զօրաւոր
Բոցը կրակէն կը բաժնէ,
Լեռ և բլուր դար և ձոր,
Ամենք սարսին նորամէ:

Անապատներ դող կ'ելնան,
կը տատանին շուքի պէս,
Երբոր լըսեն Տիրոջ ձայն,
Նոյն անապատը կաղէս:

Աստուած կու տայ հըրաման
Եղջերուին ձագ բերելուն.
Ժամանակին կ'ունենան
Անտառք իրենց մերկութիւն:

Այլ բարձրելոյն ի տաճար
Միշտ կը լըսուի օրհնութիւն
Որ նորա մեծ փառքն, անճառ
կը քարոզին անդադրում:

Հեղեղներուն տիրաբար
Հրաման կ'անէ որ ցածնան.
Տիեզերաց մէջ անծայր
Թագաւորէ յաւիտեան:

Աստուած կու տայ զօրութիւն
Ժողովըրդեան սեփական,
Իւր օրհնութեամբ ամէն տուն,
Նա, պահպանէ անսասան:

Ի Թ

Բարձրր առնեմ գօեզ Աստուած,
Քանզի Դու ինձ օգնեցիր,
Խընդալ, ծաղրել թըշնամեաց
Դու իմ վերայ չը թողիր:

Հիւանդագին՝ ես Քեզմէ
Բըժըշկութիւն խընդրեցի .
Ձիս փըրկեցիր մահուանէ ,
Եւ պահեցիր կենդանի :

Սաղմոս ասէք դուք սրբեր ,
Օրհնեցէք Տեառն յիշատակ ,
Ձի սըրբութեանց Նա է Տէր ,
Յաւերժական նորա փառք :

Երկար չէ Տեառն բարկութիւն .
Իսկ բարութիւնը անհուն ,
Գիշերն արին ողբ լալիւն ,
Առտու եղաւ մեծ խընդում .

Յաջողութեանս ժամանակ
Ասացի ես , անսասան
Պիտի լինի իմ վիճակ
Այժըմ և միշտ , յաւիտեան :

Դուն՝ կամեցար և տուիր
Ոյժ , զօրութիւն ինձ հերիք .
Յանկարծ երեսդ դարձուցիր
Շըփոթեցայ ես սաստիկ :

Այն ժամանակ դէպ ի Քեզ
Գոչեցի ես լալագին .
« Քեզ ի՞նչ օգուտ արիւնէս ,
« Եթէ յանկարծ ես մեռնիմ :

« Հողը կարո՞ղ է միթէ ,
« Փառաւորել ըզՔեզ Տէր ,

« Ճըշմարտութիւնդ ո՞վ պատմէ
« Որ՛ հասկընան մարդիկներ » :

Բողոքիս ձայնը լըսեց .
Ողորմութիւնը հասոյց ,
Քուրձը հանեց վըրայէս .
Ուրախութեամբ սիրտս լըցոյց :

Փառաւորէ , ո՞վ անձն իմ ,
Քոյ Տէր Աստուած յարաժամ .
Սաղմոս երգէ սըրտագին
Կենարարիդ յաւիտեան :

L

Քեզ յուսացի Աստուած իմ .
Տո՛ւր յաւիտեան չամաչեմ .
Արդար կամօքըդ քոյին ,
Դու զիս պահէ ի չարէն :

Աղօթքներուս ականջ դիր ,
Փութա՛ , հասիր յօգնութիւն .
Դու ապաւէն իմ եղիր ,
Պաշտպանուելու ամուր տուն :

Որոգայթներ են լարած
Հակառակորդքս իմ չորս դին ,
Զըլինի որ յեղակարծ
Ես այնոնց մէջը գըլորիմ :

Հոգիս քեզի եմ յանձնած ,
Պահէ ամուր անվըտանգ ,

Ճըշմարտութեամբ անկասկած
Տուր ինձ լինել համարձակ :

Ես սընտոի կուռքերուն
Պաշտօն տուողը կ'ատեմ .
Յոյսըս ի ֆեզ հաստատուն .
Չեմ քաշուիր բնաւ ոչ մէկէն :

Քու փըրկութեամբ կը ցընծամ .
Թըշուաւութեանըս ատեն ,
Դու ինձ դարձար հայրախնամ ,
Փըրկեցիր զիս վըշտերէն :

Չթողուցիր զիս բընաւ դու
Մատնել ի ձեռն թըշնամուոյս ,
Այլ ցըցուցիր կոխելու
Հաստատուն տեղ ոտքերուս :

Ողորմէ , Տէր , նեղելոյս .
Հոգևով , մարմնով կը տանջիմ .
Տըկարացաւ աչքիս լոյս ,
Մընացի ես վըշտագին :

Կարճըցաւ կեանքը . ցաւով ,
Զօրքըս և ոյժս պակսեցան
Օրերս անցան հառչելով ,
Մինչև ոսկերքս չորացան :

Չէ թէ միայն թըշնամեացս ,
Այլ անարգ ես երևցայ
Նոյն առաջի դըրացեացս ,
Իբր վախնալու առարկայ :

Իմ ծանօթներս, բարեկամք,
Զիս տեսնալով փողոցին,
Տուին ինձ դառն անարգանք
Հեռու փախան գընացին:

Մարդկանց սըրտին մէջը ես
Համարուեցայ իբր մեռել.
Իբրև աման մի, կարծես,
Որ վաղուց է ջախջախուել:

Վըրաս շատ բան խօսեցան
Լըսեցի ես չորս կողմէս.
Ժողովեցան միաբան
Որ՝ զիս բաժնեն հոգիէս:

Այլ յուսալով ես ի Քեզ
« Տէրն ես, ասի, իմ կեանքիս,
« Ազատելու կարող ես
« Իմ թըշնամեաց ձեռքէն զիս »:

Յըցուր երեսդ լուսաւոր,
Քու հալածուած ծառային.
Ողորմութիւնդ հասցուր՝ որ
Ամօթապարտ չը լինիմ:

Թող ամբարիշտք ամըջնան,
Իջնան դըժոխք խորախոր.
Թող պապանձին համրանան
Շըրթունք, բերանք նենգաւոր,

Որ կը խօսին համարձակ
Արդարոյն դէմ. բիւր չարիքն

Արհամարանք, անարգանք
Հազար և մի նախատինք:

Այլ ո՞րչափ մեծ է, Աստուած,
Ողորմութեանդ քաղցրութիւն,
Զոր կը պահես երկիւղած
Ծառաներուդ համար Դուն:

Նոցա Դու Տէր ես պաշտպան
Հակառակորդ մարդկան դէմ,
Եւ կը պահես անսասան
Նենգաւոր չար լեզուէն:

Օրհնե՛ալ ես, իմ ապաւէն,
Որ կը պահես անկասկած
Զիս՝ թըշնամեացրս ձեռքէն
Իբրև ի բերդ ամրացած:

Մինչ շրփոթած, կ'ասէի
« Ընկայ Տիրոջս աչքէն ես » .
Դու լըսեցիր իմ ձայնի,
Որ վեր թըռաւ աղեկէզ:

Սուրբք՝ սիրեցէք Դուք ըզՏէր .
Նա արդարոց կը գըթայ .
Ամբարիշտներն աննուէր,
Կը պատժէ նա անխընայ:

Դուք՝ որ առ Տէր յոյսերնիդ
Դըրած՝ կ'ապրիք, մի՛ վախնաք,
Այլ ապահով եղիք միշտ
Զի Տէրն ունիք ձեզ կըռնակ:

Լ Ա.*

Երնե՛կ անոնց, որոց՝ Տէր
Տուաւ մեղաց թողութիւն,
Եւ ամէն մի յանցանքներ
Մընաց ծածուկ ի թաքուն:

Այլ բիւր երնե՛կ այն մարդուն,
Որոյ Աստուած աչք գոցեց
Պակասութեանց. նա լեզուն
Նենգով մեղքով չաղտոտեց:

Ես լուռ՝ անկիւն մի քաշուած,
Սրտանց մեղքերս զըղջացայ
Գիշեր ցորեկ եղայ լաց,
Մինչ ոսկորներս մաշուեցայ:

Քու ձեռքըդ, Տէր, սաստկապէս
Գըլխուս վըրայ ծանրացաւ.
Սիրտըս ծակեն փուշի պէս
Խըղճմըտանքիս խայթն ու ցաւ:

Բոլոր մեղքերս ես յայտնի,
Առանց բան մի ծածկելու,
Խոստովանիմ մի առ մի.
Այլ ողորմէ ինձի Դու:

Միտքըս հաստատ դըրած եմ,
Որ ամբարիշտ չար գործերս,

* Կը գտնուէր նաև 1886ի ԲագմաՎիպուս, էջ 226. Բ:

Թէ քո առջևըդ պատմեմ,
Դուն անպատճառ պի' ներես:

Որչափ արդար մարդ լինի
Այլ միշտ պէտք է խոնարհած
Աստուծոյ գուլթն պաղատի.
Զի ո՞վ կայ սուրբ ի մեղաց:

Հեղեղի պէս թէ իջնան
Յերկնից պատիժ պատուհաս,
Արդար մարդիկ անսասան
Միշտ կ'ազատին անվընաս:

Նեղութիւններըս շատ են,
Սիրտըս դողայ ի ծոցիս,
Աստուած, միակ ապաւէն,
Գըթա՛ վըրաս, պահէ զիս:

Բերդի նըման պատեցին
Թըշնամիներս չորս կողմէ,
Յընծութիւն իմ և յոյս իմ,
Նոցա ձեռքէն զիս փըրկէ:

Դու ասացիր թէ՛ « Ըգքեզ
Աչքէ պիտի չըձըգեմ,
Ինչ բանի որ ձեռք զարնես,
Յաջողութիւն շընորհեմ »:

Մի՛ գըրաստուց նըմանիք.
Նոցա պէտք է սանձ երկաթ,
Նորա չունին խելք կամ միտք.
Ծառայ են ձեզ հընազանդ:

Մեղաւորաց պատրաստ կան
Խիստ շատ տեսակ տանջարանք,
Բայց Աստուծոյ որք յուսան՝
Թող լինին միշտ համարձակ:

Ուրախ արդարք, շէն կեցիք,
Աստուած է ձեր տէր պաշտպան:
Դուք որ շիտակ սիրտ ունիք՝
Պիտի խընդար յաւիտեան:

Լ Բ

Ցընծացէք, ո՞վ արդարներ,
Ձի կը վայլէ ձեր բերնին .
Երգ օրհնութեան միշտ առ Տէր
Քաղցրիկ երգել՝ սըրտագին:

Սաղմոսարան և քընար
Դաշնակաւոր, քաղցրալուր,
Թող հընչեն Տեառն ի տաճար,
Աշխարհիս մէջ ընդհանուր:

Նոր օրհնութիւնք, սաղմոսք նոր
Շէն շէն ամէնքդ միաբան,
Երգեցէք Տեառն երկնաւոր
Տաւիղն մեղմիկ զարնելով:

Տիրոջ պատգամ՝ ճըշմարիտ,
Գործերն են սուրբ՝ անարատ,
Նա կը սիրէ վարել միշտ
Իրաւարար՝ արդար դատ:

Ողորմութեամբ Բարձրելոյն
Լի է երկիրս. մէկ խօսքով՝
Երկինք դըրաւ հաստատուն
Իւր լուսաւոր զօրքերով:

Ինչպէս ի տիկ, ջուր ծովուն
Բոլորն մէկ տեղ ժողովեց.
Երկրիս անդունք նոցա տուն՝
Աւազն՝ սահման որոշեց:

Պէտք է վախնայ Աստուծմէ
Երկիրս բոլոր. սիրտ ի թունդ
Բնակիչները պէտք է
Կենան դիմաց համագունդ:

Ձի նա ասաց. « Եղիցի »
Իսկոյն աշխարհքըս եղաւ.
Հըրամայեց, — յայտնուէր, —
Տիեզերք բոլոր յայտ եկաւ:

Հեթանոսաց կը ցըրուէ,
Տէր, խորհուրդներ. իշխանաց
Ժողովըրդոց, կ'անարգէ
Գաղտնի մըտքերն չարիմաց:

Աստուծոյ միտք և խորհուրդ
Պիտի մընան յաւիտեան.
Մի սերունդէ միւս սերունդ
Պիտի անցնին անխափան:

Երանելի է այն ազգ
Որոյ տէրն է ինքն Աստուած,

Ընտրուած է նա ժառանգ
Երկնաւորին գըթութեանց :

Նայեցաւ Տէր յերկնից վայր,
Տեսնալ մարդկանց կեանք և կաց .
Իւր սուրբ գահէն ի խոնարհ
Վիճակ երկրիս բընակչաց :

Զատ զատ նոցա բոլորին
Պարգևեց սիրտ խըղճմըտանք .
Պիտի դատէ առանձին
Ամէն նոցա գործն արարք :

Իրեն շատւոր զօրքերով
Ապահով չէ թագաւորն .
Եւ ոչ հըսկայն իւր ուժով
Ամենքէն վեր, զօրաւոր :

Անկարող է ձին ուժեղ,
Վազս առնըլով փութաքայլ,
Ազատելու ամէն հեղ
Ի վըտանգէ իւր հեծեալ :

Այլ Աստուծոյ աչք՝ վերէն
Երկիւղածներն կը դիտէ .
Որոնք իրեն կը դիմեն
Կը պահպանէ վըտանգէ :

Նոցա երբէք չի թողուր
Որ ի զուր տեղը մեռնին .
Նոցա մարմնոց կերակուր
Կուտայ ճիշդ պէտք ատենին :

Մենք համբերենք մեծայոյս
Սիրով դիմենք առ Աստուած .
Նա օգնական ամենուս .
Եւ պահպանիչ ի վըշտաց :

Նորամով շէն թող լինին
Մեր սիրտն , հոգի յարածամ ,
Նորա անուն անմեկին
Լինի վահան մեր վըրան :

Ողորմութիւնդ տուր Տէր մեզ ,
Վասն զի մեք հաւատով
Կը դիմեմք միշտ Տէր առ Քեզ
Հաստատ յուսով և սիրով :

Լ Գ

Պիտի օրհնեմ անդադրում ,
Քու փառքըդ մեծ , Տէր Աստուած ,
Առաւօտէ մինչ իրկուն
Թէ և լինիմ մէջ վըշտաց :

Պիտի պարծիմ , Տէր Քեզմով
Ես ամէն տեղ , համարձակ .
Որ՝ հեզ մարդիկ լըսելով
Ուրախանան և տան փառք :

Դուք , ինձի հետ ձայնակից ,
Աշխատեցէք մեծցընել
Անուն Տիրոջըս երկնից
Եւ ընդհանուր քարոզել :

Ես փընտուեցի գըտայ Տէրս,
Նա ինձ հասաւ նեղ օրիս,
Լըսեց սըրտանց աղօթքներս
Եւ թեթևցուց իմ հոգիս:

Ո՛վ որ դարձաւ առ Աստուած,
Փայլեց երեսը լուսով.
Երբէք մարդկանց նա դիմաց
Չիքաշուեցաւ ամօթով:

Այս խեղճ աղքատը դիմեց
Աստուծոյ, լի հաւատքով.
Նորա՛ ձայնին Տէր լըսեց
Վըշտաց փըրկեց զինք շուտով:

Հըրեշտակ Տեառն կը հըսկէ
Երկիւղածաց միշտ չորս դին
Որ՛ յեղակարծ մի գուցէ
Գայթակղին ու մոլորին:

Համտես արէք ու տեսէք
Ի՛նչպէս քաղցր է մեր Աստուած.
Այն մարդուն է բիւր երնէ՛կ
Որ՛ յոյս Տիրոջն է դըրած:

Վախցէք սուրբեր Աստուծմէ,
Դուք կը լինիք երջանիկ.
Ո՛վ Աստուծմէ կը վախէ,
Ունի ամէն բան հերիք:

Մեծամեծներ, առիւծներ
Մնացին քաղցած և աղքատ.

Իսկ Աստուծոյ ծառայներ,
Վայելեցին բարիք շատ:

Եկէք իմ մօտըս, որդիք.
Խըրատներուս ուշ դըրէք.
Աստուծոյ վախն կը սորվիք,
Որ կը լինի ձեզ միշտ պէտք:

Չէ՞ որ ամէն մարդ կ'ուզէ
Երկար, ապրիլ յաշխարհի.
Կը փափաքի ի սըրտէ
Տեսնալ օրեր բարելի:

— « Լեզուիդ չափ դիր որ՝ խօսք չար
« Ամենևին չըխօսի.
« Բերանդ լինի սուրբ արդար.
« Նենգութենէ միշտ հեռի:

« Հեռու քայլէ դու չարէն,
« Բարիք արա՛ ամենուն.
« Խաղաղութեան ետևէն,
« Գիշեր ցորեկ գընա՛ դուն »: —

Արդարներուն վերայ բաց
Է Աստուծոյ գըթած աչք.
Նոցա աղօթքը, սըրտանց,
Կը լըսեն Տեառըն ականջք:

Չարագործաց վերայ նա
Կը դարձընէ խոժոռ դէմք,
Որ աշխարհքէս շուտ վերնայ
Յիշատակնին և չար հետք.

Իսկ արդարներ, վըշտագին,
Երբ դիմեցին առ Աստուած,
Լըսեց նոցա աղօթքին,
Դարման տարաւ շուտ վըշտաց:

Մաշուած կոտրած սըրտերու
Ձայնը իսկոյն կը լըսէ:
Խոնարհ հոգին փըրկելու
Նա յարածամ պատրաստ է:

Նեղութիւններ անպակաս
Պէտք է կըլին արդարներ,
Բայց բոլորէն անվընաս
Կը պահպանէ զիրենք Տէր:

Նոցա ոսկերք խընամքով
Եւ ապահով կը պահուին
Որ՝ չը լինի մի կերպով
Փըշրուին ու կորսըւին:

Չարը չարով կը կորչի.
Այլ արդարոյն ատեցող՝
Իւր գործով ինք կը պատժի.
Շուտ կը մըտնայ ի սև հող:

Կը փըրկէ Տէր, հայրաբար,
Իւր ծառայիցը հոգին:
Նոքա բընաւ չեն զըղջար
Որ՝ Աստուծոյ յուսացին:

Լ Դ

Գատէ, Տէր իմ, այն մարդիկ՝
Որք զիս դատի քաշեցին.
Մարտ դիր, յաղթէ թըշնամիքս
Որք ինձի դէմ կը կըռուին:

Ա՛ռ դու զէնքերդ և վահան
Հասիր ինձի օգնութիւն.
Մերկացողը սուրդ, թող տեսնան
Որ՝ չի մըտնան իմ արիւն:

Թող հալածիչքս իմանան
Որ՝ դու ես իմ փըրկութիւն.
Եւ կը հասնիս, անխափան
Ինձ օգնելու, պէտք ժամուն:

Թող ամաչեն կորակոր,
— Ամօթ իրենց երեսին. —
Որք ետէս ինկան որ՝
Կորսընցընեն իմ հոգին:

Ինչպէս որ հովը փոշին
Հալածական կը վարէ.
Թող հըրեշտակդ երկնային
Նեղէ զիրենք ու ցըրուէ:

Թող խաւարի ճամբանին.
Հըրեշտակէդ հալածուած
Գայթակղին ու գըլորին,
Մընան մէջ տեղ անճըրկած:

Ջո՛ւր տեղ ինկան ետևէս
Ու լարեցին որոգայթ,
Կ'ուզէին որ ինկնամ ես
Իրենց փորած խորխորատ:

Թող որ փորած փոսերնին
Իրենց լինի գերեզման,
Եւ ոչորած լարերնին
Կապէ ոտքերն անգուման:

Այլ փըրկուած ֆեզմով ես
Ուրախանամ մեծապէս,
Լեզու առած ոսկորներս
Ասեն. « Տէր ո՛վ նըման ֆեզ »:

Ձի փըրկեցիր խեղճն՝ անգօր
Ջօրաւորին ճիրանէն.
Այլքատը չես թողուր որ՝
Խըւէ, տանջէ անօրէնն:

Սուտ վըկայներ դէմս ելած,
Ինձ ըսկըսան հարցանել.
Ես մընացի գումարած
Չըզիտելով ի՛նչ ասել:

Բարի սըրտիս փոխանակ,
Չարիք ինձի հատուցին.
Նախատակո՞ծ միս—մինակ,
Մարդկանց աչքէն ձրգեցին:

Նոցա խեղճ, նեղ օրին՝ ես
Ծոմով պահքով քըրձազգեաց

Աղօթեցի . աղօթքներս
Իմ ծոցս դարձուց ինքն Աստուած :

Ինչպէս եղբայր կարեկից
Կը քայլէի գըլխակոր .
Տըրտում տըխուր ցաւալից
Ինչպէս մի մայր սըգաւոր :

Այլ երբոր ես խեղճըցայ ,
Ուրախ՝ չորս դիս ման առին .
Նախատինքներ անխընայ
Գըլխէս ի վայր թափեցին :

— Ձը գիտեմ դեռ ես պատճառ . —
Կըրճըտելով ատամներ ,
Սիրտս խոցեցին անդադար
Ասելով սո՛ւտ փուտ խօսքեր :

Մինչև երբ Տէր համբերես
Պիտի դոցա նենգութեան .
Անոր , անտէր մնացի ես ,
Ձեռքդ երկընցուր օգնութեան :

Այն ատեն ես բարձրաձայն
Կ'երգեմ Քեզի գոհութիւն ,
Ուր ժողված են միաբան
Ժողովըրդոց բազմութիւն :

Իմ թըշնամեացս մի թողուր ,
Խընդալ վըրաս հեզնելով ,
Ու նախատել զիս ի զուր ,
Մէկմէկու աչք անելով :

Խաղաղութիւն լոկ խօսքով
Կը քարոզեն. այլ իրենք
Կը ցըցընեն միշտ գործով՝
Խարդախութիւն դաւ ու նենգ:

Մեծ մեծ բացած բերաննին,
« Այո՛, այո՛ մեք աչքով
« Տեսանք ամէն բան, ասին,
« Գիտենք ամէն բան տեղով »:

Լքեցիր, Տէր, դու ուրեմն
Մի՛ լքուելով համբերեր,
Հեռու մ'երթար դու ինձմէն,
Թողլով մինակ զիս անտէր:

Զարթիր, Տէր իմ, և փութա՛
Դատել իմին արդար դատ,
Բոլոր աշխարհք թող տեսնայ
Թէ՛ արդար է Գու ծառայդ:

Զը լինի որ թըշնամիք
Ուրախանան ու ասեն,
« Շատ լաւ եղաւ, խըղդեցինք
« Կորաւ գընաց մեր միջէն »:

Թող ամաչեն կորակոր
Որք՝ նեղ օրիս խընդացին.
Մեծ մեծ խօսքերը բոլոր
Ի գո՛ւր եղաւ բընաւին:

Որոնք սըրտանց կ'ուզէին
Արդարացած զիս տեսնալ,

Փափաքներուն արդ հասին,
Ուրախացան ամենքն այլ:

Ու ասին թէ՛ « Աստուած մեծ
« Իւր սիրելի ծառային
« Խաղաղութիւն պարգեւեց,
« Հասաւ նրմա նեղ օրին »:

Այլ իմ լեզուս հըռչակէ
Արդարութիւնդ հանապազ,
Երախտագէտ ի սըրտէ
Քանի որ ինձ կեանք կու տաս:

Լ Ե

Մեղք գործելով՝ անօրէնն
Ասաց մըտքէն թէ՛ « Ի զո՛ւր,
— « Բոլոր մարդկան հընարք են, —
« Աստուծոյ վախն և երկիւղ »:

Կեղծեց իրեն վարքն ու բարք,
Սուտակասպաս ձեւերով,
Գործեց ամէն մեղք անարգ,
Աստուծոյ դէմ ելնալով:

Բերնէն ելած խօսքին մէջ
Չըկայ ուղիղ ոչ մի բան.
Ինչպէս որ սիրտն է անզեղջ,
Նոյնպէս շըրթներն՝ դաւաճան:

Չուզեց գիտնալ նա բարին
Գիշեր ցորեկ անդադրում,

Հետևեցաւ միշտ չարին
Նոյնպէս ի մէջ անկողնոյն :

Գընաց նա միշտ այն ճամբով,
Որոյ վերջն էր վա՛տ անշուշտ .
Մեղքն՝ կամաւոր գործելով,
Մատնուեցաւ ի կորուստ :

Ողորմութիւն մեծ է Տէր,
Երկրէս կ'ելնայ դէպ յերկին .
Ճըշմարտութիւնըդ ի վեր,
Մինչև ամպեր կու հասնին :

Արդարութիւնդ՝ իբր լեռներ,
Իրենց տեղ միշտ հաստատուն .
Իրաւունքդ՝ խոր անդունդներ,
Որոց անհաս՝ խելք մարդուն :

Արարածոց ամենուն
Վերայ՝ գըթաս ի գորով,
Մարդ եղել է, անասուն,
Բոլորն կ'ապրին, Տէր, Քեզմով :

Ողորմութիւնդ՝ շատ է, Տէր,
Որդիք մարդկան, Քոյ թևիդ
Շուքին ներքև, անվեհեր
Կ'ապրին ազատ և հանգիստ :

Պարարտ հացիւ Քոյին տանդ
Կը կերակրես դուն մարդիկ,
Եւ ուխ քաղցրիկ փափկութեանդ
Կու տաս նոցա ըմպելիք :

Կենդանութեան աղբիւր ես
Որ՝ կեանք կու տաս ամենուս,
Եւ լուսափայլ Քոյ երես
Մեզ կը ծագէ կենաց լոյս:

Ողորմութիւնդ նոցա տո՛ւր,
Որոնք ճանչցան ըզՔեզ Տէր,
Արդարութիւնը ցըցուր,
Որոց մաքուր են սըրտեր:

Թող չը կոխէ իմ վերայ
Ամբարտաւանն՝ պիղծ ոտքով՝
Մեղաւորին ձեռք արա
Հեռու ինձմէ, գըթալով:

Թող կործանին անօրէնք
Որոնք՝ առանց խըղճելու,
Գործեցին շատ դաւ և նենգ.
Թող չի կարնան կանգնելու:

ԼԶ

Մի նախանձիր դուն՝ սըրտաբեկ՝ տեսնելով
Անօրինին յաջողութիւն, և վարք չար.
Ձի ինչպէս խոտ նա կը ցամքի խիստ շուտով,
Կ'անհետանայ՝ ինչպէս դաշտին դեղ դալար:

Յոյսդ Աստուծոյ միշտ վըրան դիր, ու արդար,
Շընորհալի վարէ դու կեանք. և տես թէ
Ի՞նչպէս Աստուած, գորովելով հայրաբար,
Կը պահպանէ ըզքեզ ամէն վրտանգէ:

Յայտնէ Տիրոջդ քոյին ամէն պէտք, պիտոյք,
Եւ աղօթէ սըրտանց յուսով և սիրով.
Կը կատարէ Նա քու փափաքդ և հաճոյք.
Առատապէս արդար սըրտիդ վարձ տալով:

Նա ինքն Աստուած, պիտի ցոյց տայ աշխարհի,
Արդարութիւնդ, պայծառ մաքուր լուսի պէս.
Պիտի փայլին համատարած, ակն յայտնի,
Քու իրաւունք՝ ինչպէս արև յօրին կէս:

Եղիր հըլու դու Աստուծոյ միշտ ծառայ,
Հանգիստ սըրտով պաշտէ ստեղծողդ անկասկած.
Տակնու վերայ վըրդովելու հարկ չըկայ
Երբոր տեսնաս յաջողութիւն չար մարդկանց:

Կու գայ ատենն՝ կը պատժուին չարաչար
Անօրէններն՝ որոնք Տիրոջն դէմ կեցան.
Իսկ Աստուծոյ յուսացողներն կամակար,
Կը ժառանգեն երկրիս վայելք անխափան,

Համբերէ քիչ մ՝, ահա չըկայ ամբարիշտն,
Կորսուեցաւ անհետ ճետով աշխարհքէս.
Իսկ հեզն՝ խոնարհ կը ժառանգեն երկիրս միշտ,
Երկար, խաղաղ կեանք վարելով և աստէնս:

Կըրճըտելով ամբարիշտն իւր ատամներ
Առաքինւոյն վընասելու կ'աշխատի.
— Չըգիտեր որ կարճըցած են իւր օրեր. —
Աստուած վերէն զայն տեսնալով ծիծաղի:

Մերկացուցին իրենց սուրեր մեղաւորք,
Եւ դեաղները լարեցին. որպէս զի

Ըսպանանեն աղքատն, տընակն և զայնոնք,
Որոնք ունին Աստուծոյ վախն ի սըրտի:

Այլ տես, սուրերն յետ դառնալով նոցա սիրտն
Խոցոտեցին, փըշրուեցան աղեղներ:
Թող իմանայ ուրեմն չարսիրտ ամբարիշտն
Որ՝ վերը կայ աղքատներուն պաշտպան Տէր:

Արդարն իրեն ունեցածով սակաւիկ,
Քան հարուստ ճոխն է աւելի երջանիկ.
Պիտի ջաղխեն ամբարըշտաց ձեռքն երկինք,
Մինչ արդարոյն Աստուած է տէր՝ զօրավիգ:

Ամբիծ մարդկանց կեանքը Տիրոջ է յայտնի.
Նոցա տուն տեղն Նա կը պահէ հաստատուան
Սովի ատեն կարօտ չեն մնար չոր հացի.
Եւ գոհ սըրտով կը կըրեն վիշտ նեղութիւն:

Այլ ամպարիշտք կը մատնուին ի կորուստ.
Ինչպէս որ ճարպն մօտենալով կըրակի
Կը ճենճերի՝ մուխ կը դառնայ, ապա շուտ
Կը փըճանայ և օւռոյն մէջ կը ցըրուի:

Դրամ փոխ կ'առնու մեղաւորն ու յետ չի տար,
Մինչդեռ արդարն ողորմութիւն կը բաշխէ.
ԶԱստուած օրհնողք կը վայելեն այս աշխարհ,
Անիծողներն՝ չըքուին երկրիս երեսէ:

Աստուած կ'ուղղէ մարդուն գընացքը ոտքին
Նա ինքն կ'օրհնէ ամէն նորա ճանապարհ,
Զեռքէն բըռնած կ'առաջնորդէ ի բարին.
Թէ գայթակղի՝ չի թողուր որ ինկնայ վար:

Տըղայ էի՝ արդէն եկայ ծերացայ,
Այլ չըտեսայ բընաւ երբէք կեանքիս մէջ
Որ՝ արդարոյն զաւակ դըռներն հաց մուրայ
Եւ ինքը՝ նա արհամարուի, լինի խեղճ:

Ողորմութիւն բաշխէ արդարն ամէն օր,
Այն պատճառի Աստուած կ'օրհնէ նորա տունն: ...
Չարն մէկդի դիր, բարի գործեր արա որ՝
Այժմ և յաւէտ երջանկանաս նոյնպէս դուն:

Տէր իրաւունք և գըթած սիրտ կը սիրէ,
Իրեն սուրբերն կը պահպանէ անսասան.
Ամբարըշտաց տուներն հիմէն կը քակէ,
Իսկ արդարոց ամուր պահէ յաւիտեան:

Իմաստութիւն խօսի բերան արդարոյն,
Լեզուն կ'ասէ ճըշմարտութիւն անաչառ.
Տիրոջն օրէնք սըրտին խորեր ունին բոյն.
Շիտակ ճամբով կ'երթան ոտքերն անմոլար:

Արդարոյն դէմ կը դարանի մեղաւորն,
Ըսպաննելու հընարք՝ միջոց կը փընտռէ.
Այլ չի թողուր զնա դատաւորն երկնաւոր,
Եւ դատելով՝ դատէն արդար կ'արձակէ:

Յուսա՛ յԱստուած, պահէ նորա ճանապարհ,
Քեզ կ'օգնէ Տէր, որ սիրտ առնուս, բարձրանաս,
Եւ ժառանգես երկրիս բարիք: Անպատճառ
Դու կը տեսնաս մեղաւորաց պատուհաս:

Աչքովս տեսայ ամբարըշտին փառք շրքեղ,
Նա ինչպէս մայրն լիբանանու բարձրացած.

Դարձայ եկայ, չէր երևել նա մէջ տեղ,
Զինք փընտռեցի, տեղն անգամ էր կորսուած:

Դիտէ ըզգաստ 'ւ արդարախոհ մարդկանց կեանք,
Եւ տես ինչպէս խաղաղ կ'ապրին որդւոցմով.
Մինչ անօրէնք ճետով լինին չարսատակ,
Անցընելով կեանք ալէկոծ իբրև ծով:

Այլ փըրկութիւն արդարներուն Աստուծմէ
Շուտ կը հասնի, ժամանակի նեղութեան.
Կ'օգնէ նոցա Տէր, 'ւ ի չարէն կը փըրկէ,
Քանզի նորա յԱստուած եղան ապաստան:

Լ Է*

Բարկութենէդ, Տէր, սոսկամ.
Ողորմելով յիս դարձիր:
Ի՞նչպէս առաջըդ կենամ,
Զի ես հող եմ և մոխիր:

Սուր սուր նետերդ իմ վերայ
Արագ արագ թափեցան,
Թէ ձեռքդ այլ ևս ծանրանայ,
Ոգիս բերանըս կ'իյնայ:

Քանի որ իմ միտքս կու գայ
Քու բարկութիւնըդ արդար.
Հիւանդոտ սիրտս դող կ'ելլայ
Բըժըշկութեան չունիմ ճար:

* Այս յարասութիւնն ալ 1886ի Բագմավիայի մէջ տը-
պուած կայ. էջ 227. Գ:

Մեղքերս առաջս են կեցած,
Խըղճմըտանքս տակն ու վըրայ.
Ցաւը հասաւ ոսկերացս.
Վայ ինձ, Տէր իմ, ողորմեա:

Իմ անօրէն պիղծ մեղքեր,
Գըլխէս շատ վեր բարձրացան.
Եւ իբրև թէ մեծ բեռներ
Ուսիս վըրայ ծանրացան:

Հընցած վէրքերս փըտեցան.
Քանի որ ես կը յիշեմ
Մեծ մեծ մեղքերս մանկութեան,
Արիւն կ'անցնի իմ սըրտէն:

Տըրտում, տըխուր, սևերես
Մարմինս վէրքով ծածկուած.
Որո՞նն արդեօք դիմեմ ես,
Թէ չողորմիս դուն Աստուած:

Կը տանջըլիմ չարաչար,
Ողորմելի մընացի.
Արդեօք չըկա՞յ մի դեղ, ճար՝
Սըրտիս խորէն հառչեցի:

Իմ փափաքներս, ցանկութիւն
Տէր իմ, քեզի յայտնի է.
Ցաւերս, կըսկիծք, հեծութիւն
Մածուկ չեն դարձեալ քեզմէ:

Տակն ու վըրայ սիրտս, հոգիս
Ոյժ, զօրութիւնըս հատաւ.

Վա՛յ անճարակ, իմ գըլխիս
Աչքերուս լոյսն հալեցաւ:

Իմ ընկերներս մերձաւոր
Պաղ սլաղ վըրաս նայեցան.
Բարեկամներըս բոլոր
Հեռու ինձմէ քաշուեցան:

Մահուանս, արեանս ծարաւով
Դաւ՛ որոգայթ լարեցին.
Թըշնամիներս, չար լեզուով
Հազար տեղ խօսք խառնեցին:

Այլ ես իբրև խուլ դարձած
Ձըլըսելու միշտ զարկի,
Կամ կարծես թէ պասլանձած
Բերանս անգամ չըբացի:

Իբրև թէ խուլ լինէի,
Որ երբէք խօսք չէ լըսած.
Կամ ի ծընէ համր իսկի,
Որոյ լեզուն չէ բացուած:

Յոյսըս միակ դու ես, Տէր.
Անշուշտ ականջդ կը հասնին
Իմ հառաչանքս, աղօթներ.
Տէս արցունքներս դառնագին:

Ասացի թէ մի՛ գուցէ
Վըրաս խընդան թըշնամիք.
Նոցա փափաքն ալ այն է
Որ կորսըլիմ, դառնամ չիք:

Ես չեմ փախչիլ տանջանքէ,
Ցաւերս աչացքս դիմաց.
Եթէ կ'ուզես՝ զիս սրատժէ,
Չեմ կենար դէմ քու կամաց:

Մեղքերս՝ յայտնի բաց կերպով,
Կը պատմեմ ես քու առջև.
Եւ կը ցաւիմ՝ յուսալով.
Մի հաներ յոյսըս դերև:

Թըշնամիներս՝ որ զո՛ր տեղ
Ատեցին զիս չարաչար,
Ջօրաւոր են և ուժեղ
Եւ բազմաթիւ անհամար:

Որոնք ինձի բարւոյ դէմ
Շատ չարիքներ հատուցին.
Արդարութեանս փոխարէն
Սուտ մուր վըրաս քրտեցին:

Մի թողուր զիս, Աստուած իմ,
Մի հեռանար դու ինձմէ.
Հասօզնութիւն, պաղատիմ,
Փըրկէ զիս չար մարդոցմէ:

Լ Ը

Միտքըս դըրի հաստատուն,
Ըզգոյշ լինել հանապազ
Որ՝ չըլինի իմ լեզուն
Խօսի աւել կամ պակաս:

Բերնիս դըրի պահապան,
Այն միջոց երբ՝ դէմս կանգնած
Խօսեցաւ չարն անըզգամ՝
Թիւր՝ և ներհակ իմ կամաց:

Ինչպէս մի համր—մուկնջ և խուլ—
Չը հանեցի խօսք բերնէս.
Այլ նեղութիւն, ցաւ անդուլ
Տանջեց սաստիկ զիս ներսէս:

Սիրտըս տաքցաւ ի ծոցիս,
Բորբոքեցան խորհուրդներս.
Քակուեցաւ կապը լեզուիս,
Եւ հարցուցի ես այսպէս:

« Տըցուր, յայտնէ Աստուած իմ,
« Ի՞նչ է իմ վերջս և վախճան.
« Օրերս կ'երթան ու կ'անցնին
« Ո՞ւր է նոցա կէտն՝ սահման:

« Չափուած, հաշուած են օրերս,
« Փուճ է իմ կեանքս ֆու դիմաց.
« Առ հասարակ շուքի պէս
« Կ'ոչընչանան կեանք մարդկանց »:

Իբր ուրուատիպ պատկերներ,
Վեր վար մարդիկ անդադար,
Կը ժողովեն մեծ գանձեր.
Բայց ի՞նչ վախճան, ո՞ւմ համար:

Այլ ես, աչքերս դէպ ի ֆեզ
Յառած, Տէր իմ, կը յուսամ:

Դու քաւէ իմ չար մեղքերս,
Չընեղէ՛ զիս անըզգամն:

Երբոր Դու Տէր իմ վերայ
Դարձար աչօք խիթալի,
Ես չիմացող ձևացայ,
Իսկի բերանս չըբացի:

Ա՛հ, դադրէ, Տէր, մի՛ պատժեր
Իմ թերութիւնքս չարաչար,
Թէ՛ այլ կըրկնես հարուածներ,
Դիմանալու չունիմ կար:

Եթէ մարդկանց մեղքերուն՝
Արդար պատիժն ուզես տալ,
Ինչպէս ոստայն սարդերուն
Կը փրճանան ամէնքն այլ:

Տէր իմ, լըսէ աղօթքիս,
Խընդրուածքիս ականջ դիր,
Եւ արտասուաց իմ աչքիս
Անկարեկիր մի՛ լինիր:

Պանդուխտ, նըժդեհ և օտար,
Երկրիս վերայ անցաւոր,
Պիտի երթամ այլ աշխարհ,
Ինչպէս իմ հարքըս բոլոր:

Այլ քանի որ ես աստէն
Կ'ապրիմ կենօք վըշտագին,
Շունչ քաշելու տո՛ւր ատեն.
Գըթա՛ վըրաս, Աստուած իմ:

Լ Թ

Համբերելով ըսպասեցի շատ ատեն,
վերջապէս Տէր լըսեց ձայնին աղօթքիս,
Եւ դուրս հանեց տառապանաց զիս փոսէն,
Ուր մեղաց տիղմը պատել էր իմ շորս դիս:

Կանգնեցոյց զիս քարի մ' վերայ հաստատուն,
Արդարութեան ճամբան ցըցոյց՝ ոտքերուս.
Դըրաւ բերանս երկնագդեցիկ օրհնութիւն,
Լի հաւատով՝ որ կը շընչէ սէր և յոյս:

Ձայն տեսնալով շատեր պիտի տազնապին,
Եւ այլ շատեր պիտի դառնան առ Աստուած:
Երանելի՛, այո՛, կ'ասեմ այն անձին,
Որ նոր կ'ապրի յոյսըս առ Տէր հաստատած:

Նանրահաւատ մարդկանց խօսքին չի նայիր,
Կ'երթայ շիտակ արդարութեան ճանապարհ,
Միայն իրեն վարուցը խիստ ուշադիր,
Սուտէ հեռու, նա վարէ կեանք անմոլար:

*
* *

Շատ հըրաշքներ ցըցուցիր մեզ, Տէր Աստուած,
Քու խորհուրդներդ անպատում են, անհամար.
Ոչ ողջակէզ, զոհ քաւութեան մեղանաց
Կը պահանջես, այլ ունկընդիր սիրտ խոնարհ:

Այնոր համար, ասացի ես, — « Պատրաստ եմ
« Կատարելու Քու ամէն կամքդ, հըրաման.

« Ինչպէս արդէն սուրբ գրոց մէջ գրուած են .
« Նոյն սըրտիս խորն Գու օրէնքներդ տըպուած կան » :

Բազմութեան մէջ՝ արդարութիւնդ համարձակ
Հըռչակեցի, առանց մարդէ քաշուելու .
Ուր տեղ որ կար քարոզելու սէտք կամ հարկ,
Լուռ չը կեցայ . գոր լաւ գիտես Տէր իմ Դու :

Վըկայութիւնքդ չպահեցի ես թագուն .
Ճըշմարտութիւնըդ պատմեցի ամենուն .
Նոյնպէս յայտնի Գու մեծամեծ գըթութիւն
Բացատրեցի՝ առաջի մեծ ժողովոյն :

Դու Տէր այժմիկ, ցըցուր խընամքդ իմ վերաս,
Ողորմութիւնդ, ճըշմարտութիւնդ յարաժամ
Տուր որ լինին պաշտպան անձիս, անպակաս .
Եւ չը թողուն որ կորսըլիմ անգուման :

Փըրկէ զիս Տէր, ինձ օգնութեան շոյտ հասիր :
Ամօթ իրենց որոնք ինկան ետեւս,
Կորսընել զիս աշխատեցան անձանձիր .
« Վա՛շ, վա՛շ » ասին, թող որ մընան սևերես :

Ընդհակառակն տուր որ ցընծան, Տէր, Քեզմով,
Հաւատարիմ Գու ծառաներդ ու ասեն .
« Մե՛ծ է Աստուած, որ կը փըրկէ ապահով,
« Զինքը սիրողն ու յուսացողը իրեն » :

Աղքատ տընանկ մընացի ես գումարած,
Փութա՛ օգնել, պաշտպան լինել իմ անձիս .
Ապա թէ ոչ կը կորսուիմ ես յանկարծ,
Պէտք ատենին թէ օգնութեան չըհասնիս :

Խ

Երնէ՛կ նորա որ՝ աղքատին, տընանկին
Վրայ խորհելով, սիրտ կը մաշէ կը հոգայ.
Անտարակոյս նորա նեղ՝ պէտք ատենին,
Աստուած վերէն, տէր և պաշտպան կը կենայ:

Կը պահէ զինք, կը պարգևէ կեանք անցաւ,
Երկրիս վերայ կու տայ օրեր երջանիկ,
Եւ չի թողուր որ զինք նեղեն անիրաւ.
Եւ անողորմ չարեացապարտ վատ մարդիկ:

Եթէ յանկարծ հիւանդանայ նա սաստիկ,
Տէրը շուտով կը հասցնէ օգնութիւն,
Զի թողուր որ ներքև փըտին անկողինք.
Տալով դարման նորա ցաւոցը իսկոյն:

Ես ասացի, « Մեղաւորիս ողորմէ,
« Հիւանդ հոգւոյս վերայ նայէ գըթալով.
« Թըշնամիներս՝ չար կը խօսին վերաս թէ՛
« Երբ կը մեռնի՝ կ'անճիտի նա տուն—տեղով »:

Նոցամէ մին ինձ մօտ գալով՝ հիւանդտես,
Դըրսէ ի դուրս ասաց խօսքեր փուճումուն.
Այլ սիրտը չար թունով լեզուն, օձի պէս,
Դուրս ելնալով թափեց լեզու չարաշունչ:

Զիս ատողներ փըսփըսացին իրենց մէջ,
Մուր քըսելով սուտ խօսեցան. « Զարաչար
« Վըրան տիրած է բոլորովին դէն անգեղջ
« Անկողինէն ամենևին նա չելնար »:

Նոյնպէս իմ հետս խաղաղութեամբ ապրող մարդ,
Որ՝ կարծէի հաւատարիմ սըրտացաւ,
Եւ որ կ'ուտէր իմ սեղանէս հաց առատ,
Կից արձակեց, և թըշնամի ինձ դարձաւ:

Յիս Տէր գըթա, Դու տո՛ւր ինձ ոյժ, զօրութիւն
Որ՝ ես դոցա հատուցանեմ պէտքին պէս.
Անտի ճանչնամ Քու դէպ առ իս հաճութիւն,
Երբ թըշնամիքս կը խոնարհես իմ առջևս:

Այլ զիս անփորձ պահէ Դու, Տէր, չարէն յետ
Որ՝ ծառայեմ ուղիղ սըրտով Քու դիմաց:
Այժըմ և միշտ և յաւիտեան և յաւէտ,
Օրհնեալ ես Դու իսրայելին Տէր Աստուած:

Խ Ա

Ինչպէս ծարաւ եղջերուն՝
Պասակելով կը դիմէ
Դէպ ի վազուկ ջրերուն,
Այնպէս հոգի իմ կըրէ
Ծարաւ՝ փափաք Քու տեսոյն:

Աստուած հըզօր՝ կենդանի,
Պիտի լինի՛ այն վայրկեան
Որ՝ ես լինիմ արժանի
Սո՛ւրբ երեսացդ տեսութեան,
Այն ի՛նչ վայրկեան հրաշալի:

1. Մարգարէն կը յայտնէ սրտին մեծ ցաւը. ինք զինքը
տեսնալով հեռացած Աստուծոյ տաճարէն:

Աչքիս արցունք ինձ եղան
Գիշեր, ցորեկ հացի տեղ.
Ո՛ր մէկուն տամ պատասխան
Հարցանողաց ամէն հեղ,
« Ո՛ւր է Աստուածդ, ո՛ւր պաշտպան » :

Տատամսեցայ վայրկեան մի
Այդ սիրտ ծակող խօսքերէն,
Այլ միտքս գալով մի առ մի
Անցած խընամքըդ ամէն,
Նոր ոյժ ներսէս ըզգացի :

Օր մի ասի, դարձեալ ես
Դէպ ի տաճարդ հրաշագեղ,
Փառաբանել Տէր ըզքեզ,
Ժողովըրդոց հետ մէկ տեղ
Կու գամ երգել շէն՝ սըրտէս :

Դու ո՛վ անձն իմ, մի տըրտմիր,
Մի խըռովիր վայրասլար,
Յոյսդ Աստուծոյ վերայ դիր,
Ճանչցիր նորա փըրկարար
Ողորմութեան առատ ձիր : —

Թէ խըռովիմ վեր ի վայր,
Միտքս կու բերեմ ես շուտով
Քոյ գըթութիւնք հրաշափառ
Յորդանանու գետին քով,
Եւ Հերմոնին լեռնավայր :

Անցած օրերս, իմ կարճ կեանք
Խըռովայոյզ ալէկոծ,

Ինչպէս ջուրի մի հոսանք
Ի ծոց խորին անդրնդոց
Շառաչելով շոյտ՝ արագ :

Կայծակնասասա բարկութիւնդ
Սահեց անցաւ վըրայէս,
Ինչպէս ալիք խորանդունդ
Որ խաղաղի վերջապէս .
Տեսայ ապա ես Գոյ գութդ :

Այո՛, երբեմն ես Գու Տէր
Ողորմութիւնդ օրն ի բուն
Վայելելով, ողջ գիշերն
Կ'երգէի երգ օրհնութիւն
Հանգիստ սըլլտով անվեհեր :

« Գու ես պաշտպանս, ասացի
« Ինչո՞ւ թողիր երեսէ .
« Անոք, անտէր մընացի .
« Երբ թըշնամիս զիս նեղէ,
« Որո՞նն դիմեմ ես պիտի » :

Կը վարանիմ վըշտահար,
Երբ թըշնամիք օձի պէս
Կը հարցընեն անդադար
Խոցելով սիրտս ոսկորներս
« Ո՞ւր է Աստուածդ, չերևնա՞ր » :

Այլ դու անձն իմ, մի տըրտմիր,
Մի խըռովիր վայրապար,
Յոյսդ Աստուծոյ վերայ դիր,
Ճանչցիր նորա փըրկարար
Ողորմութեան անբաւ ձիր :

Խ Բ

Դատէ գործերս, Աստուած իմ,
Ողորմութեամբդ գըթալի,
Թող իրաւունքս յայտնուին
Ամենեցուն առաջի:

Անտուրբ և վատ նենգաւոր
Ազգէն՝ զիս, Տէր, ազատէ.
Եւ մարդկանցմէ մեղաւոր
Անվըտանգ զիս պահպանէ:

Դու իմ անձիս զօրավիգ
Ինչո՞ւ այսպէս զիս մոռցար.
Երբ նեղեն զիս թըշնամիք
Տըրտմած կ'երթամ ճանապարհ:

Ճըրմարտութիւն ֆոյ և լոյս
Ղըրկէ Դու ինձ առաջնորդ
Որ դէպ ի լեռնըդ, հոգւոյս,
Ցըցնեն ճամբան ինձ ուղղորդ:

Կանգնիմ հանդէպ սեղանիդ,
Երկիր պագեմ հաւատով.
Տո՛ւր որ բերկրիմ խընդամիտ
Իբր մանուկ շէն ֆեզմով:

Խոստովանիմ Տէր ըզֆեզ,
Երգ օրհնութեան ի բերան
Ձի դու իմ տէր Աստուածս ես,
Եւ պահպանիչս յարաժամ:

Արդ մի տըրտմիր, ո՞վ անձն իմ,
Մի խըռովիր վայրապար,
Յուսա յԱստուած սըրտագին
Կը փըրկուիս անպատճառ:

Խ Գ

Աստուած, հայրերս պատմեցին,
Մէք լըսեցինք ականջով,
Ինչ որ արիր մեր ազգին,
Հին պասլերուս օրերով:

Ազգերն որ Քեզ չըճանչան՝
Արմատներով խըլեցիր,
Եւ իբրև խոտ անպիտան,
Հովին տուիր ցան և ցիր:

Իբրև այգի պատուական
Բերիր մեր հարք տընկեցիր.
Ժառանգութիւն սեփական
Տալով իրենց այս երկիր:

Նորա իրենց ո՞չ սուրով
Այս հողերուն տիրեցին,
Եւ ոչ բազկացը ուժով
Հալածեցին թըշնամին:

Քու աջըդ, Տէր, փառաւոր,
Եւ երեսիդ պայծառ լոյս.
Արին զիրենք զօրաւոր,
Տալով միշտ սիրտ խըրախոյս:

Դու Աստուած մեր, միշտ նոյնն ես,
— Մեծ թագաւոր գերագահ. —
Մեր խեղճ վիճակ նայէ տես,
Տո՛ւր փըրկութիւն Յակովբայ:

Մեր թըշնամեաց Քեզմով, Տէր,
Կարնանք յաղթել ապահով,
Եւ մեր վերայ եկողներ
Յետ դարձընել ամօթով:

Ո՛չ մեր՝ աղեղն, ո՛չ մեր սուր
Ջմեզ փըրկելու չեն կարնար,
Կը կորսըւինք մեք ի գո՛ւր,
Թէ ձեռք կըտաս կամակար:

Մեր բուն պարծանք Դու ես Տէր.
Մեք Քո անուան անխափան
Եւ անդադրում զօր — գիշեր՝
Փառք տամք, լինիմք խոստովան:

Բայց այժմիկ Տէր, ինչո՞ւ Դու
Ջմեզ երեսէ ձըգեցիր.
Մեր զօրքերուն օգնելու
Չիջար ի դաշտ մարտադիր:

Մեր թըշնամեաց դիմացէն
Ջմեզ ի փախուստ դարձուցիր,
Կողոպտեցին հինօրէն
Ջմեզ ատելիք ձիրաձիր:

Ինչպէս ոչխար զմեզ ի սպանդ՝
Քաշեց տարաւ թըշնամին,

Եւ ցըրուեցանք աստեանդ
Հեթանոսաց յաշխարհին :

Հանեցիր Քու ժողովուրդ
Առանց գընոյ ի վաճառ .
Կ'աղաղակեն յամենուստ
Փըրկանաց մի չըկայ ճար :

Նախատեցին թըշնամիք ,
Ծաղր , կատականք , այպանումն ,
Շրջաբընակ վատ ազինք
Թափեցին մեր գըլխուն :

Թողիր ըզմեզ նըշաւակ ,
— Իբրեւ ծաղու առարկայ , —
Կ'արհամարեն օտար ազգք
Գլուխ շարժելով մեր վերայ :

Բիւր նախատինք , ամէն օր ,
Աչքովս տեսնամ , կը լըսեմ .
Շառագունած եմ բոլոր ,
Վա՛տ և անարգ ամօթէն :

Զի չարախօս ժանտ մարդիկ
Երեսս ի վեր գողացին ,
Նոյն վատշուէր թըշնամիք
Սուտեր վըրաս բարդեցին :

Այս ամէն բան մեր գըլխուն
Եկան , այլ մեք աննըկուն
Պահեցինք ուխտդ հաստատուն
Մեր սըրտին խորը թագուն :

Քոյ սըրբազան օրէնքներ
Չըթողուցինք ոչ մի տեղ.
Արդար ուղղորդ ճամբայէդ
Չըշեղեցանք ո՛չ մի հեղ:

Նոյն և յերկրին վիշապաց՝
Ուր ձըգեցիր Դու ըզմեզ,
Ի մէջ մահուն արհաւրաց
Չըմոռացանք մեք ըզֆեզ:

Դո՛ւ մեր սըրտից խուզարկու,
Պատիւ պաշտօն մեք երբէք
Մի՛թէ օտար կուռքերու
Գիտե՛ս արդեօք, տուե՛լ ենք:

Քու անունիդ, համար Տէր,
Կը մորթուինք իբր ոչխար.
Ջարթիր, զարթիր մի նընջեր.
Ի՛նչ, մեր քաշածն չես տեսնար:

Ինչո՞ւ երեսդ մեզմէ դուն
Կը դարձընես մեկուսի.
Մեր քաշած վիշտն՝ նեղութիւն
Մածկուիլ չէ՛ կարելի:

Խոնարհեցանք մի՛նչ ի հող.
Մարդու նըշան չի մընաց.
Իբրև որդեր երկրասող
Մէջքերս երկրիս է կըպած:

Հոգևով, մարմնով վըշտահար,
Քեզ կը դիմենք հասիր շուտ.
Քու անունիդ, Տէր, համար
Ցըցուր մեզ սիրտդ բազմագութ:

Խ Դ

Սըրտէս հեղած կը զեղու¹
Խօսք ցընծութեան սիրային,
Կ'ուզեմ ասել՝ երգելու
Գործերը մեծ Արքային:

Ինչպէս գըրիչ իմ լեզուն
Արագագիր մի դըպրի,
Սիրտըս ինչ որ կու տայ տուն
Պէտք է առնու ի գըրի:

Աղամորդւոց մէջ մի հատ
Գեղեցիկ ես անըման,
Շըրթունքներէդ, իբրև վարդ,
Շընորհք ընդհանուր սըփոեցան:

Այնոր համար ինքն Աստուած,
Իւր օրհնութիւնն գըթառատ,
Իբրև պըսակ մի ծաղկանց
Դըրաւ քոյին ի ճակատ:

Արդարութեան սուր հատոյ
Կապէ քու մէջքը հըզօր,

1. Ներկայս մի երգ է հարսանեաց, զոր Ս. Հարթ Քրիստոսի և Եկեղեցւոյ կը պատշաճեցնեն: Կը կարծուի որ Սողոմոնի Եգիպտացւոց արքային դատեր հետ ամուսնութեան առթիւ գրուած լինի այս երգս որ յիրաւի Սաղմոսաց մէջ, գեղեցիկ քնարերգական ներշնչմունք մի է:

Վայելչութեան և գեղոյ
է՛ այն նըշան փառաւոր :

Թագաւորէ փառօք դուն
Ճըշմարտութեան, հեզութեան,
Արդարութեան և սիրոյն
Թող բանա՛ աջդ քեզ ճամբան :

Ազգք, ժողովուրդք քոյ դիմաց
Թող խոնարհին գըլխակոր .
Անցնին նետերըդ թափանց
Քոյ թըշնամեաց սըրտին խոր :

Քեզ պատրաստել է Աստուած
Աթոռ փառաց անսասան .
Արքայական ուղղութեանց
Ունիս յաջիդ գաւազան :

Արդարութեան դուն պաշտպան
Եղիր, անգորն սիրելով,
Անօրինաց չար ճամբան
Ատէ, մեղքէ խորշելով :

Տես դու ահա ինքն Աստուած
Ուրախութեան սուրբ օծումն
Ձըտալով քու ընկերաց,
Թափեց վերայ քոյ Գըլխոյն :

Ձըմուռս, ըստաշխն, կասիա
Ըզգեստներէդ կը բուրեն .
Բընակարանդ փըղոսկրեայ
Շըքեղաշուք տաճարք են :

Օրիորդներ արքայծին
Քեզ տան յանգանք և պատիւ .
Կանգուն յաջիդ դըշխուհին
Ոսկիճամուկ հանդերձիւ :

« Լըսէ դըստրիկ բաղդաւոր ,
« Մոռցիր ազգդ , տունդ , հայրենիք
« Վասըն զի մե՛ծ թագաւոր
« Սիրեց քու տեսքդ գեղեցիկ :

« Նա է քու Տէրդ և փեսայ
« Նորա դիմաց պագ երկիր .
« Քեզ ևս դըստերքը Մուրայ
« Կը նուիրեն ձօն և ձիր :

« Նոյնպէս ազգիս մէջ մեծեր
« Փափաքելով քեզ հաճոյ
« Լինել , կու տան շատ նուէր ,
« Ինչպէս հըզօր թագուհւոյ » :

Այլ փառք դըստեր արքային
Ազնուագոյնն է ներքին ,
Առաքինի սիրտ նորին
Որ՝ բաբախէ ի ծոցին :

Դըրսէն հագուստը շքեղ
Վերջաւորօք ոսկէհիւս ,
Թագաւորին հետ մէկ տեղ
Ելած բազմի ի գահոյս :

Գահին չորս կողմը պատրաստ
Ըսպասարկու կանգնած են ,

Օրիորդներ կուսանք շատ
Որ՛ նորա կամք կատարեն :

« Թագաւորին տունն՝ տաճար
« Քուկդ է, Դըշխոյ նազելի .
« Դու կը լինիս հարսն և մայր ,
« Եւ կ'ունենաս շատ որդի :

« Նոքա իշխանք աշխարհաց
« Կը լինին օր մ'առանձին .
« Քու՛ յիշատակդ անմոռաց
« Յազգաց ի յազգ կու յիշուին :

« Որով ազգեր բազմագան
« Քեզի կու տան երանի՛ .
« Քոյ յիշատակդ յաւիտեան
« Պիտի մընայ յաշխարհի » :

Խ Ե

Աստուած է մեր ապաւէնն ,
Կը լինի մեզ օգնական ,
Եւ կը փրկէ նեղ օրէն
Տալով ոյժ՝ սիրտ յարածամ :

Այնոր համար չեմք վախնար
Երբ սասանի երկրիս հիմն՝
Լեռներ ի ծով խորատակ ,
Դըրդրդելով թէ սահին :

Երբ ծովուն ջուրք բարձրացած
Ահեղագոչ մըռընչեն ,

Եւ բախելով կարծր լերանց
Իրենց տեղէն տատանեն :

Ի քաղաքի Բարձրելոյն
Պայծառ մեղմիկ վըտակք շէն ,
Իրենց ալեօք կարկաշուն ,
Անդորրաւէտ կը վազեն :

Քանզի ուր որ՝ անպատում
Աստուծոյ փառքն կը տիրեն ,
Ոչ տարերաց բըռնութիւն ,
Ոչ մարդ , խռովել կարող չեն :

Բարձրեալն յերկնից որոտաց .
Սասանեցան երկրիս խորք .
Հեթանոսներ շըփոթած ,
Խոնարհեցան թագաւորք :

Մեր հետն է Տէր զօրութեանց ,
Աստուած պաշտպան Յակոբայ .
Ազատ ամէն վըտանգաց
Է՛ որ ի Տէր կը յուսայ :

Ի՛նչ մեծ հըրաշք , ի՛նչ զարմանք ,
Դողայր երկիրս ի սասան .
Երկնաւորին մի ականարկ
Հանդարտեցոյց ամէն բան :

Պատերազմաց վերջ տալով
Փըշրեց աղեղն ու զէնքեր ,
Այրեց մըրկեց կըրակով
Մարտիկ կառքերն վահաններ :

— Արիք տեսէք, ես եմ Տէր,
Տիեզերաց ըստեղծող,
Թող իմ առաջըս ազգեր
Կըրեն սարսափ ահ ու դող: —

Մեր հետն է Տէր զօրութեանց,
Որոյ ոյժին չափ չըկայ.
Արքայ անմահ յաւիտեանց,
Պաշտպան ազգին Յակոբայ:

Խ Զ

Ծափ զարնելով հեթանոսք,
Դէպ ի յերկինս առ Աստուած,
Երգ ցընծութեան և սաղմոսք
Երգեցէք բարձր և սըրտանց:

Քանզի բարձրեալըն հըժկու
Տէր է՝ երկրիս բացարձակ,
Եւ թագաւոր ահարկու
Տիեզերաց բովանդակ:

Ժողովուրդներ մեր առջև
Հնգանդեցոյց կամակար,
Եւ մեր ոտիցը ներքև
Հեթանոսներն դըրաւ վար:

Ընտրեց իրեն և առաւ
Ժառանգութիւն մեր ազգն Նա,
Եւ սիրելով հաճեցաւ
Գեղեցկութեան Յակոբայ:

Չայնիւ երգոց օրհնութեան
Համբարձաւ Տէրը փառաց,
Հընչեցին փողք յաղթական՝
Գովեստ նորա քաջութեանց:

Սաղմոսելով քաղցրալուր,
Աստուծոյ դուք տուէք փառք.
Թողէք հընչէ ընդհանուր,
Ձեր երգերուն արձագանգք:

Ամէն ազգաց աշխարհի
Թագաւորեց Տէր Աստուած,
Եւ բազմեցաւ յաթոռի
Արքայական գերամբարձ:

Իշխանք ազգաց ժողովեցան
Աբրահամու որդւոց քով.
Նոցա տիրոջ անսասան՝
Մեծ զօրութիւն տեսնալով:

Խ Է

Մեծ է փառք Տեառն, անդադրում
Կ'ելնէ նըմա օրհնութիւն
Երուսաղէմ քաղաքէն՝
Եւ Սիոնի սուրբ լեռնէն:

Գեղադիտակ այդ սուրբ լեռ,
Երկնից տըրուած մեզ նուէր,
Ուր ի հիւսիս դարեւանդ՝
Մեծ արքային է պալատ:

Այն տեղը նա՛ ապահով
Կը վարէ կեանք մեծ շքով,
Զի հովանի աջն հըզօր
Կը պահէ զինք գիշեր-գօր:

Նախանձելով թագաւորք
Վըրան եկան շատ գօրօք.
Այլ տեսնալով ամրութիւնն,
Վախը տիրեց սըրտերուն.

Տըղայաբեր ինչպէս կին
Ցաւերու մէջ մընացին,
Նոցա նաւերն ի թարսիս
Փըշրեց մանրեց խիստ հիւսիս:

Մէք մեր լըսածն ատենով՝
Այժմիկ տեսանք աչքերով.
Զի Տէր կ'ուզէ յաւիտեան
Պահել Սիրոյն անսասան:

Մեծ անունիդ, Տէր, յաւերժ
Տիեզերք կու տան փառք անվերջ.
Արդարութիւնդ է անչափ,
Լի է քոյ աջդ գըթութեամբ:

Ուրախ կեցիր լեառն Սիրոն,
Դըստերք Յուդայ շէնցիք, օ՛հ.
Զի իրաւանց Տէրն՝ պաշտպան
Զձեզ կը փըրկէ յարածամ:

Օ՛հ, ման եկէք շուրջ բոլոր
Սիրոն բերդիւ ի թափօր,

Համարեցէք մի առ մի
Աշտարակներն գեղանի :

Ու զըննեցէք ուշադիր
Ամրութիւններն քարուկիր ,
Որ՝ կարենաք ատենին
Ասել՝ պատմել ձեր թողին :

Աստուած է մեր Տէրն պաշտպան ,
Այժմ և միշտ , յաւիտեան ,
Նա՛ առաջնորդ մեր ազգի
Մինչև ի վերջ աշխարհի :

Խ Ը

Ինձ լըսեցէք ամենայն ազգք և ազիւք
Երկրիս բնակք , աղքատ , հարուստ , մեծ պըզտիկ .
Զի իմ երկար մըտածութեանցըս պըտուղ ,
Երգի ձևով , իբր օրհնութիւն սըրտաբուղիս

Ահաւասիկ ձեզ կը գըրեմ ի խըրատ ,
Դուք ուշ դըրէք՝ մըտօք արթուն և ըզգաստ :
Ինչո՞ւ համար ես ահ քաշեմ , տազնապիմ .
Տեսնալով նենգ , դաւ և պատրանք իմ չորս դին ,

Եւ թէ ահա դարանակալ թըշնամին
Կ'ուզէ կարճել թելը կենաց իմ անձին : —
Միթէ կա՞յ մին , հարըստութեամբ կամ ուժով
Որ՝ կարենայ ընդ միշտ լինել ապահով .

Անձամբ պէտք է կըրէ տանի ամէն մարդ
Վ իշտ նեղութիւն . մեռնելէ մէկն չէ ազատ :

Կը տեսնանք մեք որ՝ անխըտիր օրն ի բուն՝
Մեռնին կ'երթան անմիտն, չարսիրտն 'ւ իմաստունն.

Որոնք թողլով իրենց գանձեր շտարաց
Կ'իջնան ի հող, մութ փոսին մէջ, նեղ ու թաց.
Մինչդեռ նոցա գեղեր պալատք զարդարուն
Այլք կը վայլեն: Ո՞ւր նոցա փառքն, ո՞ւր անուն:

Զի հողածին մարդուն երկար չէ աստ փառք.
Կը մեռնի նա իբր անասուն մի անարգ.
Մի նոյն ճամբով նորա որդիք և թոռներ
Պիտի երթան՝ իբրև անբան ոչխարներ:

Երբ կը փակուի նոցա վերայ գերեզմանն
Պատէ զիրենք գիշեր անյոյս մահական:
Եւ առաւօտ դեռ չըծագած լուսարփի,
Նոցա ընչից՝ արդարն ստացող կը լինի:

Այլ երբ հասնի և իմ վախճան, Տէր Աստուած,
Կ'ազատէ զիս գերեզմանին արհաւրաց:
Այնոր համար երբոր տեսնաս դու մի մարդ
Ճոխութեամբ լի, արհամարող և հըպարտ,

Մի՛ խըռովիր. Նա ևս այսօր կամ վաղիւ
Կը մըտնայ փոսն, թողլով իւր գանձն և պատիւ:
Քանի որ նա կ'անցընէր կեանք լի բարեօք
Ունէր իրեն շատ խընկարկու շողաքորթք.

Այլ երբ գընաց իւր նախորդաց խաւար տունն,
Զինքը յիշելն խելքին չեկաւ ո՛չ մէկուն:
Ունևոր մարդն եթէ չունի խելք գըլխոյն,
Կը կորսուի ինչպէս անբան անանուն:

Խ Թ

Աստուած փառաց, Տէր զօրութեանց, խօսեցաւ,
Յարեւելից մինչև ի մուտս արևու,
Հիւսիսական կողմէն մինչև ի հարաւ,
Նա ձայն տուաւ, բոլոր երկրիս, ահարկու:

Եւ Սիոնի վայելչագեղ լեռներէն
Երևեցաւ, իւր անպատում փառքերով,
Մըրըրկալից՝ հուր կը վառէր առաջէն.
Յերկնից ի վայր՝ Նա զայս ասաց մեծ ձայնով:

« Թող ժողովին բոլոր սուրբերս իմ առջև,
« Որք ուխտադիր՝ ինձ պատարագ մատուցին.
« Արդարութիւնս Երկինք կ'անեն ականերև,
« Զի Աստուած եմ, և դատաւոր ամենքին:

« Լքսէ ձայնիս ժողովուրդ իմ Իսրայէլ,
« Ես եմ քու Տէրդ, Աստուած, փրկիչ, ըստեղծող.
« Կ'ուզեմ խօսածս վկայութեամբ հաստատել,
« Որ հասկանաս երբ լաւ լինիս մըտախոհ:

« Զեմ կըշտամբել երբէք ըզքեզ ի զուր տեղ,
« Հաճոյական են ինձ նուէրդ, պատարագդ.
« Ողջակէզներդ՝ զոր մատուցիր սիրազեղ,
« Առջևս են միշտ կեցած ամէն ժամանակ:

« Բայց քու տունէդ¹ չեմ ընդունիլ զուարակ,
« Եւ ոչ նոխազ քու հօրանէն նուիրած,

1. Ոմանք կ'իմանան գողոսնի. այլ իմանալի է Ոչ Իբրև
քուկդ՝ սեփական: Հ. Ք. Ք2.

« Անտառներուն կենդանիներ և գազանք
« Իմ են բոլոր, անասուններն և լերանց .

« Վայրի թըռչունք, զանազան հաւք օդայինք,
« Խոտաճարակ երէ վայրիք դաշտական .
« Թէ քաղցենամ, չուզեմ քեզմէ ուտելիք,
« Իմ է բոլոր տիեզերքիս ինչ որ կան :

« Զուարակացդ միսը երբէք ուտել չեմ .
« Դուն օրհնութեան սուրբ պատարագ ինձ մատո՛ .
« Եւ ոչ արիւնն նոխազներուդ կը յարգեմ .
« Քու սըրտագին՝ ջերմ ուխտերդ են ինձ հաճոյ :

« Նեղութեանդ մէջ առ իս դիմէ հաւատով,
« Ես կը փըրկեմ ըզքեզ ամէն վըտանգէ .
« Երախտագէտ այն ժամանակ դուն սըրտով
« Երգ գոհութեան, երգէ քաղցրիկ ի սըրտէ » :

Մեղաւորին կ'ասէ Աստուած, — « Դուն ի՞նչպէս
« Համարձակիս իմ պատուերներս սըրբազան,
« Արդարութիւնըս պատմելու դուն կ'իշխեն՝ս,
« Ուխտ և դաշինքս առած քուկին պիղծ բերան :

« Դուն ատեցիր և մերժեցիր խըրատներս,
« Զրուցած խօսքերս չըլըսելու զարկիր միշտ .
« Գողին եղար դուն գողտարան ծածկապէս,
« Շընացողին մեղաց տուիր ևս առիթ :

« Զար խօսելու միշտ պատրաստ է քու բերան,
« Իսկ քու լեզուն կը նիւթէ միշտ նենգութիւն .
« Նըստած ասիր չարիք եղբօրըդ վերան,
« Զխնայեցիր և ոչ քու մօրըդ որդւոյն :

« Տեսայ, այո՛, քու մեղքերուդ մեծ վընաս .
« Համբերեցի որ՝ դուն դառնաս ու զըղջաս ,
« Այլ երբ այդպէս յամառ, անզեղջ կը մընաս
« Յայտնի պատիժդ՝ սլէտք է շուտով ըստանաս :

« Ըզգաստացի՛ք, դուք, որ զԱստուած մոռցել էք .
« Եթէ յանկարծ իմ բարկութեանս հանդիպիք .
« Անհընարին կը պատժուիք . ոչ երբէք
« Ազատելու չէք զըտնել ճար կամ տեղիք » :

* * *

« Ով նըւիրէ ինձ պատարագ օրհնութեան ,
« Եւ փառք տալով զիս կը պատուէ սըրտագին ,
« Եւ ով կ'երթայ արդարութեան սուրբ ճամբան ,
« Նոցա Աստուածն փըրկիչ ես ինքս կը լինիմ » :

Ծ*

Ողորմէ ինձ, Տէր Աստուած,
Ողորմութեամբ մեծագոյն .
Քաւէ, սըրբէ, Տէր գըթած
Իմ մեղքերուս բազմութիւն :

Չար, անօրէն իմ գործեր
Քանի գնացին աւելցան .
Այլ ողորմած, դու իմ Տէր,
Եղիր մեղացս սըրբարան :

Լաւ գիտեմ ես յայտնի են
Քեզ՝ վատ մեղքերս զազրալի,

* Տպուած էր 1886ի ԲագմաՎիպոզմ, էջ 227. Դ :

Եւ ոչ իմ վարքս անօրէն
Մածկել քեզ չէ՛ կարելի :

Մեղայ, մեղայ, Տէր իմ Տէր,
Քո՛ւ դիմացդ եմ յանցաւոր .
Արդարութեամբ մի՛ դատեր,
Եղիր գըթած դատաւոր :

Գիտես արդէն որ մեղքով
Աշխարհք բերաւ զիս մայրիկ .
Աչքըս թացի, և լալով
Տեսայ մեղքեր ես հերիք :

Այլ դու ծածուկ խորհրդով
Յայտնեցիր քու կամքդ արդար .
Եւ ցըցուցիր ինձ մեղմով
Ճըշմարտութեան ճանապարհ :

Յօղէ մըշտկաւ զոպայի,
Լըւա մեղքերս, սուրբ լինիմ,
Ձիւնէն ճերմակ թող փայլի
Ազատ մեղքէ՛ իմ հոգին :

Տո՛ւր իմ սըրտիս կենարար
Ուրախութիւն, ցընծութիւն,
Թող ոսկորներս վըշտահար
Ըստանան նոր զօրութիւն :

Դարձուր աչքերդ, Ողորմած,
Մի՛ նայիր իմ մեղքերուն,
Եւ իմ հոգւոյս խաւարած
Մազէ յուսոյ քաւութիւն :

Սիրտ սուրբ մաքուր ի ծոցիս
Դի՛ր, կ'աղաչեմ տէր Աստուած,
Եւ թող լինի իմ հոգիս
Ուղիղ, արդար ի մեղաց:

Չըլլայ որ զիս երեսէ
Մէկդի ձրգես մի վայրկեան,
Եւ սուրբ հոգիդ իմ սըրտէ
Բաժնես, հանես յաւիտեան:

Տըկարութեանս՝ քաջութիւն
Տուր ինձ քեզմով ըստանալ.
Եւ սուրբ հոգւովդ հաստատուն
Յարդարութեան կալ մընալ:

Անօրինաց՝ սուրբ ճամբու
Տուր ինձ լինել առաջնորդ.
Ամպարիշտներ՝ դէպ ի քու
Ճամբան հանեմ ես ուղղորդ:

Արեան գործէ զիս հեռու
Պահէ, փըրկէ, տէր Աստուած.
Արդարութիւն գովելու
Համար, բերանս լեզուս բաց:

Թէ իմ շըրթանց այդ շընորհ
Տալու լինիս, Տէր իմ Տէր,
Քեզ՝ օրհնութիւն երկնաւոր
Պիտի երգեմ զօր գիշեր:

Չեն քեզ հաճոյ ողջակէզ
Ոչ պատարագ, ոչ սեղան.

Ձի դուն սուրբ սիրտ կը փընտուես
Հոգի խոնարհ զըղջական:

Հաճոյական պատարագ
Քեզ՝ խոնարհ հեզն է հոգւով,
Մարդկանց դիմացը անարգ,
Այլ քեզ ընտիր ապահով:

Դէպ ի Սիոն, Տէր, դարձիր,
Երուսաղէմ նորոգէ,
Նոր Իսրայէլդ ուխտադիր
Ի ծոց նորին ժողովէ:

Անդ բիւրաւոր սուրբ սըրտեր
Խոնարհ և հեզ՝ ինքնակամ
Քեզ ողջակէզ սիրանուէր
Թող նըւիրին յարաժամ:

Ծ Ա

Ինչո՞ւ, ո՞վ մարդ, կը պարծիս,
Քու չարութեանցըդ համար,
Գիշեր ցորեկ կը տըքնիս,
Նենգ խորհելով անդադար:

Ինչպէս մի սուր ածելի,
Թոյնով սըրած քու լեզուն,
Կը խօսի չար՝ ո՞չ բարի,
Խոցելով սիրտ ամենուն:

Կը կործանէ շատին տունն
Քուկին լեզուդ նենգաւոր.

Ձի խընայել ո՛չ մեկուն՝
Ո՛չ արդարն՝ ո՛չ մեղաւոր:


Այդոր համար ինքն Աստուած՝
Պիտի քու տունըդ քանդէ.
Արմատներովդ ոստաքանց
Պիտի ջընջէ գքեզ յերկրէ:

Արդարներ զայն տեսնալով
Պիտի վախնան Աստուծմէ,
Ու սլիտ՝ ասեն խընդալով.
« Ինքնահաւան այդ մարդն է

« Որ՝ Աստուծմէ չէր վախնար.
« Նա կը յուսար, ճոխ կերպով,
« Անցնել օրեր ընդ երկար.
« Կորաւ ահա տուն տեղով »:

Այլ ես ինչպէս ձիթենի,
Երկնաւորին այգւոյն մէջ,
Ծըլած, ծաղկած. սլըտղալի
Պիտի վայլեմ մինչ ի վերջ:

Յոյսըս վըրադ դընելով
Պիտի երգեմ անընդհատ
Ողորմութիւնդ. գիտնալով
Որ՝ կը փըրկես Քու ծառայդ:



Ծ Բ

Ասաց սըրտէն անըզգամն .
« Աստուած չըկայ » . մեղքերով
Բոլոր մարդիկ պըղծեցան .
Խիղճ չըմընաց մէկուն քով :

Աստուած դիտեց երկընքէն
Տեսնալու թէ՛ մէկը կա՞յ
Որ՛ մըտածէ ինքն իրեն ,
Ու Արարիչը գըտնայ :

Մէկը միւսէն անըզգամ ,
Մէկուն գըլուխ չըկայ խելք .
Վարքերը պիղծ՝ անպիտան ,
Բոլոր գործերն են մեծ մեղք :

— « Արդ մինչև ե՞րբ , ասաց Տէր ,
« Այդ անզգաստ , լիրբ մարդիկ ,
« Պիտի գործեն պիղծ մեղքեր ,
« Բա՛ւ է , եղաւ արդ հերիք :

« Իմ ժողովրդըս դոքա ,
« Ինչպէս իրենց ըստրուկներն ,
« Կեղեքեցին անխընայ ,
« Ու լեցուցին որկորներն :

« Դոքա որ զիս չուզեցին
« Ճանչնալ գիտնալ . 'ւ աներես
« Հազար բիւր մեղք գործեցին .
« Զիրենք պատժեմ ահա ՚ս :

« Իրենց խըղճէն, մոլեբար,
« Հալածական թո՛ղ շըրջին,
« Գիշեր ցորեկ անդադար
« Յընորքներով տանջուին:

« Հանգիստ բընաւ, ոչ երբէք.
« Ուր որ չըկայ վախի բան,
« Թող սարսափին ահաբեկ
« Ոգիներէն խօլական:

« Եւ նոքա՛ որ ինձ ըմբոստ
« Եղան, ապա կամովին
« Մարդկանց շընթող շողոքորթ,
« Պիտի ցրուեմ ոսկորնին:

Անարգաբար մարդկանց մէջ
Պիտի շըրջին ամօթով.
Մինչև իրենց կենաց վերջ
Միշտ անսլատիւ լինելով:

Սիոմնի՛ Դու ի բարձանց
Հասիր Տէր, մեզ յօգնութիւն.
Տուր որ դառնանք գերեզարձ
Ի հայրենիս, ի մեր տուն:

Սըրբած աչքին արցունքն, ողբ.
Ժողովուրդ Գոյ Իսրայել,
Ուրնախ սըրտիւ շէն Յակոբ
Թո՛ղ ըսկըսի գԳեզ օրհնել:



Ծ Գ

Սուրբ անունիդ, Տէր, համար
Պահէ, փրկէ Բու ծառայդ .
Եւ զօրութեամբըդ արդար
Տես իրաւամբ իմին դատ :

Լըսէ սըրտանց աղօթքներս .
Օտարք չորս դիս են առել .
Զօրաւոր մէկն ետեւս
Ինկած կ'ուզէ զիս մեռցնել :

Սիրտը նորա քար դարձած ,
Արած թողածն չի գիտել .
Մոռացել է նա Աստուած ,
Կ'ուզէ արիւնըս թափել :

Այլ Դուն եղիր օգնական
Եւ ապաւէն եղկելոյս .
Եւ չար հընարքն ամենայն
Դարձուր ի գլուխ թըշնամոյս :

Ես կամաւոր պատարագ
Կը նուիրեմ քեզ յայնժամ ,
Քոյ սուրբ անուանդ զովեստ՝ փառք ,
Փրկչիդ՝ Աստուած իմ, կու տամ :

Զի փրկեցիր նեղ օրէն
Հաւատարիմ Բու ծառայդ .
Եւ թըշնամիքս անօրէն ,
Տեսայ ինկած դատապարտ :

Ծ Դ

Լըսէ, Աստուած, աղօթքիս
Իմ խընդրուածք լսէ, տէս.
Տակն ու վերայ է հոգիս.
Որո՞նն արդեօք դիմեմ ես:

Թըշնամիներս ահարկու
Բորբուքած են խռովայոյզ.
Վըրէժ կ'ուզեն խընդրելու
Իմ չըզործած մեղքերուս:

Տըխուր է սիրտս, կը վախնամ.
Մուժ՝ կոխած է աչքերուս.
Պատած չորս դիս կը տեսնամ
Մահուան շուքերն սև, անլոյս:

Սըրտիս խորէն հառչեցի.
« Ո՞հ թէ մէկն ինձ տայր թևեր,
— « Ինչպէս ունի աղաւնին, —
« Ու թըռչէի ես ի վեր.

« Եւ իջնայի ապա վայր
« Յանապատին հեռաւոր,
« Անդ առնուի ես դադար
« Մէկդի մարդոց նենգաւոր:

Նոցա խորհուրդքն անօրէն
Արգիլէ, Դու, գըթած Տէր,
Եւ խառնակէ լեզունին
Քաղաքացւոցն աննուէր:

Ձի քաղքէն դուրս, քաղքէն ներս
Գիշեր ցորեկ հանապազ՝
Կը գործեն չար, մեղք պէսպէս,
Վաշխ, նենգութիւն անպակաս:

* * *

Թէ նախատէր թըշնամիս,
Համբերութիւն. — Ի՞նչ անել.
Արհամարէր ատելիս,
Ինձ կը վայլէր՝ լուռ լինել:

Իսկ դու ընկերս, ատենով
Իմ բարեկամս քաջ ծանօթ,
— Ի՞նչ է վախճանդ, այդ կերպով,
Ձիս նեղելուդ, անամօթ:

Ձէ որ քեզի հետ մէկ տեղ
Կերուխումի նըստել ենք,
Եւ միաբան խիստ շատ հեղ
Աստուծոյ տուն գընացել: —

* * *

Տո՛ւր որ լինին մահակուլ,
Վերնա՛յ այդ ազգը յերկրէ.
Թո՛ղ գերեզմանն մութ և խուլ
Դոցա հետքերը ծածկէ:

Ես Աստուծոյ դիմեցի
Առտու, գիշերն և ցորեկ.
Կոտրած սըրտիս ձայնն իսկի
Անտես չարաւ Նա երբէք:

Աղաչեցի փըրկել զիս
Անըզգամացը ձեռքէն.
« Խաղաղութիւն տո՛ւր սըրտիս,
Ասի, « Պահէ զիս չարէն »:

Գիտեմ՝ Աստուած կը լըսէ
Իմ պաղատանքս սըրտագին.
Անօրէններն կը սլատժէ
Որ՝ հասկընան չափերնին:

Քանզի նոքա խըղձներտանք
Ի՞նչ ասել է չեն գիտել,
Եւ Աստուծոյ հակառակ
Կ'ուզեն գործել անարգել:

Բարւոյն փոխան միշտ չարիք
Կ'անեն առանց քաշուելու.
Նոցա համար ուխտ, դաշինք
Խօսք են օգին ցըրուելու:

Արդէն սըրտից չարութիւնն
Երեսներէն կ'երևայ.
Սուտ է և կեղծ հեզութիւնն
Նոցա՝ սըրտին մէջ օձ կայ:

Կակուղ, անոյշ կը խօսին,
Որ ձէթի պէս մեղմ վազէ,
Այլ լըսողին սիրտն, հոգին
Ինչպէս մի սուր կը խոցէ...

Դո՛ւն երկիւղած մարդ արդար,
Քու ամէն հոգի յանձնէ Տեառն.

— Նոցամէ շատ մի վախնար. —
Նա քեզ պահէ անսասան:

Արդարադատ Դու իմ Տէր,
Արիւնահեղ նենգաւոր
Մարդկանց՝ կարճէ շուտ օրեր,
Իջնան ի գուբ խորախոր:

Ձի մի գուցէ արդարոց,
— Որոնք ի Քեզ յուսացան, —
Տեսնալով չարը անփորձ,
Հաւատքն և յոյս թուլանան:

Ծ Ե

Ողորմէ ինձ, Տէր Աստուած,
Ձիս ոտքի տակ առաւ մարդ,
Ամէն օր նոր ի նորանց
Արաւ զիս այպն և նախատ.

Թըշնամիներս բազմաթիւ
Կըռուի ելան ինձի դէմ.
Կ'անցնի գեշերն կու գայ տիւ
Կը բաբախէ սիրտս ներսէն:

Այլ սակայն ես Քու վերայ
Յոյսըս դըրած, Քեզ կ'օրհնեմ.
Մարդը ո՞վ է, ի՞նչ կարնայ.
Ինչո՞ւ պիտի ես վախեմ:

Նոցա համար ամէն բանս
Ծուռ են անարգ. կը խորհին

Կը մըտածեն որ՝ վընաս
Հասուցանեն իմ անձին։

Նըստած ծածուկ ի դարան
Ելըս և մուտս կը դիտեն.
Կ'ուզեն որ գիտ կորըստեան
Գուբը տանին գըլորեն։

Այլ դու, Տէր իմ, մի՛ թողուր
Անպատուհաս այդ չարեր.
Ժողովըրդոց պատիժ տուր
Որ՝ հասկընան ճիշտ չափեր.

Դու իմ քայլերս կու համրես,
Աչքիս արցունք առջևդ են.
Ծածկելու բան չունիմ ես.
Քեզ մօտ գըրուած է ամէնն։

Ահա առ Քեզ սըրտագէտ
Կը պաղատիմ արցունքով,
Տուր թըշնամեացս դառնալ յետ
Նախատալից, ամօթով։

Գիտեմ, այո, դու Աստուած,
Չես անտեսել Քու ծառայդ.
Յուսով կ'օրհնեմ զՔեզ սըրտանց,
Ի՞նչ կարող է անել մարդ։

Ամէն ուխտերս անխաբան,
Ըստ պատշաճին, պէտքին պէս
Բոլոր սըրտովըս կու տամ,
Օրհնելով Տէր իմ ըզՔեզ։

Մահուանէ զիս փրկեցիր
Ոտքերս չանկած յորոգայթ
Աչքիս արցունք սըրբեցիր,
Որ օրհնեմ քեզ անընդհատ:

ԾԶ

Ողորմէ, Տէր, ողորմէ.
Դու ես իմ յոյսս անսասան,
Զիս քու թևիդ տակ պահէ
Մինչև չարիք հեռանան:

Բարձրեալ Տիրոջս դիմեցի,
Իմ Աստուծոյ բարերար,
Յերկնից օգնեց նա ինձի,
Պատժեց ոսոխքս չարաչար:

Ճըշմարտութիւնն, գըթութիւն
Հասոյց ինձի ապաւէն,
Աւիւծի պէս չար մարդուն
Անփորձ պահեց զիս ձեռքէն:

Ադամորդւոց ատամներ
Ինչպէս զէնք նետ են ցըցուած.
Նոցա անգութ լեզուներ
Սուսերի պէս են սըրուած:

Եւ բարձրացիր, ո՛վ Աստուած,
Ցըցուր քու փառք աշխարհի:
Որոգայթներ են լարուած,
Ես շուարած մընացի:

Փորեցին ինձ խորխորատ
Որ՝ մէջն ձրգեն յեղակարծ,
Այլ նոյն՝ ինքեանք դիտապատ
Գըլորեցան դէպ ի ցած:

Իմ սիրտս առ քեզ միշտ պատրաստ
Կ'ուզէ սաղմոս երգելու,
Եւ օրհնութիւն գերիմաստ
Գահիդ առջեւ սըփռելու:

Զարթիք, զարթիք ո՛վ փառք իմ
Սաղմոսարանս և քրնար
Կանուխ առտու, իմ փըրկչին,
Հընչեցէք դուք քաղցրալար

Երգ օրհնութեան՝ բազմաթիւ
Ժողովըրդոց առաջի
Սաղմոսելու քաղցր ձայնիւ
Որ՝ լըսեն ազգք դըրացի:

Ողորմութիւնըդ հասաւ
Մինչև երկնից ի կամար,
Ճըշմարտութիւնըդ անբաւ՝
Ելաւ մինչև ամպոց ծայր:

Ի վեր յերկինս բարձր ես Տէր,
Եւ Քոյ մեծ փառք անսպառ
Տարածուած են վարն և վեր
Տիեզերաց մէջ անծայր:

Է Ծ

Արդարութեան կանց նըշան
Չեր խօսքին՝ մէջ, ո՛վ մարդիկ.
Շիտակ արէք դատաստան,
Թէ ոչ՝ խըստիւ կը պատժիք:

Չար է սըրտերդ, և անզեղջ
կը գործէք մեղք և չարիք,
Անիրաւ էք և անխիղճ.
Պակաս են ձեր չափն՝ կըշիւք:

Յարգանդէ մօր մեղաւորք
կը հետեւին ծուռ ճամբու.
Մոլորական սըտախօսք
կ'երթան առանց դառնալու:

Օձի պէս են թունաւոր.
Նըման իժի և քարբի
կը խըցեն միշտ ականջ որ՝
Չըլըսեն ձայնը թովչի:

Փըշրէ, մանրէ ո՛վ Աստուած
Նոցա ատամն թունալից,
Երբ յարձակին յեղակարծ
Իբրև կատղած մի առիւծ:

Ինչպէս որ ջուրն դարն ի վայր՝
վազեն լինին թող անհետ.
Թուլացուր Տէր նոցա լար,
Եւ բըթացուր սըրուած նետ:

Ինչպէս խրխուեն զագրալի,
Թող զուրկ լինին յարևէ.
Իբրև վիժածն յարգանդի,
Մութ գերեզմանն թող կըլլէ:

Նոցա կաթսայն կիսայրեաց,
Անեի՛ բոցովը փուշի,
Թող որ հովէն ինկնայ ցած,
Մընան սոված անօթի:

Իրաւակշիռ այդ Քոյ դատ՝
Արդարն տեսնայ ու խընդայ.
Եւ իւր ոտքին կեղտն ու աղտ
Նոցա արեան մէջ լըւայ,

Ու ասէ թէ՛ «կայ իրաւ
« Արդարոյն վարձ յաշխարհի,
« Զի մեղաւորն ըստացաւ
« Իրեն սլատիժն արժանի»:

Ծ Ը

Պահէ, Աստուած, զիս փըրկէ
Իմ թըշնամեացըս ձեռքէն,
Պատերազմէ, արիւնէ.
Եւ մարդկանցմէ անօրէն:

Որոգայթի մէջ ձըգել
Կ'աշխատին անձըս անպարտ.
Յանցանք կամ մեղք չեմ գործել,
Կ'ուզեն կազմել վըրաս դատ:

Հասիր Աստուած զօրութեանց,
Իսրայելին ապաւէն,
Մի համբերեր չարութեանց,
Պատուհասէ անօրէնն:

Անըզգամներն ի քաղաք
Իրիկուան դէմ դառնալով՝
Ինչպէս քաղցած շանց վոհմակ
Կը պըտըտին ոռնալով:

Եւ համարձակ կը հենգնեն
Սուր խօսքերով անդադար,
« Ո՛վ է լըսողը », կ'ասեն,
Կ'երթան, կու գան վեր և վայր:

Այլ դու Տէր զայն կը լըսես.
Արհամարոտ մի նայուած
Բաւական է, թէ ուզես,
Քանդել նոցա տունն հիմանց:

Դու սըրտիս ոյժն զօրութիւն,
Աստուած միակ ապաւէնս.
Իմ թըշնամեացս խորտակումն
Տուր որ աչքովս տեսնամ ես:

Այլ կ'աղաչեմ ես ըզքեզ,
Մի բնաւ ջընջել այդ չարեր.
Բայց թէ ցըրուես և ընկճես
Կը խըրատուի մեր ազգն, Տէր:

Իրենց մեղքով թող տանջին,
Հալածական ցիր ու ցան,

Թող որ ինկնան խոնարհին
Զի մեծամեծս խօսեցան :

Անիծապարտ այդ ազգի
Տակաւ չըքուի յիշատակ .
Արդար սաստիդ առաջի
Փըռուի նոցա չարսատակ :

Որ հասկընան իմանան
Թէ՛ մեծ Աստուածն Յակովբայ ,
Տէր է բնաւից և իշխան
Տիեզերաց գերակայ :

Դարձեալ նոքա սովամահ ,
Իրիկուան դէմ, իբրև շուն
Պիտի քըծնին որ՝ մէկն տայ
Իրենց ապրուստն՝ ուտելուն :

Եւ ժողոված հացն ի մուր
Երբոր նըստին ճաշակել . . .
Եթէ պակսի կերակուր՝
Պիտի դառնան տըրտընջել :

Այլ ես կ'երգեմ օրհնութիւն ,
Առաւօտուն վեր կանգնած ,
Փառաւորեմ Քոյ մեծ գութ .
Զոր ցըցուցիր ինձ, Աստուած :

Զի նեղ օրիս հասար դուն ,
Եւ եղեր ինձ Տէր պաշտպան ,
Տալով ինձ ձեռք, օգնութիւն .
Ես գրեզ կ'օրհնեմ յաւիտեան :

Ծ Թ

Մերժեցիր մեզ, Տէր Աստուած,
Ու երեսէդ ձրգեցիր.

Բաւ է Քոյին բարկացածդ՝
Ողորմէ մեզ և դարձիր:

Դող հանեցիր երկրագունդ.

Սասանեցաւ հիմէն նա.

Թէ չըհասնի օգնութիւնդ
Կը կործանի ու կ'ինկնայ:

Դու խիստ ճամբայ բըռնեցիր

Ժողովրդեանդ ուղղելու

Թըմբեցուցիչ մեզ տուիր

Դառըն գինի խըմելու:

Երկիւղածաց Քեզմէ, Տէր,

Տուիր նըշան փըրկութեան.

Որ երբ լարուին աղեղներ

Անխոց ազատ միշտ մընան:

Քու սիրելիքդ կը փըրկես,

Աջըդ նոցա պահապան.

Կ'աղաչեմ Քեզ լըսէ մեզ,

Ու պահպանէ անսասան:

Իւր սըրբութեան աթոռէն

Խօսեցաւ Տէր. Սիրտս ծըխաց.

Ես կը բաժնեմ ըզՍիւքեմ

Եւ կը չափեմ Ձորն—յարկաց.

Մանասէ և Գաղաադ,
Այն երկուքն և ըս իմս են,
Եփրեմ ինչպէս սաղաւարտ
Գըլխոյս վերայ կը դընեմ.

Յուդայ է իմ մեծ իշխան,
Մովաբ՝ լուացման աւազան:
Երբոր յԵդոմ ես երթամ,
Այլազգիք իմ ոտքս կու գան:

Ո՞վ ցոյց կու տայ ինձ ուղղորդ
Ամուր քաղքին ճիշդ ճամբան.
Ո՞վ ինձ լինի առաջնորդ,
Մըտնալ յԵդոմ յաղթական.

Եթէ ոչ դու, Տէր Աստուած
Որ մերժեցիր զմեզ երբեմն,
Եւ օգնութիւն մեր զօրաց
Չըտուիր մեզ պէտք ատեն:

Այլ այժմիկ Տէր, հասիր դուն,
Նեղը ինկած եմք սաստիկ,
Եւ մարդկանցմէ օգնութիւն
Յուսալու տեղ մի չունիմք:

Միայն Քեզմով մեք կ'ելնամք
Պատերազմէս յաղթական.
Տուր թըշնամին հակառակ
Լինել ոտից մեր կոխան:

Կ

Լըսէ, Աստուած, աղօթքիս .
Յիս դարձիր, Տէր, ողորմէ .
Սիրտըս կոտրած է, հոգիս
Յերկրէ յերկինս կը գոչէ :

Դուն կարող ես զիս պահել
Իբրև ի քերդ անառիկ,
Եւ աշտարակ ինձ լինել
Որ՝ կը նեղեն թըշնամիք :

Տուր բընակիլ յաւիտեան
Քու տանըդ մէջ ապահով,
Եւ ծածկէ զիս սըրբազան
Քոյին թևոցըդ շուքով :

Այլ դու իմ ձայնս լըսեցիր,
Եւ անունէդ երկիւղած
Ծառայիցդ հետ՝ ինձ տուիր
Ժառանգութիւն, ստացուած :

Աւելցուցիր շատ օրեր
Թագաւորին օրերուն .
Նոյն և երկար տարիներ
Որդւոց որդին թոռներուն :

Արքայի գահն հաստատուն
Դու պահէ, Տէր, յաւիտեան,
Ճըշմարտութիւնդ, գըթութիւն
Լինին նըմա պահապան :

Իսկ ես կ'երգեմ անդադրում
Քեզ երգ, սաղմոս հոգևոր,
Եւ իմ ուխտերս և խոստում
Կը վըճարեմ օրէ օր:

Կ Ա

Լուռ համբերէ, ու Աստուծոյ սուրբ կամաց
Հըպատակէ, գիտցիր անձն իմ անկասկած՝
Որ Աստուծմէ զատ չըկայ մէկը հասնող
Քու նեղ օրիդ. և վըշտերուդ դարմանող:

Այո՛, դու Տէր, Իսրայելին ապաւէն,
Որո՞նն երթամ և ո՞ւմ արդեօք ես դիմեմ:
Եթէ դու ինձ օգնես, պաշտպան Տէր կենաս
Եւ ոչ մի մարդ կարնայ անել ինձ վընաս:

Այս մինչև ե՞րբ, դուք մէկուն դէմ կը կըռուիք
Միաբանած, ո՞վ անօրէն՝ չար մարդիկ:
Կը կարծէք որ՝ զիս ինչպէս պատ ծըռած, թեք,
Կամ ինչպէս ցանկ խարխուլ, յերկիր կործանէք:

Գահէս զիս վայր կործանելու ամէն ջանք
Բանեցուցիք, և սուտ միջոցք և հընարք.
Դըրսէն օրհնենք ինձ կու տայիք կեղծ կերպով,
Այլ չարաչար զիս կ'ատէիք դուք սըրտով:

* * *

Սակայն անձն իմ, յոյսդ առ Աստուած, համբերէ.
Զի նա ըզքեզ ամէն չարէ կը փըրկէ,

Ու չիթողուր որ՝ սասանիս ինկնաս ցած,
Կու տայ քեզ ոյժ և օգնութիւն՝ անկասկած:

Դուք ժողովուրդք, յոյսերդ դըրէք առ Աստուած,
Գացէք սըրտերդ խոնարհելով իւր դիմաց.
Նա կը լինի ձեզ ապահով ապաւէն,
Ու չիթողուր որ՝ հասնին ձեզ չարիք, զէն:

* * *

Աղամորդւոց վարքն և գործքն են ընդունայն,
Կըշիւքի մէջ կ'անիրաւեն, կը գողնան,
Եւ ի զո՛ւր տեղ կը խաբխըբեն մէկն զմէկ.
Արդարութեամբ գործ չեն տեսնել ոչ երբէք:

Դուք մի՛ յուսայք շահուիլ ճամբով անիրաւ,
Մերձաւորինն՝ յափըշտակել մի՛ բընաւ.
Թէ՛ ճոխութիւն վազէ ձեզ մօտ իբր առու
Չըթողուք ձեր սիրտն այնոր հետ կապուելու:

* * *

Այս երկու բանըս ասած է ինքն Աստուած,
Թէ՛ նա Տէր է ամենազօր և գըթած,
՚Ի ամէն մարդկանց, իրենց գործոց համեմատ
Կամ պատուհաս և կամ կու տայ պատիւ բաղդ:



Կ Բ

Ո՛վ Աստուած իմ, դէպ ի քեզ՝
Կանուխ կանուխ առտըլանց
Մարուած հոգևով դիմեմ ես,
Մարմինս հիւծած և մաշած :

Յանապատիս անջըրդի
Ուր որ չըկայ ճանապարհ,
Մոլորական մընացի,
Անօգնական և անճար :

Ա՛հ, ե՛րբ պիտի արժանի
Լինիմ՝ տեսնել Քու մեծ փառք
Եւ զօրութիւն, առաջի
Քու Սըրբութեանց առած կանգ :

Ողորմութիւնդ՝ լաւ է ինձ,
Քան թէ կենացըս օրեր.
Եւ իմ սըրտիս փափագն, իղձ
Է՛ գովել զՔեզ զօր գիշեր :

Այո՛, իմ կեանքս բովանդակ
Կը նուիրեմ սրբութեանդ,
Ձեռքս վեր կ'առնում համարձակ
Տալով միշտ փառք սուրբ անուանդ :

Եթէ ուտեմ, յագենամ
Համեղ պարարտ կերակրով,
Կ'երգեմ քեզ երգ ցըծութեան
Ուրախ զուարթ շրթներով :

Եթէ յիշեմ յանկողնիս
Ըգբեզ Աստուած իմ և Տէր,
Մինչև ի լոյս, միտքս հոգիս,
Քեզ հետ լինին, ողջ գիշերն:

Զի եղար ինձ օգնական,
Եւ քու թևոց շուքին տակ
Ապաստանած կը ցընծամ,
Հեռուն թողլով վիշտ վըտանգ:

Անբաժան հետդ է հոգիս,
Աջդ վըրաս իբր վահան:
Զո՛ւր թըշնամիք փընտռեն զիս
Զըգել ի գուբ կորըստեան.

Նորա ինքեանք թաւալգլոր
Սըրով կ'ինկնան, յեղակարծ,
Կեր լինելու երկրիս խոր
Աղուեսուց այլ գազանաց:

Ի Քեզ յուսայ թագաւոր.
Նորա անուամբ երդունցողք
Թող որ ցընծան: Եւ տուր որ
Փակուին բերանք չարախօսք:

Կ Գ

Կողկողագին աղօթքիս
Կ'աղաչեմ, Տէր, ձայն լըսէ.
Փըրկէ, պահէ իմ հոգիս
Զար թըշնամեացըս ահէ:

Կը վախնամ, Տէր, ծածկէ զիս
Չարաժողով մարդկանց դէմ.
Չըլինի թէ իմ հոգիս
Որոգայթի մէջ ձըգեն:

Ինչպէս մի թուր սուր ծայրով,
Իրենց լեզուն սըրեցին,
Եւ թունաւոր նետերով
Լայն աղեղնին լարեցին:

Ծածկուեցան մի անկիւն
Որ՝ մարդ բընաւ չը տեսնայ
Խոցելու սիրտ արդարոյն.
Յանկարծակի անվըկայ:

Չարութեան մէջ կամակոր
Թագուցին գաղտ որոգայթ,
Եւ իրենց մէջ ասին որ՝
« Զայն չի տեսնար ոչ մի մարդ »:

Անարդար գործ կը փընտուեն.
— Խուզարկութիւնք նորանոր. —
Մարդուս ներքինն կ'որոնեն,
Մինչև նորա սըրտին խոր:

Այո տէս, յանկարծ Տէրն վերէն
Կ'արձակէ իւր սուր նետեր.
Նոցա լեզուն անօրէն
Իրենց լինի մահաբեր:

Ամենայն մարդ նոցամէ
Հեռու հեռու կը քաշուի.

Եւ ամէն կողմ կը տիրէ
Վախ և սարսափ ահռելի:

Ձի ամէն մարդ կը տեսնայ
Մատն Աստուծոյ գործոյս մէջ.
Որ կը պատժէ անխընայ
Չարագործները անզեղջ:

Արդարն ուրախ կը լինի
Ձի յուսացել էր ի Տէր.
Կ'արժանանան գովեստի
Որոց ուղիղ են սըրտեր:

Կ Դ

Քեզ կը վայլէ օրհնութիւն
Սիրովնի մէջ, Տէր Աստուած,
Յերուսաղէմ՝ կատարումն
Կ'առնուն ուխտերն՝ Քեզ սըրտանց:

Ամէն կողմէ ի Սալէմ
Ուխտաւորաց բազմութիւն
Ջերմ հաւատով կը դիմեն.
Տո՛ւր Տէր, մեղաց քաւութիւն:

Իմ մեղքերս եւս, բեռան պէս,
Ծանրացած են ուսերուս.
Եթէ դու Տէր չըքաւես,
Կը կորսուիմ ես անյոյս:

Երնէ՛կ այնոնց, զորքս դուն
Ընտրեցիր և մօտդ առիր.

Եւ գաւթիդ մէջ իրենց տուն՝
Բընակելու տեղ տուիր:

Տո՛ւր եւրս մեզ յագենալ
Բարութեամբք լի քոյին տան.
Ձի այն շքեղ՝ սըրբափայլ
Ըսքանչեւեաց է կայան:

Լըսէ, Աստուած, մեր փըրկիչ,
Յոյսն աշխարհիս բովանդակ:
Հեռու ծովուն բընակիչ,
Եւ նոցա յոյսն դու միակ:

Որ մեծամեծ լերանց հիմն
Երկրիս խորերը դըրիր,
Որոց հասակն ահագին
Հասնին յերկինս ամպածիր:

Անծայր, դու, ծովն ալէխոր
Կու տատանես վերիվայր.
Նորա շառաչն ահաւոր
Կու ցածցընես կամակար:

Եւ երբ ազգեր զանազան
Ի կռիւ կ'ելնան ապըստամբ,
Քոյ բարկութեան մի նըշան
Կ'անէ զիրենք զինաթափ:

Այլ հաշտ նայուածքդ ի խոնարհ
Բոլոր երկրիս կու տան կեանք.
Կանանչագեղ ի դալար
Ձարդարին դաշտք անապատք.

Աստուծոյ գետն յաղթաշուր
Խոխոշալով կը վազէ.

Ակօսներուն ընդհանուր,
Անձրեւ յերկնից կը ցօղէ:

Ցորենն առատ կը բուսնի.
Ա՛յլ արմըտեաց կոյտն և շեղջ,
Կը պըսակեն լիուլի,
Աշխատալից տարւոյն վերջ:

Դաշտք խուրձերով դէզ առ դէզ,
Անապատներն խոտաշատ.
Գեղեցիկ են առ ի տես.
Տեսարան է յոյժ պարարտ:

Բըլուրք հագուած զարդարուն
Արօտական հօտերով
Ուր խոյք, մաքիք գէր, սիրուն
Կը տարածին արծելով:

Ցած հովտից մէջ, դեռ ցորեանն,
Մըղոտներով երերուն.
Քեզ, Տուողիդ, ի ծածան
Կու տան նոր երգ, օրհնութիւն:

Կ Ե

Երգ օրհնութեան բարձրաձայն
Հընչէ, Երկիր, առ Աստուած.
Գովեստ նորա սուրբ անուան
Տուր, և հըռչակ սուրբ փառաց:

Ասէք, « Գանի՛ ահեղ են
« Գու ամէն գործքդ և զօրեղ » .
Թըշնամիներդ վախերնէն
Մընացել են խիստ նեղ տեղ :

Բողոր Երկիրս Գու դիմաց
Կը խոնարհի գըլխակոր .
Սաղմոսք և երգք օրհնութեան
Կ'երգէ ի ձայն նորանոր :

Նա ծովն դարձոյց ի ցամաք,
Հեղեղուկ գետն՝ ի գետին .
Ուստի անցան մեր նախահարք
Անթաց ոտքով միւս դին :

Ուրախ եղիր Իսրայէլ,
Ձի Գու Աստուածդ կը տիրէ
Տիեզերաց անարգել .
Յաւիտենից՝ Տէր նա է :

Նորա աչերը հըսկող
Ազգաց վերայ կը դիտեն .
Ապըստամբներ չեն կարող
Գլուխ վեր առնուլ նորա դէմ :

Օրհնութիւնք Տեառն, ո՛վ ազգեր
Հըռչակեցէք ընդհանուր .
Ձի կենսատու նա է Տէր,
Մեզ սասանիլ չի թողուր :

Դու փորձեցիր զմեզ, Աստուած,
Ինչպէս բովին մէջ արծաթ .

Ծանրացաւ բեռն մեր թիկանց .
Պատեց ըզմեզ որոգայթ :

Գըլուխներուս վըրայէն
Մարդիկ անցան կոխելով :
Անցանք ջուրէն կըրակէն ,
Հանգիստ տուիր գըթալով :

Տուր ինձ ֆո՛ տունդ մըտնալով՝
Հատուցանել ուխտն սըրտիս ,
Զոր խոնտացայ ես բերնով
Տառապագին նեղ օրիս .

Խունկ անուշից պատարագ ,
Նուէր սիրոյ ողջակէզ ,
Գէր նոխագ , խոյ , գուարակ
Թող ճենճերին սիրակէզ :

Ո՛վ Աստուծմէ վախցողներ ,
Եկէք ինձ մօտ լըսեցէք ,
Ինչ որ արար ինձի Տէր
Պիտի պատմեմ այն ամէնք :

Բերնովս առ ինքն ձայնեցի ,
Բարձրացուցի զինքն լեզուով .
Թէ մեղք լինէր յիմ սըրտի ,
Նա չէր անսար գըթալով :

Այլ Նա լըսեց իմ ձայնիս ,
Աղաչանքներս գուր չելան :
Օրհնեալ փըրկողն իմ անձիս ,
Որոյ գութն է անսահման :

Կ Զ

Գըթա ի մեզ, Տէր Աստուած,
Օրհնէ ըզմեզ Երկնքէն,
Եւ լոյս պայծառ երեսացդ
Թող մեր խաւարն փարատեն:

Որպէս զի Քոյ ճանապարհն
Տեսնանք ճանչնանք, հետեւինք,
Եւ գընալով անմոլար
Փըրկըւին ազգք և ազինք:

Առ Քեզ լինին խոստովան
Ազգք, ժողովուրդք Տէր Աստուած,
Եւ Քեզ պատիւ և փառք տան,
Գըլուխ յերկիր խոնարհած:

Ուրախ և շէն թող ցընծան,
Զի կը դատես դու ուղղորդ,
Եւ ամենուն փըրկութեան,
Կը լինիս Տէր առաջնորդ:

Առ Քեզ լինին խոստովան
Ժողովըրդոց բազմութիւն,
Եւ գոհ սըրտով միաբան
Վերառաքեն օրհնութիւն:

Երկիրս պըտուղ կը բերէ
Կ'օրհնէ ըզմեզ ինքն Աստուած.
Պէտք է վախնան նորամէ
Երկրիս ամէն արարած:

Ձ Ե

Բարձրութենէդ ի խոնարհ
Ունկն դիր, Տէր, իմ ձայնիս .
Աղքատ տընանկ և տըկար
Մընացի ես եղկելիս

Պահէ՛, փըրկէ Բու ծառայդ,
Ձի յոյս. դրած է Բոյ վրայ .
Մի՛ թողներ որ տարապարտ
Վարանելով խեղճ մընայ :

Գիշեր ցորեկ անդադրում
Կ'աղաղակեմ դէպ ի Քեզ .
Տուր ծառայիդ խընդութիւն .
Ձի միակ տէրըս դու ես :

Դու քաղցրութեամբ ամենուն
Ուղիղ ճամբան ցոյց կու տաս .
Որք կը խնդրեն գըթութիւն,
Կը վայելեն անպակաս :

Լըսէ ուրեմըն ձայնիս,
Ալաչանքիս ականջ դիր .
Նեղ օր պատեց իմ չորս դիս,
Հաս օգնութիւն՝ մըտադիր :

Ձի Քեզի պէս, Տէր Աստուած,
Ձըկայ բընաւ ոչ ուրէք,
Եւ Բոյ բոլոր ստեղծած,
Հըրաշալիք են ամենք :

Ազգ և ազինք ամենայն,
Որք Բեզմով կան ու կ'ապրին -
Երկըրպագու՛ Բու անուան,
Փառաբանիչք պի՛ լինին:

Մեծ ես դու Տէր, և հըրաչք
Դու անպակաս կը գործես.
Անսահման են Բոյին փառք.
Զի դու միայն Աստուած ես:

Ճանապարհիդ անխոտոր
Տո՛ւր ինձ գընալ, սըրտագէտ,
Ուրախ լինի սիրտս բոլոր
Վախնալով Բու անունէդ:

Լինիմ առ Բեզ խոստովան,
Փառաւորեմ Բոյ անուն.
Փըրկեցիր զիս անխափան
Ի դըժոխոց ներքնագոյն:

Անօրէն չա՛ր մարդիկներ,
Որ ըզԲեզ Տէր, չը ճանչցան -
Նոյն՝ բազմաթիւ հըզօրներ,
Խըրոխտալով դէմս ելան:

Այլ դու իմ Տէրս ողորմած,
Եղար խեղճիս ապաւէն.
Ճըշմատութեամբդ, անկասկած
Պահեցիր զիս վըտանգէն:

Տո՛ւր ծառայիդ զօրութիւն,
Փըրկէ որդին աղախնոյդ.

Այս բարութիւնը անհուն .
Լինի նըշան մեծ սիրոյդ :

Ջայդ տեսնալով ատելիք ,
Թող ամաչեն սեւերես .
Ջի եղար ինձ զօրավիգ
Եւ մըխիթար նեղ ատենս :

Ճ Ա *

Աղօթքիս ձայն աղաղակ
Կ'աղաչեմ, Տէր իմ լըսէ .
Ջիս կը նեղեն վիշտք, վըտանգ .
Մի դարձըներ դէմքդ ինձմէ

Երբ հառաչեմ վըշտակիր
Նեղ օրերու մէջ ինկած ,
Խոնարհելով ականջ դի՛ր
Շուտ լըսէ ձայնս, Տէր Աստուած :

Իմին օրերս մուխի պէս .
Ըսպառեցան չիք դարձան ,
Ինչպէս խըռիւ՝ ոսկորներս
Խիստ բարակցան ու չորցան :

Իբրև հընձուած փունջ խոտի
Ցամքեցաւ սիրտս ի ծոցիս ,
Ես կիսամեռ — կենդանի
Մոռցայ ուտել և հացիկս :

* Հրատարակուած էր 1886ի Բազմավիպի մէջ, էջ 228. Ե՛ :

Կըպան ոսկորքըս կաշւոյս,
Անոր, միակ մընացի,
Իբրեւ տըխուր հաւալուս
Յանասլատին ամայի:

Ինչպէս մի բու տըխրանդէմ
Աւերակացը մէջէն,
Որպէս ճընճողուկ կը հեծեմ
Անքուն՝ տանեաց վըրայէն:

Նոր ի նորոյ, ամէն օր,
— Թըշնամի թէ ընտանի —
Նախատինքներ բիւրաւոր
Շատ մարդկանցմէ լըսեցի:

Հաց դառնութեան մոխրահամ
Եղաւ իմ ճաշ կերակուր,
Եւ արցունքներս խառնեցան
Իմ բաժակիս մէջն ի ջուր:

Դու, Տէր, երբեմն ինձ տըւիր
Բարձ և պատիւ ինքնակամ.
Հիմայ ի վայր ձըգեցիր
Զոհ՝ Քու արդար բարկութեան:

Անցան օրերս շուքի պէս,
Ես իբրև խոտ ցամքեցայ.
Եթէ դու, Տէր, մեզ չօգնես.
Մարդն ինչ է որ դիմանայ:

Դու, Տէր, մինչև յաւիտեան
Պիտի մընաս ազգէ յազգ.

Քո փառք չունի վերջ վախճան,
Յաւերժ է Քու յիշատակ:

Դարձիր, դարձ Տէր, ու գըթա՛
Սուրբ քաղաքիդ Սիովնի,
Հասած է ժամը որ նա
Քու գըթութեամբ նորոգուի:

Նորա քարերը, ծառայքդ
Համրած հաշուած, կը սիրեն.
Հողը նորա ու յատակ
Գըթած սըրտով սիրտ՝ կոխեն:

Հեթանոսները վախցան
Քու անունիդ մեծ ուժէն,
Եւ թագաւորք ամենայն
Կու սարսափին քու փառքէն:

Սիովնի բերդն ամրակուռ
Զարդարէ, Տէր. աւելի
Առաջուանէ ամրացուր.
Փառացդ վըկայ թող լինի: —

Հեզ խոնարհաց աղօթքներ
Յօժարութեամբ Տէր լըսեց,
Նոցա արցունք և լացեր
Զարհամարհեց, չըմերժեց:

Թող որ գըրուած այս մընայ
Գալու ազգաց գիտութիւն.
Ժողովուրդն այն ապագայ,
Պիտի տայ Տեառն օրհնութիւն:

Իւր սըրբազան աթոռէն
Վերէն ի վայր նայեցաւ,
Բարձրեալ Աստուած, երկընքէն
Բոլոր երկրիս աչք տըլաւ:

Լըսեց կապուած խեղճերու
Լացն ու ողբեր, հեծութիւն,
Եւ ազատեց ի մահու
Մահապարտաց բազմութիւն:

Որպէս զի զան ու պատմեն
Սիոնի մէջ իւր անուն,
Յերուսաղէմ հընչեցնեն
Նորա երգոց օրհնութիւն:

Ազգ ժողովուրդք միաբան
Թագաւորներ նոցա հետ՝
Մառայելու պիտի զան
Տեառն Աստուծոյ այժմ յաւէտ:

Դու որ տիրես ազգէ յազգ,
Տըկար եմ ես թէպէտ և,
Այլ կ'աղաչեմ՝ մի՛ արագ
Կըտրել ընդ մէջ զիմ արև:

Ըսկըզբանէ դուն դըրիր
Երկըրիս հիմն հաստատուն,
Ապա ձեռօք գըծեցիր
Երկնից կամար կապտագոյն:

Այլ այդ ամէն ըստեղծուած,
Պիտի օր մի չերևնան,

Սակայն դու, Տէր, Տէր փառաց.
Պիտի մընաս յաւիտեան:

Իբրև թէ ձորձ ըզգեստու՝
Պիտի մաշին հընանան.
Կամ թէ ինչպէս վերարկու
Պիտի փոխես ամէն բան:

Դու անփոփոխ անվախճան.
Նոյն և սերունդ ծառայիցդ
Պիտի լինին անխափան
Ժառանգ քո սուրբ քաղաքիդ:

Ճ Ժ Բ

Անմեղ մանկունք սիրասուն՝
Շըրթունքներովդ անարատ
Օրհնեցէք միշտ սուրբ անուն
Երկնաւոր Հօրն գըթառատ:

Թո՛ղ որ անունն Աստուծոյ
Բոլոր աշխարհ միշտ օրհնէ,
Խունկ օրհնութեանց, ի սիրոյ,
Հանապազորդ նըւիրէ:

Արևելքէ արևմուտք՝
Ամէն անկիւն աշխարհի
Կը հընչեն Տեառն օրհնութիւնք
Եւ գովութիւնք բերկրալի:

Բոլոր ազգաց կը տիրէ
Աստուած փառաց ի բարձանց.

Յերկինս նորա փառք մեծ է,
Փառաւորեալ հրեշտակաց:

Ո՞վ է ինչպէս մեր Աստուած
Որ՝ վեր յերկինս բընակի.
Տիեզերք ամէն իւր դիմաց
Բաց կեցած են և յայտնի:

Աղքատներուն գըթալով
Կը վերցընէ դէպ ի վեր.
Աղբիւսներէն հանելով
Մըխիթարեց շատ խեղճեր:

Արհամարեալ խեղճն՝ անզօր
Նա բազմեցուց իբր իշխան,
Ժողովըրդոց դատաւոր,
Իւր օրինացը պաշտպան:

Ամուլ մարիկն՝ անորդի
Սիրտը ուրախ Աստուծմով,
Իւր տանը մէջ բընակի,
Ինչպէս շէն մայր որդւոցմով:

Ճ Ի

Աչքըս ի վեր համբարձի
Դէպ ի լեռներն՝ ամպերուն.
Կը յուսայի որ անտի
Հասնի ինձ մի օգնութիւն:

Այլ օգնութիւն Տիրոջմէ
Պէտք է յուսանք մեք միակ:

Ձի ըստեղծող նա տէր է
Երկնի, երկրիս բովանդակ:

Եւ չի թողուր որ զուր տեղ
Մարդ. սասանի վար ինկնայ,
Այլ կը պահէ ամէն հեղ
Ո՛վ որ իրեն կը յուսայ:

Իսրայելի նա անքուն
Պահապանն է, զօր գիշեր
Որ՝ չըլինի թըշնամույն
Վնասեն նըմա դարաններ:

Ինքը Աստուած կը պահէ
Ըզրեզ անփորձ ապահով,
Եւ հովանի կու սըփռէ
Ամենակալ իւր աջով:

Այնպէս որ քեզ արեգակ
Ձի մնասեր ցերեկի
Եւ անվըտանգ միշտ լուսնակ
Կը լինի քեզ գիշերի:

Քուկին առջևդ կը հարթին
Ամենայն չար արգելք խուժք.
Ազատ արձակ կը լինին
Այսկէ վերջ քու ելդ ու մուտք:



Ճ Ի Թ*

Խորունկ և փոս անդունդէ,
Ուր մեղքերովս սահեցայ,
Սիրտըս առ քեզ կը գոչէ.
Լըսէ ձայնիս, Տէր, գըթա:

Տէս իմ վըշտերս չարակիր,
Տառապեցայ բաւական.
Կ'աղաչեմ քեզ, ապանջ դի՛ր
Աղօթքներուս զըղջական:

Իմ անօրէն գործերս վատ
Եթէ քըննես, Տէր Աստուած,
Քուկին դիմաց այն ո՞ր մարդ
Կարնայ կենալ չամաչած:

Ողորմութիւնդ յիշելով
Կը համբերեմ ցաւերու.
Քու խոստմունքիդ յուսալով
Կարնամ դեռ ևս կըրելու:

Առաւօտէ մինչ իրկուն
Իսրայէլ, Տէր, Քու վըրայ
Յոյսը դըրած հաստատուն
Ըսպասելով կը յուսայ:

Ողորմութեանց դու Տէր ես,
Եւ փըրկութիւնդ անարգել,
Ողորմելով կը փըրկես
Նեղութենէ զԻսրայէլ:

* Գտիր ի Բագմավիպի 1886 ամին էջ 229. Զ:

Ճ Լ Ջ

Բաբելացւոց գետին քով
Տըրտում նըստած կու լայինք
Երբոր Քոյին, սո՛ւրբ Սիոմն,
Վաղանցուկ փառքդ յիշէինք:

Մեր շախշըխած քընարներ,
Ուռեաց ճիւղէն կախուած վար,
Երբոր քամին կու փըչէր՝
Տատանէին հողմավար:

« Երգ երգեցէք », կ'ասէին
Մեր գերեվարք, « ինչո՛ւ լուռ
« Կը նըստիք դուք տըխրագին
« Քըթերդ կախած և տըխուր:

« Դուք ունէիք ձեր քաղաք
« Երուսաղէմն և Սիոմն,
« Նոցա երգերն ներդաշնակ
« Արդ երգեցէք դուք մեզ, օ՛ն »:

Իսկ մեր բերանն կը բացուի՞,
Օտար երկիր աքսորուած,
Ի՞նչպէս երգենք մեք պիտի
Սիովնի երգն օտարաց:

Եթէ մոռնամ քեզ երբէք
Երուսաղէմ սուրբ քաղաք,
Թո՛ղ զիս մոռնայ իմ աջ ձեռք,
Թո՛ղ որ բերանս մընայ փակ:

Լեզուս քրմքիս թող կըպչի
Թէ որ ըզքեզ նախ չերգեմ,
Ուրախութիւն իմ սըրտի
Օրհնեալ քաղաքըդ Սալեմ:

Մինչ դու պայծառ էիր՝ շէն,
Եղովմացիք ուզեցին
Որ՝ գքեզ հիմանց կործանեն:
Յիշէ, Տէր իմ, զրուցածնին:

« Կործանեցէք, քակեցէք
« Թող ջընջուի այդ քաղաք.
« Մինչև ի հիմն հասուցէք,
« Վերնայ դորա յիշատակ »:

Բաբելացոց՝ ուխտազանց
Եւ անըզգամ վատ աղջիկ,
Երնէ՛կ այնոր որ՝ կարաց
Հատուցանել քեզ չարիք:

Ճ Լ Է

Բոլոր սըրտովըս, Աստուած,
Կը լինիմ քեզ խոստովան.
Եւ առաջի հրեշտակաց
Կ'երգեմ սաղմոս ցընծութեան:

Դու իմ աղօթքս լըսեցիր
Ողորմութեամբըդ անչափ,
Պագնեմ առաջըդ երկիր
Ճըշմարտութիւն սուրբ անխաբ:

Քուկին անուանդ մեծութիւն
Սըփռուած է ամէն դին .
Տուիր ինձ ոյժ՝ զօրութիւն ,
Լըսելով իմ աղօթքին :

Թագաւորներ աշխարհի
Լըսելով Քու բերնի խօսքդ ,
Խոստովանին Քեզ պիտի ,
Եւ պի՛ գովեն ամէն գործքդ :

Մեծ են Քու փառք , դուն բարձր ես .
Քեզ չըկայ մեծ կամ փոքրիկ .
Եւ հաւասար կը տեսնես
Թէ՛ հեռուէն թէ մօտիկ :

Թէ նեղութեանց մէջ ինկած ,
Մընամ տըխուր և տըրտում ,
Կը փըրկես զիս անկասկած
Բարկութենէն թըշնամուոյն :

Ձեռքըդ առ իս ձըգեցիր .
Աջըդ հասաւ օգնութիւն .
Իմ իրաւանց մըտադիր՝
Տուիր արդար հատուցում :

Ողորմութիւնդ չափ չունի .
Քու ձեռքիդ են ըստեղծուած .
Տես մեր վիճակն եղկելի .
Մի՛ անտեսեր զմեզ , Աստուած : . . .

Ճ Խ Բ *

Լըսէ, Տէր, իմ աղօթքիս .
Թէպէտ լինիմ մեղաւոր .
Ականջ դի՛ր իմ խընդիւրքիս ,
Ճշմարտութեանց թագաւոր :

Արդար գըթով ինձ լըսէ՛
Զիս դատելու մի՛ ելնար .
Զի ո՞վ է մարդ՝ որ ելնէ
Դատաստանէդ սուրբ , արդար :

Հալածեց զիս թըշնամին ,
Ոտքերուն տակ զիս առաւ .
Ինչպէս թողուած մեռել հին՝
Կոխեց վըրաս ու անցաւ :

Ես հոգիէս ձանձրացայ ,
— Այս ի՛նչ օրեր , տէր Աստուած , —
Սիրտս ի ծոցիս կը դողայ
Տակն ու վըրայ խըռոված :

Անցած օրերս յիշեցի ,
Գըթուլթիւնքըդ միտքս եկան ,
Արարածներդ դիտեցի .
Փանք տըլողիդ . գոհանամ :

* Տպուած էր 1886ի Բագմաւիայի մէջ : Գաւիւր էջ 229 .
Է յարասութիւնը :

Ինչպէս ծարուած չոր գետին
Կը թալկանայ իմ հոգիս :
Շուտ լըսէ ինձ, Աստուած իմ.
Անցուր ծարաւը սըրտիս :

Մի՛ կ'աղաչեմ դարձընել
Ինձմէ երեսդ գըթութեան .
Թէ չէ՛ իբրև մի մեռել,
Ի գուր թաղուած կը մընամ :

Ողորմութիւնդ իմ վըրայ,
Ինչպէս առտու արեգակ,
Տուր որ պայծառ երեւայ .
Ձի յոյս իմ ես դու միակ :

Յըցուր ինձի մի ճամբայ
Որով երթամ ես շիտակ .
Իմ յոյսս ու աչք քու վըրայ
Են, Տէր, ամէն ժամանակ :

Ազատէ զիս, Տէր, փըրկէ
Իմ թըշնամեացըս ձեռքէն .
Նեղ օրերուս ինձ օգնէ .
Ձի դու ես իմ ապաւէն :

Սովորեցուր, Տէր, ինձի
Քո սուրբ կամօքդ կատարել .
Եւ մի՛ թողուր ինձ իսկի
Քեզմէ մեկնիլ՝ բաժնուել .

Քոյին Հոգիդ սուրբ բարի .
Դէպ ի յերկնից կայարան,

Թող առաջնորդ ինձ լինի
Հասանելու անխափան :

Քու անունիդ համար, Տէր,
Պահէ, փրկէ զիս չարէ .
Զիս պատեցին նեղ օրեր
Արդարութեամբդ ազատէ :

Տէր իմ, կորցուր ու ջրնջէ
Թըշնամիներս անօրէն,
Աշխարհք բոլոր թող հընչէ
Թէ ես քուկին ծառայդ եմ :

Օրհնուչիւն Մովսիսի և որդւոցն
Իսրայելի ¹

Օրհնեմք ձայնիւ ցընծութեան
Իսրայելի Տէր Աստուած,
Փառաւորեալն յաւիտեան
Զի ինքն է Տէր զօրութեանց :

Զիանք իրենց հեծելով,
Փարաւոնի զօրութիւն՝
Ամաց թափեց կարմիր ծով,
Հասնելով մեզ յօգնութիւն :

Սա է փրկիչ իմ և Տէր,
Աստուած իմոցըս նախնեաց .
Երգ օրհնութեանց դէպ ի վեր
Բարձրացընեմ Քեզ սըրտանց :

1. Տե՛ս Գիրք Ելից գլուխ ԺԵ 1-19 :

Ահեղ կըռիւ բորբոքած
Զիրեար կ'ուտեն թըշնամիք .
Նորա մի ծուռ հայեցուած
Դարձոյց զամենքն ալ ի չիք :

Ըսպառագէն հեծեալներ
Ընտիր, կառքեր ձիերով,
Փարաւոնի քաջ զօրքեր
Տարաւ խեղդեց ի խոր ծով :

Անդունդք ծովուն խորախոր
Փարաւոնի քաջ բանակ
Կըլլեց ախիւը բոլոր,
Կորան իբր քար ծովուն տակ :

Փառաւորեալ աջ Քոյ Տէր,
Չիք զօրութեանը սահման .
Քոյին աջովդ անվեհեր
Թըշնամիներ շարդեցան :

Քու մեծութեանը փառքէն
Հակառակորդք փըճացան,
Ինչպէս եղէզն հըրոյ դէմ,
Բարկութենէդ այրեցան :

Ամենազօր Քու հոգևով
Ծովուն ջրեր պատռեցան .
Ալիք վեր վեր ելնալով
Քարէ պարիսպ ձևացան :

Զայս տեսնալով թըշնամին
Խելքը կորոյս ասելով,

« Օ՛ն ետևէն շուտ հասնիմ
« Ու ճոխանամ աւարով :

« Սուրիս ճարակ թող լինի .
« Իսրայելի վատ բանակ ,
« Դարձեալ տիրեմ այդ ազգին
« Գերի վարեմ ձեռքիս տակ » :

Հով փրչեցիր սաստկաբար ,
Մըռընչեց ծովն ալէխոր .
Եգիպտացիք իբր կապար
Սատակեցան անդ բոլոր :

Ո՛վ նըման է քեզ , Աստուած ,
Փառաւորեալդ սուրբերով ,
Դու միակ տէր տարերաց ,
Քեզ հընազանդ , երկինք ծով :

Քեզի համար շատ դիւրին
Բան է՝ գործել մեծ հըրաշք .
Ձրգեցիր ձեռք ի ծովին ,
Եկաւ ծածկեց իւր յատակ :

Դու խընամօտ իբրև հայր
Եղեր ազգիս առաջնորդ ,
Եւ ցըցուցիր ճանապարհ
Յանապատին մեզ ուղղորդ :

Ձըթողուցիր , ապերախտ
Մեր նախահարքը , անտես
Ի յանջըրդին յանապատ ,
Այլ գըգուեցիր մի հօր պէս :

Լըսեցին ազգք շըրջակայ .
Փըղըշտացիք սարսեցին ,
Դատաւորներ Եդովմայ
Շըւարեցան մընացին :

Իշխանք ազգին Մովաբու
Դողով սկսան մահագոյժ ,
Իսկ բընակչաց Քանանու
Սիրտն հալեցաւ , կորաւ ոյժ :

Թող սարսափին , թող վախնան ,
Մեծ է քու ահդ Տէր Աստուած .
Նոքա՛ փայտ քար թող դառնան ,
Չելնան աչքիդ Քոյ դիմաց

Թող ժողովուրդդ՝ անցնի
Երթայ իրեն ճանապարհ .
Ձի սեփական ազգ քեզի
Մեր ժողովուրդն ըստացար :

Տար դուն տընկէ ըզնոսա
Սիոն լերին գագաթան .
Ժառանգութիւն է Քոյ սա
Ի սկզբանէ յաւիտեան :

Գընաց մըտաւ Փարաւոն
Ընտիր զօրքով կարմիր ծով ,
Եւ թաղուեցաւ մընաց հօն
Ըսպառագէն քաջերով :

Մինչ Իսրայէլ չոր ոտքով
Ելաւ ցամաք ի ծովէն ,
Փարաւօն իր բանակով
Խըղդուեցան անդ ամէնն :

Օրսնուշրիւն Մովսէս Մարգարէի

Բորբուքած է, ինչպէս հողը,
Այդ ազգին դէմ իմ զայրոյթ.
Պիտի այրէ ընդհանուր,
Մինչ դըժոխքին խոր անդունդ:

Նոցա երկիրն՝ բոյսերով
Պիտի վառի տոչորի.
Լեռներն իրենց խոր հիմով՝
Պիտի դառնան կոյտ մոխրի:

Ամէն տեսակ աղէտներ
Նոցա գըլխուն պիտ' թափեմ,
Եւ սայրասուր իմ նետեր
Պիտի նոցա ճետն ջրնջեն:

Մաշուած սովէ և հիւծած,
Պիտի ինկնան մահացած,
Լինելու կեր գազանաց,
Երկնից թըռչնոց գիշախանձ:

Ինչպէս լարուած աղեղներ՝
Պիտի դըրկեմ նոցա դէմ՝
Երկարասող գարշ իժեր
Որ՝ նոցա դին քաշքըշեն:

Թըշնամույ սուրը դըրսէն
Զիրենք ջարդէ, կոտորէ.

Տըներուն մէջը՝ ներսէն
Ահ և սարսափ թող տիրէ :

Երիտասարդք և կուսանք
Պիտի երթան ոտքի տակ,
Նոյն կաթնասուն փոքր տըղայք,
Եւ ծերն մօրուօք ըսպիտակ :

Անդաստական թող շըրջին
Յօտար երկիր անտէրունջ,
Յիշատակնին, անանուն
Գետին անցնին, երթան յունջ :

Այլ կասկածիմ, մի գուցէ
Դոցա յիմար թըշնամիք
Ելնան պարծին, գրուցեն թէ՛
« Այդ ազգը մեք շընջեցինք » :

Այլ իսրայէլ բըթամիտ,
Չուզէր խորհիլ՝ մըտածել
Թէ՛ իրեն բարքն խըստասիրտ
Գըլխուն ինչե՛ր է բերել :

Ամօթապարտ լինին թող
Որ՝ լաւ հասնի խելքերնին .
Ես եմ գիրենք չարչարողն,
Եւ ոչ դըրսէն թըշնամին :

Մինը միթէ հազարին
Կարելի՞ է դընէ դէմ,
Եւ բիւրաւոր թըշնամին
Երկուք ի՞նչպէս հալածեն :

Եթէ Աստուած չի թողուր
Թըշնամուոյն ձեռքը մեր ազգ,
Նոցա հընարք լինէր զուր,
Չէինք հասնիլ յայս վիճակ:

Ո՛ւր մեր Աստուածն և ո՛ւր դիք...
Մեր թըշնամիքը խելքով,
Թէ խորհէին սակաւիկ
Կ'իմանային ապահով:

Ձի նոցա որթն Սողոմայ
Այգիներուն է նըման.
Տունկերն կարծես Գոմորայ
Երկրէն եկած են բընաւն:

Նոցա խաղողն դառնահամ
Եւ ողկոյզներն են լեղի,
Գինին նոցա է նըման
Թոյնի օձի և իժի:

Աստուած ամէն բան տեղով
Գիտէ ծածուկն ու յայտնին,
Վըրէժ կ'առնու նա շուտով,
Երբոր նոցա ոտք սահին:

Կորըստեան ժամը արդէն
Հեռու չէ այլ մօտեցած.
Պիտի պատիժը կըրեն,
Ի հատուցումն փոխադարձ:

Եւ գըթալով, Տէր, յայնժամ
Ազգիս ցաւոցը վերայ,

Որ տառապեալ գերութեան
Սիրտը կոտրած կը տըքայ,

Պիտի գրուցէ հեզնօրէն,
Դառնալով մեր թըշնամեաց .
« Ձեր աստուածները ո՞ր են,
« Որոց վերայ յոյս դըրած,

« Ջոհ և մատաղ ինքնակամ
« Նուիրէիք և գինիք,
« Ապա բազմած ի սեղան,
« Կ'ուտէիք ո՛ւ խըմէիք :

« Արդ թո՛ղ ելնան իմ առջև,
« Եթէ ուժով կարող ե՞ն,
« Թող ձեզ լինին թիկուք թև
« Որ՝ ազատեն իմ ձեռքէն » :

* * *

« Տէս իսրայէլ, լեր ըզգաստ,
« Ես եմ Աստուած, ես միակ,
« Ձրկայ այլ Տէր ինձմէ զատ,
« Տիեզերաց բովանդակ :

« Ձեռքըս յերկինք վերցուցի,
« Աջիս վերայ երդունցայ,
— « Կենդանի եմ ես, ասի,
« Աջըս ահա ձեզ վըկայ :

« Իբրև փայլակ սուրս սըրած,
« Վըրէժ պիտի պահանջեմ,

« Վատ անըզգամ թըշնամեաց
« Որոնք խեղճերն խըւել են :

« Նետերս պիտի արբենան
« Վիրաւորաց արիւնով,
« Գերի, ազատ թէ՛ իշխան,
« Պիտի ջարդեմ ես սըրով » : —

Ուրախ եղիք արդարներ,
Յերկնից հրեշտակք թող բերկրին,
Վըրէժխընդիր եղաւ Տէր,
Տառապանաց իւր ազգին :

Հալածական ցըրուեցան
Մեր աշխարհէն թըշնամիք .
Քաղաքք և դաշտք սըրբեցան,
Զի խնայեցին մեզ Նրկինք :



30

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0023065

A II
5493

Տեղ
օրինակ